Գո՛րգուռ, մա՛ զես,
Հիւրընկալեղ
Զես թէ կամիս։

ԳՐԳՈՒՌ

Երթ՛ 'ի Մասիս,
Ի վեր քան զես,
Ընդ՝ ուր պաղուկ
Հընչէ հիւսիս։

ՏԱՊԱՆ

Մասի՛ս Մասիս,
Ա՛ռ ընկեց զես,
Զես որ յոլորտ
Վարիմ յալես։

ՄԱՍԻՍ

Ո՞յր այդ օտար
Ձայն՝ յիմ կատար։
Ո՞վ եղ կամ էջ
Յահեղս 'ի վայր։

ՏԱԳԱՆ

Ե՛ս եմ Նոյեան
Ջրաղերձ կայան,
Մարդկան ազգի
Նոր Որորան։

ՄԱՍԻՍ

Յա՛րկդ աննեցուկ,
Զրո՛յց տուր ըստոյգ.
Յանկուխն 'ի ջուրց
Գըրծեան ո՞վք ո՞վք։

ՏԱԳԱՆ

Նոյ, Նոյեմզար [1],
Զարմիւ արդար,
Յիս գլնն 'ի մի
Գոռլն բարբառ։

ՄԱՍԻՍ

Բարի եկիր,
Ո՛ շընչակիր
Լաստդ ապրացու,
Ե՛կ յիս հանգիր։

ՏԱԳԱՆ

Բիւր երանի
Քեզ, լեառն յայտնի,
Զի քոյն՝ ինեւ՝
Վայր սուրբ օրհնի։

[1] Անուան հնոյն Նոյէ։

# Ն

# ՀԱՅԿ

Հա՛յկ,
Հայկազանց փա՛ռք, Թա՛գ,
Թագաշուք
Փառաց պերճ ժառանգ։
Ինձ հրճուիլ
Տա՛ն միշտ 'ի հոգի
Քո անուն,
Քո վեհ յիշատակ։

Ա՛յր,
Այր արանց, գերայր,
Գերերան
Իմ Հայր, նախահայր։
Բարձր 'ի գլուխ
Քեւ հանդիսանամ.
Ի քո փառս
Պանծամ յաւէն վայր։

Ե՛ւ,
Եյցեն հարկանել
Քո որդիք՝
Քուշայ զորդին զԲէլ։
Տեսցեն ազգք՝
Զիա՛րդ Հայն զօրէ
Զոյժ մատին
Ցիւր զէն ցուցանել։

Ե՞ր
Երկիր մեր ասեր,
Շէնք, քաղաքք
Ճիմն 'ի վեր անտէր։
Խաչատեաց
Ազգն ընդ լուծով
Մինչեւ յե՞րբ
Ճնշիմք փշտըմբեր։

Ո՞ւր,
Ո՞ւր կորեան 'ի զուր
Նորա գանձք,
Փառք հայրենատուր։
Հայաստան
Հեծէ անմռունչ·
Ո՛ւր շրջիմք
Աստ անդ թափթափուր։

Ո՞ւր,
Ո՞ւր քո բարք համբոյր,
Գովք զուարթ,
Գեղք քաջազանդուր։
Զարթիր շայտ . . .
Ե՞րբ զիս զարթուսցեն
Քաջալերք
Քային բերկրալուր։

# Զ

## ՁԱՅՆ ՇԱՄԻՐԱՄԱՅ

### Ի ՎԵՐԱՅ ԱՐԱՅԻ ԱՆԿԵԼՈՅ Ի ՄԱՐՏԻ

Հրաշալին այն Արայն,
Արայն այն . . . ո՜ւր Այրն այն։
ԶԱրայն արդ երկիր
Ծըծէ ըղձելթս արեան։

Սիրոյ սուր Սիրայնոյս
Շեշտ ցիմ անց 'ի ներքոյս։
Դժիւթք, ցՍփոյն 'ի խորոյ,
Ըզատ հանէք 'ի լոյս։

Սա զեւր ըզլուսանիշ
Ունի զակն 'ի յիս՝ պէշ·
Այլ ո՞ գիտէ՝ ոգին
Յո՞ր օթէ կայս՝ որէշ։

Ա՛հ, զաւուրց՝ սա ինեւ
Զանոյշ չետես զարեւ·
Ո՜չ թէ այժմ ըզսա Դիք
Տային ինձ 'ի պարգեւ։

Խնէ 'ի ճար չէն ըրժիժք,
Ուժէ խակ ո՛չ ըրժիշկ
Բուժել հաստոյր ըզվէրան
Յանոյշ հիւթ կենսաւիշկ . . . ։

Ո՞ւր է, Արայդ քընքուշ,
Ո՞ւր այդ նըռնենանդ թուշ . . .
Գամ մի ըզդէզ տեսեալ,
Ճարայ համայն յապուշ։

# Է

## ՔԱՋԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՀ

## ԶԱՐՄԱՅՐԱՅ

Խաղմ արեկ յերկիր
Գոռայ զգահակիր
Զոստանն ըղՏրոփայ
Գրնել 'ի մախիր։

Ահեղն անդ 'ի գոռ,
Գիւցն 'ի տիպ Հեկտոր,
Գունդ առ գունդ կազմէ
Ճակատ բիւրազօր։

Զօրահաւառ զօրուն
Զէնք 'ի զարդ փաղփուն՝
Յաշախիլ 'ի ցոլ
Ահեղ փառ առնուն։

Պաշարի Տրովա,
Այր զընկեր կարդայ·
Սեգ Ցոյնն 'ի բացի
Զիւր դրօշ ամբառնայ։

Եւ յայս կոյս Պարիս
Ընդ իւր համախս,
Յայն կոյս Ոդիւսէս
Կարգադիր մարտիս։

Ա՛ս կայր իմ Զարմայր,
Վեհ Դիւցազարմ Այր·
Ընդ Աքիլլ 'ի ռազմ
Բո՛ց շընչէր, գոռա՛յր։

Սա շա՛նթ այր յարշաւ,
Նա յարեան թաթաւ·
Քա՜ջ քաջի հանդէպ
Հրոսէր դիմագրաւ։

Զէն առ զէն 'ի շարժ,
Զինաշարժն անշարժ,
Ճե՛շտ հար՝ շե՛շտ հարաւ
Կաշմբուռն Այր վարժ։

Երգեմ քաջայո՛ս
Ըզմահ Քաջազնոյս՝
Նըմին համանուան
Յաւէտ 'ի խրախոյս։

# Ը

## ՈՂՈՔ

### ՍԱԹԻՆԿԱՆ ԱՌ ԱՐՏԱՇԷՍ

ՍԱԹԻՆԻԿ

Վէհդ տանս՛, Պիւզանդն
Արքայդ Արտաշէս (կեցցէ՛)։
ՅԱլանաց քաջաց՝ քաջ
Զվրէժ հաներ քինու,
Ով դու, հուժկու, յաղթու,
Սուր սուսեր հատու։
Արտաշէս,
Եւ 'ի տես

ԱՐՏԱՇԷՍ

Զի՞նչ այդ ձայն, սիրուն
Կոյս Թագադանդուր (· · ·)։
Ես ահա՛ · · · կոչես զո՞,
Արժանի՛դ սիրոյ,
Եզրս լուռ ծանո
Զոգեղ բերանոյ
Յայտնաբար
Եզբարբառ։

ՍԱԹԻՆԻԿ

Բազուկ քո հար վանեաց
Եզմեղ՝ ած ցայս վայր (· · ·)։
Այլ քաջաց օրէն չէ,
Վա՛ւ, արինամէժ

Մահու քինալ միմեանց
Յաւէժ առ 'ի վրէժ։
ԸզՍաթէն
Տո՛ւր արդէն։

ԱՐՏԱՇԷՍ

Պատժել զայր վրդովանաւ՝
Է՛ հրաման 'ի Դից։
Ուր յօտարին սահմանս
Յար յաւէր խաղան՝
Արժան մնան ցասման
Միայն բարկութեան . . . ։
Ինձ ծանի
Զանուն քո։

ՍԱԹԻՆԻԿ

Սաթինիկ, այս անուն՝
Այս է իմ, իմն.
Այլ ո՛վ, որիարդ իմ՝
Դու ինձ՝ գեղաչեայ,
Հայա, Արքայ, փութա՛
Ընաւ հաւանեա՛,
Թագաւո՛ր
Քաջազոր։

ԱՐՏԱՇԷՍ

Սա՛թինիկ, 'ի քո շնորհս
Տամ ես ըզՍաթէն.
Զի քայդ անայշ զորայց
Զիմ հանգոյց՝ գեղջոյց
Ընդոյց զայրուց, և լոյց
Յիս խանդ՝ նոր զարթոյց։
Կոյս հեզիկ
Սաթինիկ։

# Թ.

# ՑՈՒՑ

## Ի ԳԱԼՈՒՍՏ ՍԱԹԻՆԿԱՆ Ի ՀԱՅՍ

Հո՛ր,
Արարատ, բղխընար
Յերգ 'ի նուագ բերկրարար։

Գո՛ւք,
Զուգածեմ Հարսնածուք,
Յայս հանդէս հարէք շուք·

Գո՛յ
Ի գրանէն Ալանայ
Փե՛ղ
Օրհնորդ հրաշատես։

Զե՛
Յամէն վայր քարոզե
Զո՛ւ
Հրճուերամ ձեր պարու։

Տո՛ւր
Կընդըրկաց զանոյշ բոյր
Յարքենին 'ի սամոյր։

Ա՛նց
Արտաշէս Թագապանձ
Ի նըժոյգ յասկեսանձ։

Ա՛ստ
Նոր կազմեա առագաստ`
Վէ՛հ
Փեսայիդ 'ի պատեհ։

Է՛ջ
Արի՛ անց կաց 'ի մէջ,
Տո՛ւր
Սաթինկան քում համբոյր։

# Ժ

## ՀԱՆԴԷՍ ՀԱՐՍԱՆԵԱՑ ԱՐՏԱՇԻՍԻ

Յօդապար
Ի նժոյգն 'ի սեաւ
Ընձնագեղն
Արտաշէս հեծաւ·
Սրրաթեւ
Արծուօրէն թռուեալ,
Շիոյ ընդ գետն
Ընդ սփր յարշաւ։

Ոսկէօղ
Շիկափոկ պարան
Արկ անդէն
Քաջաբազուկն այն
Ի փափուկ
Նուրբ մէջ աղջկան·
Ըղձա յիւր
Տարաւ 'ի վրան։

Տեղ ոսկի
Տեղայր՝ մինչ արին
Արտաշէս
Ընդ իւր գայր Հարսին,
Գնայր շքով·
Որեանն 'ի դռնին
Խուռն բղխեա
Յորդէր նոցին։

Մարգարիտ
Ի յառագաստին
Քարմուհւոյն
Տեղայր ծամային·
Ի վարդից
Վառ առնայր գետին
Ջինափայլ
Ներքոյ ոտին։

# ԺԸ

## ԿՈՂԿՈՂԱՆՔ

### ԱՌ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Քոյդ ո՞ր տեսիլ, Վարդան,
Վառեալ վարդի նըման,
ՅԱրտազն 'ի լայն,
Ուր Յազկերտին համայն
Վաշտք ասպազէնք հարան:

Վերնոցն 'ի տենչ բոլորք
Ձեւեալ քո պէս ո՞ք·
Արիւնոտ
Հայաստան քեւ նորոգ
Լոյս առ կրօնին փառօք:

Սիրտ զիմ գեղու յոյժ յոյժ
Ընդ փոյթ մահուան քո գոյժ:
Բանջդ քաջաշխոյժ,
Բո մինչ վէպք յիմ գան յուշ·
Թանամ՝ յարտօսր անձոյժ:

Յո՞ Սիւնին, յո՞ր յատակ
Տիրադրուժն էջ Վասակ·
Յոյր դըժընդակ
Փեւեկմանէն՝ արագ
Սուր Պարսկին առ ճարակ:

# ԺԲ

## ՎԱՍԱԿ Ի ԴԺՈԽՍ

Ցասուն անժոյժ արդ յիս շարժի,
Շարժէ և զիմ բղխեղու,
Ըզքեզ, Վասակ, ծընունդ իժի,
Քարամբք պարսել պարսաւու:

Իջեր, գիտեմ, անդընդամէջ
Տարտարոսին յանել գուր,
Ընդ զարժանին տալ ըզվրէժ
Կոծն 'ի կոչկոծ, 'ի կըռուփ:

Այդ է, Թըշուառ, քո պատժարան,
Պատժապարտիդ ճահճուր:
Քեզ ելք ուստեք չէք փախըստեան.
Կաց յաւիտեան այդանօր:

Վա՜հ, Սիւնեաց Տէր, ճողոպրիս ո՞ր
Յանդերձ վըհէդ Երիբեայ,
Ուր Պըղուտոն դըժնէզարհուր
Խօլից խըմբիւք բազմեալ կայ:

Ո՛ն, ծիգն յաւել 'ի ծիգն անդուլ
(Օ՛հ շատ քեզ կայ պատուհաս)
Յըստեքասհաս աւուաց լընուլ
ԸզԴանիդեայց ծակ կարաս:

Իբր Իքսիոն, աղէ, շըրջեա
Զանիւն 'ի գիլ բըռնոլոր:

Յանգոյն պապակ ընդ Տանտաղեայ
Պաղքեաջիր յումպ շըրթնածոր։

Արըծէ, կարծեմ, Դիդեայն Ուրուր
Զուրուագործիդ կարծըր կուրծ.
Եւ տան նայադք ՚ի ժահորայր
ՅԱխերոնին ըմպել ջուրց։

Յօգնութիւն զոք դու մի կարդար՝
Որ պինդ պըրկիս ՚ի կապանս.
Զի անդադար դարէ ՚ի դար
Կայ տըւայտիլ քեզ յայդ տանջ։

Մոլեգնելոյդ ամբարըշտի
Ես ՚ի պատիժ քիչ է այս.
Երդ խակ անցես գըլնդի գըլնդի
Ըզխաւարին պաշտօնեայս։

---

# ԺԳ

## Ի ՄԵԾԱՅԱՂԹՆ ՏՐԴԱՏԷՍ

Զո՞ր ինձ գըրուատ, հըսկայդ Տրդատ,
Բանահիւսել քեզ ՚ի ձօն,
Մինչ կայդ ՚ի փառս անհամեմատ՝
Երկնակրօնից զուգաձօն:

Թէ Յունաստան զեւրն Աքիլլէս
Գովերակցիցն ՚ի կարգ հան,
Ի՞ ըզքոյին ուժոյ հանդէս
Հրաշացուցէ Հայաստան:

Լեկիանեայ ո՞չ քեւ գերծաւ
Ընձն ՚ի գօթաց հարուածոյն.
Ո՞չ կըւ կիսին յաղթ կառարշու
Փառս ուժաւէ քեզ յաւերժուն:

Օ՛ խնու յաղթուրն ՚ի մենամարտ
Օ՛ի քա ընդդէմ եւ Հրաշէ.
Ի բուռն ընկճի նա ջլաջարդ
ՅԱրշակունւոյդ ՚ի քաջէ:

Զէ հռոմեան լեգուի ճառամ
Բանից պանծալ՝ քոյդ հըռչակ,
Եւ քաղաքաց գաղափն հռամ՝
Բռամ գաղաթան կայէ թագ:

# ԺԳ

## ՇԻՆԱՐԱՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

### ԵՒ

## ԱՒԵՐԻՉՔ ՆՈՐԻՆ

Յի՞նչ վիճակ կայաք, յի՞նչ վիճակ կամք արդ.
Ի բուն կայենից զրկեցաք զիա՞րդ։
Հի՞մ մեր շէնք, աւանք, քաղաքք բազմամարդ
Եղեն բովանդակ ամայի անդարդ։

Ո՞ւր է Արմաւիր, ո՞ւր Արշակաւան,
Ո՞ւր Դուին, Անի, է՞ր անկան կործան։
Թողաք ըզտուին ըզբուն մեր կայան,
Յաշխարհէ յաշխարհ եղաք ցիրուցան։

Յուշ բերե՞մք արդեօք ըզվեհ մեր նախնիս,
ԸզՀայկ, զԱրմենակ, նոյն և զԱրմայիս.
Յորոց բազկաւոր ձըգանց յարգասիս
Բարձր 'ի գլուխ պանծայ ամպամերձ Մասիս։

Արամ, Արտաշէս, և Տիգրանք երկու
Ի՞բր 'ի Թըշնամիս գըտան ահարկու.
Ո՞ւր յաւէրժայաղթ Տրդատես հուժկու.
Ո՞ւր մեր երկնաջահ Գրիգոր Լուսաւոր։

Քանի՞ցն բարեաց սատար մեզ եղեւ
Ընմահն յետ մահու՝ սուրբ Սահակ Պարթեւ.
Ո՞րպէս Մեսրովբայն վառուակ յարատեւ
Ծագեաց մեզ 'ի գիր նոր լոյս, նոր արեւ։

Եթէ Վարդանայ չէր փառեալ ՚ի գէն,
Մոգք ո՞չ շրջէին զազգ մեր յիւրեանց դեն.
Ո՞չ զմեր սուրբ կրօն և զազգ համօրէն
Խառնայր ՚ի մէջ Յազկերտ անօրէն։

Քանի՜ցս ամբարձան՝ քանի՜ցս և բարձան
Ի տան Թորգոմայ Գահոյք Պետական։
Հի՞մ Ըսկիւթացին չարն այն Զարմաղան
Զաշխարհ մեր համայն արկ ոտից կոխան։

Վա՜ն էր այլազգեաց զօրք աշխարհաւեր
Զտունն Կիլիկեան եղծին հիմն ՚ի վեր.
Զխո՞րդ դղեակդն այն Լևոն արքայ մեր
Զիւր թագ և զաթոռ եթող ցարդ անտէր։

Լանկթամուր, Շահաւուհ, Շահթահմազ, Շահրաս,
Զի՞նչ ինչ չարարին յաւէր ՚ի վընաս.
Ո՞չ աղքատ՝ որչափ գրաւն ձեռընհաս՝
Գերեցին զազգ մեր, հարին յանխընայս։

Ընդաւթ Նատըրշահ, բռնիշխան արքայ,
Քանի՞ զաւն աղուեսս ած յազգիս վերայ։
Ի՞ր այսպէս ծընընդքս Քաջաղենն Հայկայ
Խժգըժից եղեաք ճար՝ գերի՝ ծառայ։

# ԺԵ

## ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Որ եսդ 'ի յերկինս՝
Հայր ամենաստեղծ,
Անունդ՝ անարխեղծ
Լեցի յերկրածինս։

Քո արքայութիւն
Հասցէ փութապէս,
Զի մի չարն 'ի մեզ
Բռնանացի համբուն։

Եղիցի՛ն յաւէտ՝
Որպէս յերկնից կայս,
Նոյն և 'ի տարերայս,
Կամք քո փրկաւէտ։

Հաց զօրըստօրէն,
Դու Տէր, յայսմ աւուր՝
Հայցեմք՝ և մեզ տուր
Խընամողօրէն։

Թող ըզմեր պարտիս,
Որպէս մեք մեզէն
Թողումք որց մեզ են
Պարտապան յատիս։

Մ՛ի ըզմեզ փորձոյ
Կենցաղոյս մատներ,
Այլ զանձինս մեր
Ի չարեաց փրկեա՛։

Զի է իսկ՝ է քո,
Քո արքայութիւն,
Քո և զօրութիւն,
Քո փառք մշտագոյ։

# ԺԶ

## ԻՄԱՍՏՔ ՍԱՂՄՈՍԻՆ ՃԱ.

Զի՞ լռես, Ա՛ստուած, Աստուա՛ծ վրէժխնդիր,
Որ կաս 'ի բարձունս, հայիս և յերկիր։
Թշնամին ահա՛ 'ի սիրտ չարակիր
Զոր զինէն խորհի, լուայ 'ի նանիր։

Տե՛ս, զինարդ փոխան իմ սիրոյն առ նա՝
Նախատինս յաւէտ դընէ յիմ վերայ։
Ես յաղօթս կանխեմ· նա բարուք դըժնեայ
Զարեաց 'ի չարիս դիմէ, և խընդայ։

Առիմէ՞ ժուժաս որ հըզօրդ ես Հայր՝
Երբ անըրգգամն ինձ լինի ատըհար։
Արա՛ զի 'ի գուբ անկցի նա 'ի վայր·
Ընդ աջմէ նորա կացցէ Բելիար։

Կարճեսցին յերկրի ժամանին ժանտ օրեր·
Պատեսցեն զնովաւ ցընորք մահաստուեր·
Տեսցէ նա զիւր տուն կործան հիմն 'ի վեր·
Կին նորա, որդիք, մուրասցին անտէր։

Եկեսցէ հասցէ յանկարծ փոխատու
Ըզնորայն քըննել զինչսն զոր դիզու։
Այլք անիրաւին տիրեսցեն գանձու·
Մի՛ գըտցի նըմա մի ոք ձեռընտու։

Օ՛հ նա, և նորուն փառք և ամէն ինչ
Յոչընչէ եղեն, եղիցին ոչինչ·

Յիշատակ նորա բարձցի բնաջինջ.
Հօր նորա և մօր մեղք կայցեն անջինջ:

Տեսանե՞ս՝ որպէս այս այր ապիրատ
Չողորմի ումեք, հալածէ զաղքատ.
Հեզոյն՝ անմեղին՝ գաղտ լարէ թակարդ,
Ինքնին իսկ մահու եղև պատժապարտ:

Զօրհնութիւնն՝ յաւէժ պարարող ոսկերց՝
Մերժեաց նա յանձնէ, և իբրու հանդերձ
Զգեցաւ զանէծս. անիծեալն յանդերձ
Խաւարին ՚ի վիհ իջցէ մերձ ընդ մերձ:

Մինչև ցե՞րբ լռես, Տէր իմ ծածկատես,
Մինչև ցե՞րբ այդպէս երկայնամտես:
Արա իմ խռովի, արդ մեռանիմ ես՝
Թէ չողորմեսցիս, թէ ինձ չօգնեսցես:

Արա՝ զի սուտն ըզգեցցի զամօթ.
Նանրացին նորուն բարբանջք սրտայօդ:
Ես քո եմ ծառայ, քո գթոյդ կարօտ,
Որ կանխեմ յօրհներդ յամէն առաւօտ:

# ԺԷ

## ՅԻՍՈՒՍ ՓՐԿԻՉ

## ՅԱՇԽԱՐՀԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑԻՈՑ

Յիսուս ծընաւ, երբ. —
Ընդ Աւգոստոսու մեծ կայսերբ։

Խանձարրեցաւ, ո՞ւր. —
Ի յանբանիցն 'ի մըսուր։

Մըկըրտեցաւ, է՞ր. —
Ընդ մաքրելոյ զաղտ ըղձիր։

Վարդապետեաց, զի՞նչ. —
Ի սուրբ 'ի վարս փայլել ջինջ։

Ապաքինեաց, զո՞յս. —
Զորս 'ի կենացըս անյոյս,

Ի մարդկանէ և անմերձ
Կէին, խեմ դու զհամերց՝

Խուլից՝ խեղից՝ և աչօք
Խաւարելոցն հէք ըղձօք։

# ԺԲ

## ՅՈՐԴՈՐ ՅՈՒՍՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՑ

Մանունց ուսմանց որ տաղս գան՝
  Միտ դիր, մանուկ, լեր և բղձօն·
Արոյ ածմամբ և Հաւատոյ
  Տեառն Աստուծոյ պաշտօն մատո։
Երկեղած միտք 'ի քեզ թէ կայ,
  Զոր ուսանիդ՝ անդուլ խոկա։
Բարունակեան հանուրց, Յիսուս,
  Զմանկտին օրհնեալ բղխեա արդյս,
«Այդպիսեաց է, ասէ, արժան
  Յերկնից հանգչել 'ի յօթեւան»։
Յուսափափագ փութա և դու
  Արցորդ նոցուն լինել պարու։
Ի՛ քեզ արդ ժամ անմեղ աւուրբ
  Հրեշտականալ 'ի փառս 'ի սուրբ։

# ԺԹ

# ԱՂՕԹՍ ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐՆ

Առ քեզ, Սուրբ Կոյս, Մայր Միածնին,
Լալով կարդամ ողորմագին։
Բարձ զայս 'ի մէնջ մահաձորակ
Որբանութեան զախտ դըժընդակ։
Գրգռեալ սիրով գորովագութ
Զիս՝ որ արեան գին եմ Որդւոյդ։
Դու իմ միակ յոյս ապաւէն
Ոչ զոք ունիմ ինձ բաց 'ի քէն։
Եւ ընդ աւաջ տատանելոյս
Յալեաց ծովուս մըրրկայոյզ,
Զի առանց քո չեմ ինչ ատակ
Յանդորր ածել զգուոյս նաւակ։
Եւ յիս 'ի ժամու մահուն երկեղ
Յանցից Մարդոյն ըսկրդընամեղ.
Ընդ ում և ցանց կըրեմ 'ի յիս
Ըզմահաբեր վիրացն բազիս։
Թէ ոչ քեւ արդ պաշտպանեցայց,
Ձեռք իմ ստանեք ակըն կենաց։
Ժամու հարուածոյն բացակիծ սայ
Մահահրաւէր ածէ տագնապ։
Իբր անկելոց 'ի թանձր 'ի նիրհ
Երթնոց բերէ մեծ արհաւիրս։
Լեւաթանայն անդրընդակալ
Գունակ՝ ըզմեօք պատի անդուլ,
Խըռնըրէ համայն բազում բազում.
Զադամանդինս լափել 'ի հուր։

Ծերոց՝ մանկանց հասակաչափ
        Արանց՝ կանանց ջոկ արբաւթափ։
Կուսանք պարկեշտք և օրիորդք՝
        Նոցին ՚ի սուգ ալբամահաղորդ։
Հարսունք՝ փեսայք՝ դիմօք ալխուր,
        Վըհատք յանձինս յուսակտուրք։
Ձայնիւ նուաղ մի բըմխով
        Ըղձային ուաղ մըրմընջելով,
Պօղատարաւուք յառագաստի
        Հըծծեն իբրեւ ՚ի թագրատի։
Ճիչ բառնայ հայր դառնակոծ
        Ընդ մահ որդւոյն դեռաբողբոջ։
Մայրն աղեկէզ մըշտամորմոք՝
        Կականաբարձ ջայլականօք
Յայգուց յառնէ, փութայ վաղ ՚քաջ
        Գերեզմանն ՚ի կոծ լալահառաչ։
Նոցուն և այլք համաթախիծ
        Գուժան զուռան կսկըծակիծ։
Ճռինչ հառկըլեալ ՚ի ձայն կերկեր
        Յորսայս կըրնին զօգ կիսամեռ։
Ո՛վ տեսարան աղխաշարժ,
        Որով զեղուն սիրտք աղէխարշ։
Զըգոյ ուստեք փրկութեան ճար
        Ի հարուածոյս այս չարաչար։
Պատըսպարան Դու ես բազմաց,
        Ո՛վ Տիրածին, և յիս հայեաց։
Ջուր զարտասուաց զիմ ջերմահոս
        Մատո Որդւոյդ, լէր բարեխօս,
Ոտահ ինձ հորդել ՚ի կեանս անքոյթ՝
        Համայն ՚ի բաց վանեալ բըղխումթ։
Սատանութեան մի զիմ տար զոտն՝
        Որ յեւր յընթացս է միշտ զայթու։
Վըտանգն արդէն առ դըրըս կայ
        Որհասաբեր ախտին դըժնեայ։

Տեղի ուրեք չէք փախըստի·
    Չէք Ասկղեպեան բոյժք արուեստի:
Բարձունոյդ Այ ամենամերձ
    Միայն Թափէ զիս դիւրագերծ,
Ցօղով արեանն ամբիծ զոր Հեղ՝
    Զիմ լուացեալ զոգւոյս ըղկեղ:
Խնամեա՛ ուրեմն, ով Տիրամայր,
    Ընդ իմն ըղձքս ձայն հաշտարար:
Փրկանս անձին իմ վըշտաղէս
    Փութա մաղթել 'ի Միածնեդ:
Քեւ վերքատին եւ իմ աւուր
    Բարւոյ դիպեալ նորոգատուր,
Օրհնաբան քեզ կանխեսցեն յերգ
    Շունչ իմ՝ մարմին, անշունչ ոսկերք:

# Ի

## ՆՈՒԱԳ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ Ի ՄԱՂԹ ԲԱՐԵԱՑ

# ԿԱՅՍԵՐ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ [1]

Մանկունք Արամեան,
՚Ի ձայն օրհնութեան
Նոր տուէք գեղօն
Յակին գայիան
Յաղթանուան [2] քաջին՝
Քրիստոսասէր
Մեծ ինքնակալի
Ռուսաց և ԿԱՅՍԵՐ։

Կեցցէ կեցցէ յիւր բարձր ՚ի գահ՝
ՅԱՋՆ հզօրին լեալ ամրապահ՝
Մեծ Թագաւոր Աւգոստափառ,
ՆԻԿՈՂԱՅՈՍ մեր բարերար։

---

[1] Երգեցաւ ՚ի հանդէսի։
[2] Զի առ մեզ՝ Յաղթող Երեքշաբթի Յանուանական տեառն Նիկողայոսի։

# ԻԸ

## Ի ՅԻՇԱՏԱԿ ԵՐԱԽՏԵԱՑ
## ՅՈՎԱԿԻՄԱՅ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ [1]

Ժամն այս, ո՜ մանկունք, կարդայ ձեզ հրաւէր.
Զաչկունս երկրեղէն ամբառնալ 'ի վեր,
Զխնամածիցս ըզՏան ըզՎեհ կառուցող
Ներկրել յանուշից արտասուաց 'ի ցօղ:
Որդեգիրք Լազարեան,
Ձայն տուէք օրհնութեան,
Զի յերախտագէտ
Ձեր սրտէ և յիմ,
Խընկեսցի յաւէտ
Վեհազն Յովակիմ:

Արդ ո՞ր իցէ նա. — նա հոգւոյն անեղծ
Յեթերին 'ի կայս թէ երթ լուսայեղց,
Զմարմինն աստ առ մեզ եթող յաւանդի
Ի հասարակաց Մօրն 'ի յարգանդի:
Որդեգիրք Լազարեան,
Ձայն տուէք օրհնութեան,
Զի յերախտագէտ
Ձեր սրտէ և յիմ,
Խընկեսցի յաւէտ
Վեհազն Յովակիմ:

Հայր է նա ազգիս, թէև ոչ յերկրի,
Յակումբ աստղաթիւ ծընընդոց բերկրի:

[1] Երգեցաւ 'ի հանդիսի:

Զի զծընեալըս ՚նա վերածնեալ սընոյց՝
Զիմաստից բաժինս տալով քաղցր ՚ի ծուծ։
Որդեգիրք Լազարեան,
Զայն առէք օրհնութեան,
Զի յերախտագէտ
Ձեր սըրտէ և յիմ,
Խընկեսցի յաւէտ
Վեհազն Յովակիմ։

Ի մեզ ճեմարանս գըթոտ իբրու Մայր.
Որ թէ չէր, սընունդ կըրկին մեզ ո՞ տայր։
Նա մեզ աջողէ այրանալ ՚ի սիրտ,
Նա մարզից յոգունց մըխել զանձն ՚ի կիրթ։
Որդեգիրք Լազարեան,
Զայն առէք օրհնութեան,
Զի յերախտագէտ
Ձեր սըրտէ և յիմ,
Խընկեսցի յաւէտ
Վեհազն Յովակիմ։

Ահա Յովհաննէս, ահա Խաչատուր,
Վեհ մեր Պայազատք, բանիւ կան ՚ի լուր.
Ուր լի խընդութեամբ ծաղկեսցին և դէմք՝
Ի յառաջադէմս թէ զմեզ նըկըրտեմք։
Արդ աղերս մեք առաքէն
Ուղղեսցուք առ Միշտ-էն,
Զի հըզօրեղն Աջ
Հովանասցի ցանդ
Յօրհնեալըն ՚ի ժառանգ
Տոհմիս բարգաւաճ։

# ԻԲ

## Ի ԲԱՐԵՐԱՐ ՏՈՀՄԻՆ ԼԱԶԱՐԵԱՆ[1]

Թո՛ղ տուք, աղաչեմ, Վեհազնեայ իշխան,
Թո՛ղ տուք ինձ, իբրու դեռախօս մանկան,
Ըստ կարի յաւէտ քան ըստ պատշաճի
Անխէթ զիմ ոգեւ բան Ձեր առաջի։

Ուր գամ մի ըզՁեզ տեսին, կամ ըզՁեր
Լուան ըզՀամբաւ փութոյդ ազգասէր,
Լըսեցի՞ն արդեօք. — Ո՛չ, այլ՝ փողելով
Զարժանն ընդ հանուր հընչեցին ըզգով։

Քա՛ն է ինձ պատեհ՝
ԶԱյցելուդ ըզՎեհ
Օրհնել, ձայն աղերս
Վերուղղեալ յեթերս.

„Արա՛ ո՛վ Տէր՝ զի հաստատուն
Կացցէ յաւէրժ Լազարեանց Տուն"։

Ասի, թէ Սեսոստր, Աշխարհակալ մեծ,
Յոր սահման զիւր Զէն ձըգէր ահընկեց,
Անդ յարձան 'ի կուռ, յազգ ազգ 'ի քանդակ
Անման ըղձանայր թողուլ յիշատակ։

Իսկ Ձեր յամենայն 'ի քաղաք, 'ի գեօղ,
Ո՛ր մի յերախտեացդ մի մի է կոթող.

---

[1] 'Ի դիմաց որդւոյ Քերովբէին։

Եւ ինքնագրոշմ յանձնիւր ՚ի սրտի
Վեհագինդ անուն տարրանայ սերտի։

Ուստի ժամ պատեհ՝
ԶԱյցելուդ ըզՎեհ
Օրհնել, ձայն աղերս
Վերուղղեալ յեթերս.

,,Որս ո՛վ Տէր՝ զի հաստատուն
Կացցէ յաւէրժ Լազարեանց Տուն''։

# ԻԳ

## ԱՂԵՐՍ

### ԱՌ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ԽԱՉԱՏՈՒՐ ՊԱՅԱԶԱՏՍ ՏՈՀՄԻՆ ԼԱԶԱՐԵԱՆ[1]

Արարատեան Մասայից՝
Ուր կայամ 'ի Տան[2] անուն ձեմ
Զուարթ 'ի սիրտ և 'ի դէմ,
Քամ ինձ լինել ձայնակից։

Խնամոցդ 'ի սէր լեալ վստահ,
Թէ ոչ զօրեմ ըստ նոցին
Զայն գովեստից զարժանին
Վեհիցդ յօդել ձա՛հ 'ի ձահ։

Ո՞ր Հայկ Դիւցազն, ո՞ր Արամ. —
Մեռան նորա։ Լըսեմ ես՝
Թէ Հայր Դո՛ւք էք տիրապէս
Մանկանց նոցուն մանրերամ։

Հապա և զիս, աղաչեմ,
Ու զիս գըլթով գըրկալեր
Ընկալարուք յորդեգիր·
Զի Հայ իսկ եմ, օտար չեմ։

[1] 'Ի փոխման [illegible]։
[2] 'Ի Ճեմարանի։

# ԻԲ

## Ի ՊԱՏԻՒ ԱԶԳԱՑՆՈՑՆ ԲԱՐԵՐԱՐԱՑ՝
## ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՒ ԽԱՉԱՏՐՈՅ ԼԱԶԱՐԵԱՆՑ [1]

Նոր օր, նոր ամիս, նոր և տարեգլուխ,
Սերկեանս ազգէ բան՝ հանուրց բերկրաբուխ։
Հիմ ապա և մեք, վէհ մեր խնամածուք,
Ո՛չ ըղձոյն ՚ի լուր Ձեր բարբառեսցուք։

Դուք մեր ըստ հոգւոյ ծնողք արդարեւ,
Զի Ձեօք մեք տեսաք նոր լոյս, նոր արեւ։
Բարեօքդ աննախանձ որ ըղձեօք գեղու՝
Պարարեալ իբրու կաթամբ և մեղու,
Հրճուիմք հոգեպէս, հրճուիմք և մարմնով,
Զի և յիմաստից աճեմք ՚ի կորով։
Ընդ տարած թեւովք Ձեր հովանաւոր
Մեզ մէն մի տարի՝ մի մի դար է նոր։
Տարիք անցանեն, դարք հոսին գնան,
Ձեր անուանք յանանց դրոշմին ՚ի մատեան։

Զերկնաւորն ըղձայր օրհնեմք ՚ի սրտէ,
Զայն՝ որ զմեր ըղձիցս ՚ի բարձանց դիտէ,
Օրհնեմք ըզնորա զանձառ գթութիւն,
Որ ըզԼազարուն Ձեօք կանգնեաց ըզՏուն,
Աշտանակաբարձ զօրէն ճրագի՝
Լուսատու յըսփիւռ լինել Հայ ազգի։

Նո՛յն — Նա պերճ կենօք և գերազանցիկ
Շքեղ փայլեսցէ ըզՁեզ յամս ՚ի ձիգ։
Յովհաննէս անուն, այլ և Խաչատուր,
Պանծագոյն հանուրց հընչեսցի ՚ի լուր։

---

[1] Ընծայեալ յամանոր Տարեմտի ՚ի դիմաց աշակերտաց Ճեմարանին։

# ԻԵ

## Ի ՊԱՏԻՒ ՆՈՐԻՆ ԻՍԿ ՏԵԱՌՑ ԼԱԶԱՐԵԱՆՑ[1]

Յարեւելից ահա գան Մոգք՝
Աստեղըն ածեալ հրաշաձեմ·
Գան մեծարել պատարագօք
Ծնեալն Արքայ՝ 'ի Սաղէմ:

Ընդ Նա տեսեալ 'ի խանձարուրս
Յանշուք պատեալ 'ի ծորձիկ,
Ոսկի՝ կընդրուկ տան՝ և զմուռս
Նմին 'ի ձօն գեղեցիկ:

Նա՛ էր ծագեալն աստղ Յակոբու,
Զոր գուշակեաց Բաղաամ:
Նա՛ էր Փրկիչն, ում օրհներգու
Զուարթունք կացին յաւերժ:

Ի՞ւ արդ մեք ընծայաբեր
Լիցուք Նմա, իւ արդեօք,
Որ յանմատոյց յերկինս 'ի վեր
Հօրն ընդ աջմէ կայ փառօք:

Հաւատ, յոյս, սէր, խօսուն պաշտօն
Յամբիծագոյն 'ի լեզուէ,
Համոյական Նմա է ձօն
Քան ըզծըխեալն ըզհալուէ:

---

[1] Ոտանաւոր տօնի Աստուածայայտնութեան, 'ի դիմաց ա-
շակերտաց:

Բացցո՛ւք ապա ըզմեր շըրթունս
Ընդ հրանիւթիցըն դասու,
ԸզԲանն Աստուած որ 'ի բարձունս՛
Օրհնել 'ի սիրտ, 'ի լեզու:

Որ ըստ օրէ՛ տայո՛ւք և ցանդ
Նըման զաղօթս ըղձականս,
Հաւատեղացդ օրհնաժառանգ
Տա՛ն Ղազարու ժըռել կեա՛նս:

# ԻԶ

## Ի ՊԱՏԻՒ Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԼԱԶԱՐԵԱՆ [1]

Բարբառոյն ձայն յանապատի,
Մեծ կարապետըն Յովհաննէս,
Տօնիս այսօր մեծահանդէս
Յեկեղեցիս մեր դըրուատի։

Իսկ ո՛րդունակ Անուանակրիդ
Նորուն 'ի գով 'ի գերապանձ՝
Ի գեղեւկոտ մերոց շըրթանց
Բանք բըղխեսցեն խըրախուսիթ։

Ո՞ հոսես ոչ, ո՞ գիտէ ոչ
Ըզբազմադէմ զերախտեացդ հոյլ,
Զոր հայրենեացդ ցուցէք անդուլ
Մանկանց բամից դեռաբողբոջ։

Թո՛ղ այլք ոճով առցեն 'ի վէպ
Զարգասաւոր փութոյդ ըղձան
Նուաճեալ յազգիս օձան։
Մեզ գոհանալ միայն է դէպ։

Ուստի մաղթանս 'ի սերտ սրտէ
Վերառաքեմք առ Տէր Աստուած՝
Նոյնս յաւուրս Զերոց կենաց
Նուաճելով և յայժմ հետէ։

---

[1] Ուխտաւորական տօնի կարապետին Յովհաննու, 'ի ժողովոյ աշակերտաց։

# ԻԼ

## Ի ՊԱՏԻՒ ՆՈՐԻՆ Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԼԱԶԱՐԵԱՆ [1]

Զուարթնոյն յորժամ հընչեաց բարբառ.
„Որ ճաշակեացն բղխմանց խաչի,
Ի մեռելոց չէ ՚ի միջի,
Փառօք յարեաւ Աստուածաբար",

Յարուցելոյն շողան ՚ի տես
Սուրբ Առաքեալքն ՚ի Գալիլեա.
„Ալէլուիա ալէլուիա"
Ամեք ՚ի Տօնիս երգեն հանդէս:

Ի՜ Սփոփէի մանկանց այս երգ.
«Նոցուն կըցորդ և մեք դասու»
Գոհաբանող պարգեմք լեզու,
Քանզի և մեր ցնծան ոսկերք:

Ըզյարուցեալն օրհնեմք ըզՏէր.
Ո՛ւմ և աղօթս աղերսականս
Վերուղերձեմք, հայցելով կեանս
Հօրըդ ազգիս երջանկաբեր:

---

[1] Ասացեալ յաշակերտաց յաւուր Զատկին:

# ԻԲ

## Ի ՊԱՏԻՒ Տ. ԽԱՉԱՏՐՈՅ ԼԱԶԱՐԵԱՆ [1]

Այսօր Տօն խմբեցաւ սուրբ Խաչի,
Այսօր մեք փութամք Ձեր առաջի,
Ընծայաւէտ բղխեսցիդ յիշատակ
Տարփողել բերկրալուր 'ի գըրուագ:

Օ՜հ զի՞նչ այլ որդեգրացս իցէ դէպ՝
Քան հրաշակ յանդգհարուլ ստէպ ըստէպ
Զերախտեացդ բղխուց անձինդ,
Յոր խնդիւ վայելեմք հանապազ:

,,Շնորհաւո՜ր աւուրս մեծ Տօնախմբի'',
Զայն բառնամք՝ բոլորեալք առ յակամբ:
Ընմահին՝ որ մարմնով առ ըղձերս՝
Ի խաչին տարածեալ զիւր ըզձեռս,
Պաղատիմք, և ուխտիւք իսկ հանդերձ
Մաղթական նուիրեմք զայս ուղերձ.
,,Կեցո՛ Տէր, պահեա՛ Տէր, զորդիս Հայր՝
Զխաչանուն Պայազատ յամս յամայր:

[1] Առաջեալ 'ի տեառն աշակերտաց, յաւուր տօնի Ս. Խաչին:

# ԻԹ

## Ի ՊԱՏԻՒ ՆՇԱՆԻՆ Տ. ԽԱՉԱՏՐՈՅ [1]

Դարձեալ մեք աչս
Ըղձեր բղջըրթանս
Զանուրցս Արարչի
Բանամք յորհնութիւնս:

Զի նոյն — նա դարձեալ
Մարդասիրապէս
Յայս ըղձից հասոյց
Տօնախմբեմք հանդէս:

Պատշաճ է մեզ աստէն
Ի ճահ գովութեանց՝
Օրհնել ըզՎեհիդ
Զանուն խաչապանծ,

Զանուն անենչալի՝
Լի արդեամբք յաւէտ,
Զոր մեզ Երկնային
Շնորհեաց Գիտապետ:

Կեցջիր Դու, Տէր մեր,
Կեցջիր յամս յամայր,
Մանրերամ մանկտւոյս
Խնամող լինել Հայր:

[1] Ասացեալ 'ի դիմաց աշակերտաց, յաւուր տօնի Ս. Խաչին:

# Լ

## Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՆՈՒԿ՝ ՈՐԴԻ Տ. ԽԱՉԱՏՐՈՅ ԼԱԶԱՐԵԱՆ

Մեծ 'ի ծընունդըս կանանց
Վըկայեցաւ Յովհաննէս,
Զի զԱստուածայն ճամբ բըգեան
Նաեւ, եղեալ յայտնապէս:

Արմին և դու համանուն՝
Փոքրիկ թէպէտ 'ի հասակ,
Մե՛ծ 'ի քայլ՝ սերտ Տոհմի
Պարծանք լեցիս և պըսակ:

Մե՛ծ է կոչման քո խորհուրդ.
Նու իմ՝ արդէն մեծ է յոյս,
Եթէ արդեամբք և յոգունց
Լեցիս բարեաց 'ի խըրախոյս:

Ուստի զբանիս խուն գըրուագ.
Նուիրել փութամ՝ քեզ 'ի ձօն,
ԶՈրդւոյ Ամէյն բերկրանիս
Շնորհաւորեալ բըմեծ Տօն:

# ԼԸ

## Ի ՏԱՐԱԺԱՄ ՄԱՀ ՆՈՐԻՆ Ց. ՄԱՆԿԱՆ

Մարդ յաշխարհ ծընար, փոքրիկ Յովհաննէս,
Յոյս մեծ՝ ղազարուն ընկերով Տոհմի.
Եւ մինչեւ 'ի տիս հասեալ յեօթնամի՝
Նշեր յաշխարհէ, չըգիտեմ՝ ո՞րպէս։

Քանի՞ ցընծութիւն 'ի քում ծընընդեան
Զեղաւ քաղցր 'ի սիրտ 'ի քո Հօր եւ Մօր.
Քանի՞ եւ ընտանիք բարեբաստ զայն օր
Կարդալով՝ նոցուն խընդակից գըտան։

Յէ սիրուն մանկիկ, յէ գառնիկ մատաղ,
Զիմ ըզքո ծընողս 'ի կոծ եւ յաշխար
Թողեր, գընացեր... Բա՞նտ էր քեզ աշխարհ,
Կամ քոյ ըղձատեան քեզ լա՞ւ էր գաղաղ։

Կայեր ոչ յերկար ցաւոցդ 'ի մահիճ.
Վաղ ընդ փայլթ հանուրց Մօրն[1] յարգանդ էջեր,
Նու ո՞յր յայնժամ սիրտ ժուժայր, ո՞ր աչեր
Ոչ յեղյեղեցան յարտասուաց 'ի լիճ։

Թէ՝ եւ քո սենեկիկ թափուր 'ի քէն կայ
(Զի Հօրն հաւատոց չունէիր 'ի գոգ),
Եւ ո՞ ցաւագին քո յիշատակօք
Ձողբայ՝ չարտասուէ, կամ զէթ չփղձկայ։

---

[1] Երկրի։

Բարգաւաճելոյ Տոհմին գերազանց
Պերճ ժառանգակալ այն դու էիր։
Քեւ վէհն Իշխանաց, տիկք ծանրակիր,
Խրախոյս 'ի բարիս կարդայր Հայկազանց։

Արդ ո՞ր այն հրճուանք, ո՞ր պանծալին յոյս,
Ո՞ւր եռանդն 'ի սիրտ, ո՞ր ժպիտ 'ի դէմս. —
Բարձաւ ամենայն . . . Եւ ինձ որ քերթեմ՝
Ջահունք Եթերին [1] 'ի մութ կան յանկոյս։

Թէ իբր այն դիպաւ քեզ մահածուն տխուր՝
Եւ 'ի հընարից դեղոյն ապստամբ,
Այլք թող պատմեսցեն. իսկ ինձ կականմամբ
Մընայ զիմս ողին տաղել ըղբախօս։

Եւ դու որ 'ի կայս պըրծեար 'ի յայնքոյթ՝
Փոքրիկանց դասուն լինել յարկակից,
Զաղէկէզ սըրտի Ծերունւոյն [2] կըսկիծ
Թեթեւել հայցեա յԷն բարեգութ.

---

[1] Լուսաւորք երկնից։
[2] Ծերոյն Մանկանն։

# ԼԲ

## ՈՐՁԱՆԱԳԻՐ ՇԻՐՄԻ ՆՈՐԻՆ Ց· ՄԱՆԿԱՆ

Ո՛չ աստ հինօրեայ մարմին կայ ծերոյ,
Այլ՝ գոգ եօթնամեայ հրաշալեղ մանկան.
Ոյր դէմք, միտք ըղձօն, բարք ազնուական,
Յուսադիր յոգւոց լինէին բարւոյ։

Է՛ր նա փառք, պըսակ, պարծանք, խընդութիւն,
Համայն և ժառանգ Տոհմին գերազանց,
Ծընունդ խաչատրոյ Վեհին Լազարեանց,
Մեծին ՚ի ծընունդս կանանց՝ համանուն։

Նովաւ ակն ունէր մանկունքն Արամայ
Բարեգործ Ջարմին կըթել ըզպըտուղ,
Ընդոյն ազգ յազգէ մըշտընջենաճիւղ
Անձկայր տեսանել ՚ի դարս բազմամեայ։

Այլ մահկանացուաց նա փող ՚ի մէջոյ
Փախեաւ, յանանց ճեմելեաց մուտ ՚ի կեանս՝
Առ ոչինչ համայն համարեալ զոր կան.
Զի այնպէս Վերնոյն կամքն էր հաճոյ։

# ԼԴ

## ԲՕԹ ՄԱՀՈՒ

Մահու հաս ինձ բօթ
Յայս թերաղօտ
Առաւօտ:

Սարսափ գիս կալաւ՝
Մ՚ինչ պատմեցաւ,
Թէ մեռաւ . . . :

Եղո՜ւկ, մեր բաղդ
Եմք դիւրանցուկ
Իբր անգոյք:

Րոպէք՝ ժամք՝ թռչին,
Կեանք փայլ կարճին՝
Կորնչին:

# ԼԴ

## ԱՂՕԹՔ ԱՌ ՄԱՀ

Մի երազեր, Մահ, մի մերձենար յիս,
Թո՛յլ տուր ծերանալ, փայլել յաստիս։
Արդ գրեմ,
Համբերեմ,
Զի դեռ՝ կենացս
Շա՛տ օր կայ։

Սակաւ առ սակաւ ինքնին առ քեզ գամ·
Զանօրէնն յերկրէ դու բա՛րձ տարաժամ։
Ես Հայ եմ,
Խուժ՝ դուժ չեմ,
Զիմ Տէր Հաստիչ
Ճանաչեմ։

Երիտասարդիս շատ պիտին օրեր
Զի գրեայց իմում ազգին օգտաբեր։
Եղիցի
Եղիցի,
Ամէն ամէն,
Եղիցի։

Դէ գերոյ նման, ո՛ Մահ, է քո կարթ·
Որով զընդամէն քարշես զամէն մարդ։
Մի՛ բռնար
Բռնաբար
Ընդ ամբարիշտս
Զայր արդար։

# ԼԵ

## ՆԱՄԱԿ ԱՌ ՊԱՅԱԶԱՏՆ Յ. Մ. ՊԷՅ

Ժամ 'ի ժամէ Մըսերն 'ի Ձեր
Վառեալ 'ի անձն յապաժոյժ,
Արանայր յոր վայր՝ թէ իւր բաւեր
Ոգի, մարմին, նոյն և ոյժ։

Այլ զի 'ի տար յերկրիդ սահման
Գրընայս հորդել ոչ է հեշտ,
Խերէք նըման ըղքերթութեան
Զափել նըւագ 'ի Հրնչեշտ։

Խըրամանձար Ձեզ Պրանտենպուրկ
Աշխէ, գիտեմ, և փարէժ,
Յորում Դըժբաղդն իմ Թագաւորկ [1]
Զազգն անտէրունչ լայ յաւէժ։

Ձեր աւագին կայ առաջի
Աշխարհ լի ծոխ՝ խալխա,
Զոր Նէրսէսի [2], մերոյն քաջի
Բաղուկ թափեաց 'ի Տէյայ [3]։

Ընդ չէն տեսջիք համբաւատենչ
Ըզխառնուլեան պերճ քաղաք,
Ուր Հայկազոր Տիտանն [4] 'ի մէնջ
Փառօք տարաւ յաղթանակ։

---

[1] Լեւոն Զ. Լուսինեան։

[2] Պատրիկ Հայկազն տր Յոհաննիսպուրկ Ա.։

[3] Վերջինն 'ի Նաֆարայ գոնեայ՝ որ տիրէին երբեմն խաղէր։

[4] Տրդատ՝ որդի Խոսրովու։

# ԼԶ

## Ի ՎԵՐԱԴԱՐՁ ՆՈՐԻՆ ՊԱՅԱԶԱՏԻ

## ՅՈՒՂԱԽՈՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴ ԽՈՐՈՊԸ

Ողջամբ Ձեր դառնալ, Պայազատ վսեմ,
Հրճուալից և ես ընդ բազմաց ասեմ.
Օրհնեա՜լ է և միշտ օրհնեսցի Որ — Էն.
Որ ըզՏէրդ ինքնին խնամեալ յաջնորէն,
Ընդ ծով ընդ ցամաք ածեալ դիւրահնչյա,
Ի շէնդ անվրկանդ հասոյց 'ի Հրնչեա.
Ի Հրնչեա՝ ուր ինձ տուաւ արգամբ
Նախկին շնչել զօդ, տեսանել զարև[1]:

Նոյն — նա հաճեսցի թէ այլուր թէ աստ՝
Եւ յայսմ՝ հետէ կենօք բարեբաստ
Բարգաւաճ ըզՁեր պահել Գերդաստան,
Իւրում ատենի զուարթ 'ի ջուրս հանգըստեան:

[1] [illegible]

# ԼԷ.

## Ի ԾՆՈՒՆԴ ԱՆԴՐԱՆԻԿ ՈՐԴԻՈՅ ՆՈՐԻՆ ՊԱՅԱԶԱՏԻ

Զե՛րդքոյդ, Մանուկ,
Տեսեալ քնքշիկ դէմ,
Գծրուագ զայս յատուկ
Սիրայնոյդ քերթեմ:

Յարմատոյն բարւոյ
Բարեփառ 'ի ցեղ՝
Ծագեցար այժ
Նոր դու շառաւեղ:

Հաւուն քո վեհի,
Բամբէ, յայս իմ երգ
Հեշտասցի ոգի,
Յընծայեցն ոսկերք:

Նմին իսկ և դու
Ի տիոց գեղազէշ՝
Աշխնածիր զարդու
Զարդարեսցիս յաւէժ,

Տածեալ յոր 'ի քոյդ
Ի սիրտ քաջախոհ
Սէր ազնուագութ
Առ Հայկեան Գրոհ:

# ԼԸ

## ԱՔԱՂԱՂ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ

Ի գիւտ կերական մինչ Աքաղաղ
Զաղբիս պրտուէր կրկերաւքաղ,
Նշդւոյ նա հատ մանրին, զի գիտ
Փաղփիւնափայլ զուտ մարգարիտ:

Բայց և անդէն զարկ 'ի գետին,
Եւ ող խռուժ կարդաց բաղդին.
«Ահէ, ասաց, հատ կորեկան
Քան զայս բիւրիցս է պատուական»:

---

Սոյնպէս խօսէ այլ անգէտ
Զգիտնոց վաստակս իբր անպէտ:

# ԼԹ.

## ՄՈՒԿՆ ԵՒ ԳՈՐՏ

Անհաշտելի ցանգ ՚ի պայքար
Վասն վարէին Մուկն եւ Գորտ.
Խնդրէր ոչ ոք՝ իրաւարար
Կալ ՚ի նոսա կամ միջնորդ:

Մ՚ին պինդ պնդէր՝ թէ քաջանդամ
Իմ՝ է երկրիս ջրերայ վայր.
Եւ միւս՝ նըմին փաստ հակառակ
Ի դէմս ածէր, յախորժայր:

Մարտեա մինչդեռ առ լըծափամբ
Վնամ քան բըզզամ ՚ի կռուի.
Չ՚երանելին, անդր իրաւամբք
Վասողն յանկարծ էջ Արծիւ:
Եւ, զերկուսին յիւրն արկ ՚ի ճանկ.
Նէր սասաց եղ կռուին յանգ:

---

Եւ՝ զի իրաւ կամ անիրաւ
Վատափոխակ այր յառնէ.
Բայց հանակ նոցուն դատից զբրաւ
Յանկարծահաս մահն առնէ:

# Խ

## ՍԱՐԴ ԵՒ ԾԻԾԵՌՆ

Տեսեալ Սարդի՝ զի Ծիծառն
Օդակատար վեր 'ի վայր՝
Ճանճըս կըլեալ բիւրաւորս,
Զիւրն բացաւէ ճարպեղ որս.
Եդ 'ի մըտի՝ առ 'ի մըրէժ
Հաւուց ըղնա ջամբել զէշ ։

Չըգեաց մանծոյց ըզվարմ՝ իւր
Որմ՝ 'ի յորմոյ պի՛նդ և ամո՛ւր։
Այլ զիտէր՝ ի՛եր 'ի փորմին
Թակարդեցայն թըռչնամին։

Սակայն, աւա՜ղ, ո՛չ որպէս
Կարծէրն՝ այն յանգ էր հանդէա։
Զի անգղ իջեալ մերձ ընդ մերձ
Սաւառնաթեւն օդահերձ,
Սեւգին այնպէս թափ էանց
Ընդ բաղմաւէջն այն ընդ ցանց.
Զի և հէրն իւկ տատայնանկ՝
Ճարտարն 'ի դաւ և 'ի մանկ՝

Ճա՛ց ընդ վեմին հարեալ փըշրեց.
Զիւր վըճարեաց դաւրն չու՛նչ ։

Ը՛նդ հըզօրին մի՛ երբէք
Վըրաիր, ո՛ մարդ, գալ ՚ի վէճ·
Ապ՝ եթէ ոչ՝ կարի յոյժ
՚Քոյդ մեծ լիցի զեան և տոյժ։

---

Ա՛ինդ հըզօրին քան ըզքեզ
Աըստանիցես յասպարէզ·
Ապա թէ ոչ՝ քար ՚ի գլուխ
Ճըզմիս ճըմլիս սարդին պէս։

# ԽԸ

## ՄՈՒԿՆ ԵՒ ՁԱԳՆ ԻՒՐ

Վազէր մըշակ ըղձեռ Մըկան
Ըծեալ հարուած մահաբեր·
Ըհիւ և Մուկն յորհասական
Յայն 'ի վտանգէն խուսափէր։

Վա՜շ եղկելւոյն· այն ինչ նա հիւ
Շուրջ գայր զօղէլ յիւր 'ի ծակ·
Բացուստ նըմա պարաւաղիր
Երիկածինն եղեւ Ձագ։

„Դըժընդա՛կ է, ասէր, մայրիկ,
Զի զոր չունիս առաջնորդ·
Ողջ ապրելոյ այլ քեզ ճար չէր·
Շ՛յա զեմ՝ ըղձեռ եկ ուղղորդ։

„Զի՞ չաղչափես" մայրըն՝ ձայնուն
Սաստ 'ի դէմն ած, յէ խոխոզ·
Ձես դու քան զիս սըրատեսագոյն·
Բան մի բըրդեր մեծախօս"։

---

Ե՛ որ յայլոցն 'ի բան, 'ի գործ,
Խըծրիծ յուզէ չարաչար·
Բայց զեռ մանուկ է իւրն անփորձ,
Եւ սուզ 'ի նմա է հանճար։

# ԽԸ

## ՀՈՎԻՒ ԵՒ ՈՉԽԱՐ

Յանիրաւի գանահար
Յանդուգն հովուէ լեալ Ոչխար,
Վասն հարուածոյն՝ անմռունչ
Մինչ ցըլեալին տարաւ շունչ։

Այլ հուսկ առեալ՝ զի յանդերձ
Պահծին 'ի սիրտ չըկայ խիղճ,
„Զիմ դու, այ մարդ, հիմ այդպէս
Զանձեզս, ասէ, զիս թըպես։
Ա՛ռ ի՞նչ ցասումն յիմ վերայ,
Վնեղ իւ իւիք ես մեղայ։
Կաթին ասրոյ զոր ետու՝
Զայս՝ փոխարէն տաս ինձ դու"։

„Կարկեա՛ց, հովիւն 'ի ձայն մեծ՝
Ց Ոչխարն ասէ գանածեծ,
Կարկեա՛ց լռւռ լեր, զի քո չէք
Ոչ մ'իրաւունք հանել ծիկ։
Ո՞չ քոյդ սուղ կեանք դուզնաքեայ
Յանդ 'ի յիմում բոլին կայ։
Պա՛հ լեր, այ հէք, անարդարուն,
Պա՛հ լեր, զի դեռ կըրնաս շունչ։
Թէ այլ, գիտա՛, շատ խօսիս,
Պանակ 'ի քոյդ շողայ մեղ"։

Մի՛ գըրո յիշեր զերախտիս՝
Այրն ժանտի, զի չօգտիս։

# ԽԴ

## ԳԵՂՋ ԺԱՌԻԿ ԵՒ ԴԻՈՍ

Գնայր գեղջուկ բեռնաբարձ
Զիւր վարելով բղայլակ·
Գնայր աջող, այլ անկարծ
Դէպ պատահեաց ձախողակ:
Յանցս առուակին՝ սայլաձիգ
Խոր խրրեցան՝ կառեան ձիք:
Շինականին զայն տեսեալ՝
Թող բղձիանն և բղայլ:
Հեծէր, կոծէր,
Զիւր ծունկ ծեծէր,
Գոչէր ուժգին առ Դիոս·
„Մի՛ զիս թողուր յայս 'ի փոս“:
„Անմիտ, զի՞ կաս ձեռն 'ի ծոց,
Հայրըն ասաց աստուածոց,
Հո՛ր նախ հար դու բղձիւղ, ո՛ն
Եւ սայլակիդ տուր մղոն:
Ես իսկ ապա յօգըն քեզ
Ժամանեցից փութապէս“:

---

Եթէ չիցեն յանձնէ ջանք,
Զո՞ր է առ Տէր աղաչանք:

# ԽԻ

## ԱԳՌԱՒ ԵՒ ԱՂԱՒՆԻ

Այն ինչ թայթաթուխ թռուցեալ Ագռաւ՝
Պանիր 'ի բերան յոստ ծառոյ թառաւ,
„Բ՜հ, պա՛րոն Ագռաւ, գոլուստ քո բարեա՛ւ"
Ձայն երարձ Աղուէս, եկաց զառաջեաւ:

„Ո՞ւր էիր ցայսօր, աստ, ո՛վ եղբայր,
Ընդ ո՞ր վայրս անցեր, կամ հասեր ցո՞ր վայր:
Վկա՛յ են երկինք, զի յանմխիթար
Ընկղմեալ 'ի սուգ՝ լայի անդադար:

„Առ անձուկ սիրոյդ՝ յայս կոյս և յայն կոյս
Թափառեալ՝ անկայ 'ի խոր տարակոյս:
Թէ քո չէր եկեալ՝ հիւծէի անյոյս,
Ի խաւար դառնայր օրիկս իմ և լոյս:

„Այլ փա՛ռք Աստուծոյ, ողջ ընդ քեզ տեսի.
Բայց անայշ տեսիլ՝ նո՛ր ինձ ետ ոգի:
Է՜ հէ՜ հէ՜, զի՜նչ այս . . . զարմանք զիս ունի.
Փոխեա՛լ ես, եղբայր, ասեմ՝ քեզ յայտնի:

„Քանի՞ գեղալի՛ս, կրկնէր և գոչէր,
Էր սաղուանք 'ի քեզ պերճազարդ աչեր.
Ո՞ւր է Սիրամարգ, քոյն սէգ հմաստ.
Տեսցուք՝ ժպտի՞ գալ ընդ քեզ 'ի վաեր:

„Ո՞ւր Տատրակ, Թութակ, Սոխակ, Կաչաղակ.
Ի՞ր սիգան, պանծան, հարուն զաղաղակ:

Ապշեցի նոցայն պարծուկըն պարուակ
Թէ գամ մի ըղձքոյդ լուիցէ նըւագ։

„Հապա, ցոյց ըղձքեղ, լսեմ ըղձքո ձայն,
Կարկեմ զոռխայց վայրախօս բերան։
Թէ այդպէս լուես, նոքա յոխորտան.
Կարծեն՝ թէ յերկրի չեք իւրեանց նըման“։

Զմայլէր յոյժ Ագռաւ, կայր խոյ ուշադիր
Յայս բան Աղուեսուն, ՚ի գովեստ պատիր։
Ի ձայնել „ղո՛ղ ղո՛ղ“ յերգ կոկորդալիր՝
Ուռոյց ըղխածխան, անկաւ և պանիր։

„Զի՞նչ այս՝ զի՞նչ, պանի՞ր – պանրայ է նըման“
Գոչեաց խաբուսիկն, արկ զայն յիւր բերան։
„Սուտ է սուտ, սուտ, ասածս ամենայն . . .
Հաճիլ է պատուաւ քան զքոյդ խռպոտ ձայն“։

# ԽԵ

## ԳԱՐՈՒՆ

Մերձեցաւ գարնանային
Գեղեցիկ եղանակ,
Մարտ ամիս հրաւիրէ
Զերկրագործս ՚ի վաստակ:
Սառն և ձիւն հալ առնուն,
Շնչէ հողմ անուշակ·
Նոր օդոյ՝ նոր շընչոյ
Լինիմ արդ ընդունակ:
Ուրախ լեր, ով անձն իմ,
Փոխս մատո Բարձրելոյն,
Մեծացո բարձրացո
ԶԱրարչին սուրբ զանուն:
Խուծամանչ արար զքեզ
Քանդ ցըրտոյն սաստկութիւն·
Արդ հասեր ողջ առողջ
Յանձկալեդ ՚ի Գարուն:
Բնական Աջոյն գործ,
Մահացուդ, զքեզ ծանիր·
Նա արար՝ նա խնամէ
Եւ զերկին և զերկիր:
Զի՞ հոգաս, պանդուխտ դու,
Զի՞ հեծես փըշտալեր·
Թող զաշխարհ՝ աշխարհի·
Ի զքո յոյս յԱստուած դիր:

# ԽԶ

## ՄԱՅԻՍ

Մայիս Մայիս, որպէս Եթեր
　　Քեւ ցուցանէ պայծառ օրեր։
Սիւգ զով 'ի զով կենդանարեր
　　Քաղցր 'ի ցօղէջ մաքրէ դայեր։
Ոգի յիս նոր, եւ շունչ նորոգ,
　　Զի անց ժամդ ցուրտ, չէք Յուլեան շոգ։
Խուծեցէ մի՛ զիս վաղուին հոգ...
　　Զինչ 'ի վաղիւն, գիտէ ո՛չ ոք։
Ռամից ճռնճղոց դայլայլքն անոյշ
　　Ձ՚ն - Միշտ օրհնել ածեն ինձ յուշ։
Երեւուն շող 'ի գոյն մեղոյշ
　　Գեղերփնէ զվարդ փթթեալ յիւր փուշ։
Յայգուց, անձն իմ, էջ 'ի պարտէզ
　　Փնջել նարգոս, շուշան, նարգէս·
Էջ նիստ մինչեւ 'ի փափկիկ սէզ·
　　Հանգիր 'ի նինջ... չէք ոք ընդ քեզ։

# ԽԷ

## ՃԵՄ Ի ՊԱՐՏԻԶԻ

Միջօրեայն սաստկատօթ
　　Փրչէ հողմ մահահոտ։
Այրեմ արդ առ ջրեզերբ
　　Զովարար շնչել զօդ,
Նրգեսով՝ լեռագերկ
　　Ի ծառոց քաղել միրգ․․․։
Բախտութիւն իմ այս է.
　　Տրտմութեան հատցին կերբ։
Ափսոս, զի տարապարտ
　　Զիւր ըղձեանս մաշէ մարդ
Յերկս 'ի հոգս՝ իբր սատայն,
　　Զոր չըքնան հիւսէ սարդ։

# ԽԸ

## ՍԻՐԱՄԱՐԳ

Մտեալ յայգին՝
　　Միայն շրջիմ,
Սիրամարգին
　　Սիրով զմայլիմ։
Դ՛է, Սիրամարգ,
　　Սաւառնաթեւ.
Բամեացին պարք
　　Թռչնոց ըզքեւ։

# ԽԹ.

## ԱՐԵՒՆ Ի ՄՈՒՏՍ

Արեւ Արեւ,
Երթմա՛ բարեւ,
Ամլ Ահն ու Հոյն
Պատեն զինեւ:

Գնայ՝ հա Գիշեր
՝Նրսեմաստուեր՝
Ի թուխս համակ
Թօղել զայեր:

Ե՞ն են որ մինչ
Յելս քո, 'ի նինջ՝
՝Օրնդին մահու
Թեւեան 'ի մահիճ:

Աչք իմ՝ տակայն
Յանդ քոյդ ցանկան
Վառ 'ի փառեալ
Վ՝եհ երեւման:

Յանկոխն 'ի վայր,
Ասեն, սրավար
Սահեալ՝ 'ի քէն
Փախնու խաւար:

Օ՛ն ապա չքյա
Ի Մաւն էջ մուտ,
Մ՝ուռ՝ զարամուք
Յել զամբոց կոյա:

# Ծ

## ԶՄԻՒՌ՛ՆԻԱ

Ե՞րբ ինձ ցուցես, ըղձունիս,
Երկիրն ըղձոյդ նուաճանդիսա:
Ուսո՛ղ, ՚ի քէն կամ ՚ի բացեայ,
Ի չէն թէև յարձականիստ:

Ի քեզ ծընայ, ՚ի քո՛ւմ ծոցի
Սընայ, հասի յառոյգ ՚ի տիս:
Քեզ, շարժարանդ իմ օրոցի,
Զօնել փութամ սուղ դըրուատիս:

Քանի՛, գիտեմ, հեղահնչուն
Մայիսն ՚ի քեզ շընչէ Զեփիւռ:
Յասկեներշող շող Արևուն
Ծածանէ ծով զալիքն ՚ի ափիւռ:

Զո՞յր ոչ մերժէ սըրտի զթախիծ
Կապուտերանդ Դաշտիդ [1] ծիծաղ:
Որ յիւր պըտոյտ ոլորագիծ
Մերթ ծըփծըփայ, մերթ կայ խաղաղ:

Ընդ բազմանիստ նաւք շար առ շար
Գեղայօրէն պարզեն Միգնոն:
Ի ցունց երգոց փանդըռնահա՛մ
Նաւաստք պարեն, խըմբին ՚ի տօն:

---

[1] Ծով:

Ո՞ւր ինձ ո՞ տայր թռուչս ՚ի թեւ՝
Երանեալ, ՚ի տես գալ հանդիսիդ:
Երանեալ անձնչամ, չհիցեմ թէ և
Ոչ Նեղոս, և ոչ Ասիդ [1]:

Ընդ քոյդ պըճնէ քաղաքածայր [2]
Հուրք ծառաստանի ազարթաղեղ.
Ուր տոս յարոյ ծիծռունքն ՚ի ծառ
Սանուն, երգեն քաղցր ՚ի գեղգեղ:

Զարս՝ ըղկանայս ածէ ՚ի գրոս՝
Կամուրջն ՚ի նմա կամարաչէն,
Ուր նոճ, ուռի, կաղամախ, սօս,
Յանոյշ փըչիւն հողմոյն շրըշեն:

[1] Անուանք երկուց գետոց ՚ի Ասիա Ցերոյ (տե՛ս 13):
[2] Զվայրն [illegible] ՚ի Տաճկաց Քեմեր - ալթը կամ Քեմեր - տիպի:

# ԾԱ

## ՁԱՅՆ ԲՂՁԱԿԱՆ

### ԱՌ Մ. Մ. ՊԷՑ

Պայազատ Իշխան, յո՛ր վայր, ո՛չ գիտեմ,
Ընդ լուրջ կամարաւ գընաս տարագէմ.
Կառաչօ՜ աղերսք 'ի Զայգս՝ օդաթեւ,
Թէ յանդրընդասայր Լատո տաղապածեմ։

Ո՛ղջ եր ուր իցես, այլ ես ըզՊեռլին
ԶԱստուած մեծ օրհնեմ, ուստի փարելին
Վռո հաս ինձ Յորդոր յերգել զՂուկայեանն [1],
Յայս արգեանց 'ի լուր քո միտք զմայլեսցին։

---

[1]) Զի նամականն 'ի մայրաքաղաքին Բրոսսայ յորդորէր զ.Բեր-բաղն Մեհիկեան Նորա՝ քաղաքացիցն Պայազատն (յամին 1838) յա-տարբերաց անէր ,,զՊայազատն Պասկեւայ'', որոյ այժմ մահն մե և էին Էգարա 'ի Խոմբարդի։

# ՆՈՐ

# ԱՌԵՂԾՈՒԱԾՔ

## Ա

### Ի ՏԱՊԱՆ ՆՈՅԻ

*Նաւապարկեան կառուցաւ տուն*
*Յարդարագործ 'ի ձեռունւոյն·*
*Զամ մի յաղեաց վերայ ճեմեալ՝*
*Եպ' անշարժ կայ 'ի լեառն Հաստատուն:*

## Բ

### Ի ՄՈՎՍԷՍ

*Ան 'ի ջրոյ մարմնով անթաց·*
*Յապաւաժէն վտակ յորդեաց·*
*Բազմաց ընդ ծով յառաջարաց*
*Իբր ընդ ցամաք շաւիղ հորդեաց:*

## Գ

### Ի ՅՈՎՆԱՆ

*Յանդընդախաղ ձկանն 'ի փոր*
*Եկաց, աւեն, հիւր ցերիր օր·*
*Յանրանեղէն 'ի բերանոյն*
*Եղօթք շրթանց եւ բանաւոր:*

# ՃԻԳ

## ՏԱՊԱՆԱԳԻՐՔ [1]

Ա

Էկ մեզ և դու, մահկանացու մարդ,
Ընդ ոտնորածինս վայր շիրմազարդ.
Ուր այրն ազնիւ՝ բարուք համեստ,
Ի գիծ տառից ճարտարարուեստ,
Զիւրն հողեղէն ըզյարկ եթող,
Զի որ հողն էր՝ դարձցի 'ի հող:
Սակայն հոգին դարձաւ անեղծ
Առ Էնն անմահ, որ զնայն ըստեղծ:

Բ

Այն ինչ իմ՛ նոր ծաղկէր հասակ
Քաղցրագոյն ինձ ուսման վաստակ,
Այլ չեւ զնորուն առեալ ճաշակ՝
Ճաշակեցի զմահուն բաժակ:

---

[1] Է՛ տեսանել զՏապանագիրս 'ի Գերեզմանատան Հայոց Մոսկուայ, դամբարանին 'ի տապանաքարին Ս. Բ. Սարաֆեանցն Հայկական գեղարուեստեան, և շիրիմին 'ի տապանաքարին աշակերտի ուսման Լազ. Ճեմարանի՝ 'ի մայրաքաղաքս փոխմանելոյ:

# ԾԻ

## ՀԵԾ

### Ի ՎԵՐԱՅ ՇԻՐՄԻ ՎԱՂԱՄԵՌԻԿՆ ԴՍՏԵՐ

('ի գերմանաց քերթողէ ուլանդէ)

Ահա՜ երկինք սուգ ըզգենուն
Ի գիշերիս քող սեւաթոյր.
Յերկրի տիրէ խոր լռութիւն.
Հեծէ Լուսին յիւր տիպ արխուր:

Հարից և ես արդ զիմ քընար.
Զի և բնութիւնն ինձ սըգակից՝
Փութայ 'ի թուխ պատել խաւար
Զերկնից ըզծիրն ըզջահակից:

Ըստ առընթեր խաղաղ շիրմիս
Հեծեծեցից ես անմըռունչ.
Զի և համակ գեղաւ 'ի յիս
Սիրտ իմ, հատաւ 'ի սպառ և շունչ:

Թէ գեղանւոյ իմում դըստեր
Ըստ Ճահապետք եստուն տեղի.
Ըստ և աչք իմ 'նըման աղբեր
Թացցեն զերկիր 'ի ցող աղի:

# ԾԵ

## ՄԱՆՐ ԵՐԳՔ

Ա

Տօնէ Թուստաստան զեւր Հազարամեակ,
Հազարաց եղեալ հզօրաց յաղթող ։
Նըմա՝ մըշտընջեան փառաց յիշատակ՝
Հօրամոյն յորդւոց պերճ կանգնի կոթող ։

Բ

„Յարեա՛ Քրիստոս" կանանց դասուն՝
Պատգամաբեր Զուարթունն ասէր:
Մի խընդութեամբ և Ձեզ ըզսոյն
Որդ աւետել փութայ Մըսէր:

Գ

„Յարեա՛ Քրիստոս՝ միշտ կենդանին
Աստուածութեամբ" Հրեշտակն ասէր:
Ըզնոյն և Ձեզ արդ խընդագին
Ասէ սըրտիւ՝ Նըստոր Մըսէր:

Դ

Այլոյդ համբոյր, ո՛ Հայր Թաղէ,
Լուիբելով կաթողին,
Նո՛ր Ձեզ կազմեն արդ աւետէ
Հոգւոյն ՚ի Ձէնջ անմեկին:

Ե

Ձեզ երջանիկ կեանս ըղձանամ,
Ո նորհաւորեալ ըզնոր զայս ամ:

"Շնորհաւոր տարիս լիցի"
Կեսարացին Բարսեղ ասէր.
Եւ Ձեզ նորուն անուանակցի
Ընդնոյն ահա ասէ Մըշէր:

Զ

Նոր ահա օր, նոր և կաղանդ,
Յոր էին ըղձեղ արդ հասոյց.
Ձեզ նորեացի կեանք անվըկանդ...
Նոր Ձեզ ահա Օրացոյց:

Է

Բո՛րէ, զնորդ աստեղաց պար
Ջահազարդէ զերկնից կամար....:
Դ՛է, գիտեմ, սոյուն Հաստիչ,
Ընտես 'ի մէնջ Տէր, կառավար:

Ը

Լուսին, այսօր էր կիսադէմ՝
Կիսաբոլոր երեւիւ:
Հայել 'ի քեզ ոչ հանդուրժեմ...
Կիրք արրամածին տիւեն յիս:

Թ

Քանզի ոսկի շատ չըգոյ իմ,
Քեզ ընծայ'բեր լինել կամիմ՝
Ի սոյզ քառեակ զայս գըրելով
Յանուն քո՝ բան, ո՛ Քըրիլով:

Ժ

Ի գործ ըղձքս դիջիր զարուեստ
Քա՛ջ նըկարել բըղխածուխ,
Ով զարժանին ասցես զովեստ,
Փառաց պըսակ 'ի գըլուխ:

ԺԱ

Գիշերն 'ի բուն յիմ առաստաղ
Մերկանք պարէն յերդ և 'ի խաղ:

ԺԲ

Մեն 'ի խրցկան նիստ.
Ընդ գրոցես հանգիստ:

ԺԳ

Ի Մեծն ահա յոր պահոց
Խումբ արարեալ խուռն և հոծ
Դասք երիցանց ւերէցփոխ՝
Դպիրք հանդերձ, մեծ ամբոխ,
Յարեան եկին փութապէս
Առ Արքայն Տէր Ներսէս,
Շնորհաւորել զԸգու հայց,
Զոր մաքրութեան 'ի մեղաց·

ԺԴ

Ի Ճեմելեան իջի Պերգայ [1],
Ի տես շինին որ անդրն կայ·
Բայց մինչ 'ի մուտն եմուտ արև ,
Ընդ և զբօսանքն այն կարճատև:

ԺԵ

Ընցցէ և որ նոր առաջիդ կայ տարի·
Ըստ. Միշտ —էին միշտ բանն անանց կատարի:

ԺԶ

Ըգքաւութեղ ոսկեճաճանչ
Ըկամբք յեռեալ ջինջ փայլուն,
Ընկալ , ո Հայր, 'ի Քոյդ 'ի լանջ
Արբել 'ի փառս խաչելոյն:

ԺԷ

Մի՛ զիս համայն, ո բանախոյզ ,
Ընդ չափաւոյս զրբեսջիր·
Զի թէպէտ մեծ չունիմ ողկոյզ ,
Սակայն մանրիկ տամ քեզ ձէթ:

---

[1] Որ է Քէշիշէ քաղաքէ:

ԺԸ

Ձե՜ւ քաղեցի 'ի քո վայելս,
Ո՛ վերծանողդ Հայրենասէր . . . :
Թէ քեզ՝ 'ի սոյն իմ վաստակելս
Հաճոյացի, յիշեա՛ զՄոսէր։

ԺԹ

Ո՛ որ իբրու նոր ումն առ մեզ Մեկենաս,
Որոց 'ի գիրս երկասիրեն՝ ձեռըն տաս,
Ընկա՛լ սիրով զոր իղձ էր քո անյապա՛ղ
Տալ 'ի մամուլ, ըղձախընծայս Ճըռատող։

Ի

Յաւանէ՝ ոյր չէք 'ի դէմն ամօթ,
Փախի՛ր 'ի բաց, մի՛ գըներ մօտ։

ԻԱ

Եա՛լ 'ի ծախոյս բազմըւիզդ
Համար խըղդըէ ծըչգավիզդ։

ԻԲ

Մուսիքարը խմթիհան
Խաւեր հըմար, դադա կիւշ։
Պա՛ն հալաէ տիր պու ճիհան.
Ալի՛թ, էյ պիւլպիւլ, կէօյէ՛ տիւշ։

# Ծ. Զ.

# ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ ԲԱՌԻՑ

### ԱԲԳԱՐ

Մեծն Արշամայ որդի բդգօն լեալ Աբգար,
Յուզղախօսիցն 'ի ձայն կոչեր Աւագ Այր [1] *:

### ԱՐԵՂԱՑ

Տրտմազգեցիկ զոմըն տեսի Արեղայ,
Որ քանքարտայր, թէ աշխարհի խոժ Եղայ·
Եւ մերթ բացգիւտ յանձն հեղեալ դառնապէս,
Չիմ՝ Աղ 'ի սոյն, ասէր, Եղայ յաշխարհէս:
Մակայն այլ որ յանձնապատան կայր՝ պանծայր,
Թէ ես՝ ոչ Աղ, այլ՝ Աք Եղայ, որ է Հայր [2]:

### ԱԲՐԱԱՄ

Ազգաց բազմաց Աբ (որ բաս մեզ՝ Հայր) Երամոյ,
Զանունն իմս գեահապետին Աբրաամու [3]:

### ԱԳԱՂԱՂ

Ագաղաղ ընդ Աշտ·
Առնէ Աղաղակ [4]:

### ԱԿՈՌԻ կամ ԱՐԿՈՒՌԻ

Յորին Մասեաց՝ ուր գեօղն է մեծ Ակոռի,
Ասեն թէ 'Նոյ այգի տընկեալ Արկ Ուռի:

---

* Թուաբանշանաւք այբուբէն, որոնք և այլոցն որ չինէ՝ ենէ չքացաւորութեանն 'ի ձեռք չորս մասինն:

Առ ոտամբ Մասեաց գեօղ է Արկուռի,
Ուր Նոյ զառաջինն Այգի գործեաց Որթոյ [5]:

ԱՆԿՈՂԻՆ

Մինչ մտանես յԱնկողին,
Անկէր վերայ քո յՈչէն [6]:

ԱՆՈՒՇԱՒԱՆ

Զընտաշխարհին այր առատածոց մեծատեր,
Այն որ ընդ մէջ գեղջկաննակիանն ած ուսեր,
Անուշաւան հանդիպեցաւ քաղցր անուան,
Զի և էր իսկ բարուքն Անոյշ և Հաւան [7]:

ԱՊԱՇԽԱՐԵԼ

Մեղա ինչ գործել նախ, Ապա Աշխարել,
Այն իսկ ճշմարիտ է Ապաշխարել [8]:

ԱՌԻՒԾ

Կենդանեաց այդ Առնէ Հեծէ
Զինչ և որսայ, զի Առիւծ է [9]:

ԱՍԻԱ

Զորից մասանց աշխարհի
Է՛ առաջին Ասիա,
Որ բաւ ամենից համարի
Զանուն առեալ յԱմասեայ:
Էն և այլոց կարծիք այլ.
Ասեն՝ յանուն աղջին Օ.,
Կամ յԱ. ձայնէն անուանեալ
Զերկիրն: Ո՞ւմ դու հաւան գաս [10]:

ԱՍՏՂ

Այն որ յերկինս վերայ ամպոց Ոստեղ է,
Չէ արեգակն, և ոչ լուսին, այլ՝ Աստղ է [11]:

ԱՍՏՈՒԱԾ

Որ յոչէից բաւեղծ բզմեզ և յԱ՛ւր Ած,
Ամենակալ Տէր ճանաչի և Աստուած.

Զի ոչ միայն զորս առ մեզ կան աստ առ աստ,
Այլ համբուն իսկ ըզտիեզերս նա Հաբեթայ [12]:

ԱՐԱՐԱՏ կամ ԱՅՐԱՐԱՏ

Զօրու ծանու մինչ Շամիրամ
Կաթոտըն գայր յԱյրարատ,
Մերն անդ Արայ վիրօք յայնժամ
Ցիւր 'ի մարմինն Արալեզ [13]:

ԱՐԲՇԻՌ

Գոյնեմըն այր, որ և Արբշիռ,
Որդւոյն Արբոած է անկըշիռ [14]:

ԱՐԾԻԻ

Արիաբար ըզփորն Արծիւ
Յափըշտակեալ՝ Արար Ծէր Ծէն [15]:

ԱՐՄԵՆԱԿ

Անդրանիկն Հայկայ ծընունդ՝ Արմենակ,
Արութեամբն անզոյգ՝ Այր էր Մէյնակ [16]:

ԱՐՏԱՍՈՒՔ

Ներքին ցաւոց՝ է Արտասուք
Նըշան, իբրու Արտաքին Սուգ [17]:

ԱՐՏՈՒՏ

Շինական ոք զԱրտուտ
Քանքարայր թէ զԱրտ Ուտէ [18]:

ԲԱՂԷՇ

Մօտ 'ի քաղաքն 'ի Բաղէշ
Պաղած, սանն, գըտաւ Էշ [19]:

ԳԱԶԱՆ

Թէ 'ի ժանեղըն մօտիցիս 'ի Գազան,
Գըլդէ ըզքեզ, զի 'ի բընմէ է Գազան [20]:

ԳԻՇԵՐ

Որ ոք յանկըյս գընայ ուրեք Գիշերի,
Զանձնէ բարւոք, զի պատահէ Գէշ Իրէ [21]:

### ԳԻՐ, ԳՐԵԼ

Զամբն տեսեալ՝ զի եղեգամբ թուղթ քերէ,
Ասացի՝ բա՛ ,,Գրչիր է նա, Գիր Գրբէ՚՚ 22։

### ԳԱԳԱՂ

Գէ մուեալն 'ի Գագաղի
Իբր 'ի յարկեղ գողցես Գաղջ.
Եւ որ 'ի մէնջ առի Գագաղ,
Ճշմարտութեամբ է Գէտաղ 23։

### ԳԱՐԱՆԱՂԻ

Գաւառ Հայոց Գարանաղի՝
Գարանս յինքեան ունի Աղէ 24։

### ԳՐԱԽՏ

Եդեմականն, ասեն, Գըրախտ
Վայր երջանիկ էր և Տըրախտ 25։

### ԳՐԳԱՂ կամ ՏԱՐԳԱՂ

Այնու՝ զոր Գըրգաղ կոչեն կամ Տարգաղ,
Զխառնաթանն 'ի քոյդ Գէր կամ Տո՛ր 'ի Գայլ 26։

### ԵՐԵՒԱՆ

Ջուրցն հեղեղաց 'ի նըւազել՝
Նախկին այն վայր յերեւան ել,
Ուր արդ քաղաքն է Երեւան՝
Կարծեալն յայլոց Երեւանքաղան։

---

Ի տեղի տալ ջուրցն 'ի հողոց՝
Այն ել նախկին վայր յերեւան,
Ուր կայ հիմնեալն յայժ 'ի վաղուց՝
Քաղաք Հայոց Երեւան 27։

### ԵՐԻՏԱՍԱՐԴ

Քեզ չէ՛ արժան կոչումն անուն Երիտասարդ,
Եթէ ամաց Երէց Տասանց իցես ո՛չ Մարդ 28։

## ԵՐԿԻՐ

Ըսեն, եթէ Երբեր Կերէ
Որ ինչ 'ի յայտ է 'ի Երկրէ:
Իսկ այլք Երկրոր, ասեն, կայ Իր·
Ծով և ցամաք ասա 'ի Երկիր [29]:

## ԼՈՒՍԻՆ

Գործեաց ամէն փառն Լուսնի,
Թէ իւր ուրոյն նա Լոյս Որոյ·
Բայց տեսանեմ ես ընդ լուսին՝
Մերթ 'ի Լուսոյ թափուր և Սին [30]:

## ԼՐՏԵՍ

Ո՛ն քաղաքէ դու 'ի քաղաք, ո՛ Լրտես,
Երթ, գաղտաբար զայլոց գաղտնիս Լսէ և Տես [31]:

## ԽՈԶ

Ըզգենդանիդ՝ որ ընդգետին ըրրէ Խոռչէ,
Կարծեցեր դու ոչխար լինել, սակայն Խոզ է [32]:

## ԾԻԱԾԱՆ

Իբրու Ծէր Ածեալ դու ըղԾիածան
Խմա Այս 'ի քէն մի կացցէ անծան [33]:

## ԿԱՆԹԵՂ

Բան ասացաւ զԿանթեղէ,
Թէ լայնափոր ու Կանթեղ է:
Ասաց և ոմն, թէ ուր Կանթեղ
Ըսկսեալ կայ, կայ Անդ և Եղ [34]:

## ԿԱՉԱՂԱԿ

Թռչունն անուանեալ լաս մեղ Կաչաղակ,
Ընդաւլ սիրէ Կաչ ասնել և Աղաղակ [35]:

## ԿԱՏՈՒ

Ի՛ կենդանի բնութեամբ Կայծեալ կամ Կայծուռ,
Մըկանց դժնեայ դահիճ, այն իսկ է Կատու:

---

Ի կենդանիս յաւէտ կատուն
Ընտանի է, զի կայ 'ի Տուն [36]։

### ԿԱՔԱՒ

Ի Հայս կոչող գրաւնի Հաւ,
Զոր և 'ի դէպ կոչեն կաքաւ [37]։

### ԿԵՌԱՍ

Ըզբաղն անոյշ ուտ դու և կեր և տուր․
Կեռաս է այս Կապադովկեայն կերակուր [38]։

### ԿՌՈՒՆԿ

Կայ թռչուն ինչ, որ մարդոյ յՈւնէն
Կռու կռու ձայն տայ։ Է՛ սա Կռունկն [39]։

### ԿՐԱԿ

„Շատ է“ երբէք չասէ կրակ,
Զի է անյագ միշտ և կերակ [40]

### ՀԱՄԲՈՅՐ

Բա՛ց էր 'ի բան որ ասէր, թէ 'ի համբոյր՝
Մարդկան 'ի մի ժողովք յօդին համաբուր [41]։

### ՀԱՆԴՐՈՒԱՆ

Զոմն ասէին. „'ի հանդրուան
Երթ, մնա յամբար, հա՛ն և դադարան [42]։

### ՀՊԱՐՏ

Հպարտ է որ քան զանձին բըղձայ՝ հատի
Արտաքոյ վազեալ, փքինս անամփոփ [43]։

### ՀՍԿԱՅ

Ասն յաղթ մարմնով և հասակաւ
Ի հայ բարբառ կոչի հսկայ [44]։

### ՃՆՃՂՈՒԿ

Ճռճռալիս յորժամ փոքրիկ ճընճղուկն
Ձայն յիմ լինու ճըն ու ճըռ լսելով [45]։

### ՃՈՐՈԽ

Գնա ընԹանայ ընդ Հայաստան մշտա 'Ծոր Ճորոխ,
Փիսոն անուն՝ ըստ սուրբ Գրոց, ըստ մեզ՝ Ճորոխ [46]:

### ՄԱԺԱԿ

Կապադովկ՝ քաղաք ունի ըզՄաժակ
Պարըսպօք ամուր, զոր կանգնեաց Մըշակ [47]:

### ՄԱՀԻՃ

Հիւանդըն նախ 'ի Մահիճ
Ընկաւ, ապա 'ի Մահ էջ:

---

Մահու, ասեն, քոյր է Նինջ.
Տուն երկոցունցն է Մահիճ [48]:

### ՄԱՀՏԷՍԻ կամ ՄՂՏԷՍԻ

Զուխտագընացն յերուսաղէմ՝
Ընդէր կոչեն Մահտէսի,
Եւ կամ (որպէս 'ի ռամկախօս
Լեզուի յարանց) Մըղտըսի: —
Եկամուտ է առ մեզ այդ ձայն
Յարաբացի բարբառոյ,
Բընիկն հընչմամբ՝ Մուգադդէսի:
Մինասիպին * զայս ծանո՛ [49]:

### ՄԱՆԱՆԱՂԻ

Ի գաւառին՝ որոյ անուն Մանանաղի,
Մանանայն գտանի՝ ազնիւ կայ հանք Աղի [50]:

### ՄԱՍԻՍ

Յան Ամասեայ մեր նախնւոյն
Եւ երկնաբերձն էր Մասիս.
„Ո՜ լեառն, յաւերժ յիմ անուն
Պանծա, զի դու իմ Ասես [51]:

---

* Մխնասիպ կամ Մինասիպ՝ է նոյնպէս յայն արաբական, որ նշանակէ պատշաճաւոր, պատկան, վայելուչ:

## ՄԱՐԱՆԴ

Քաղաք ’ի Հայս է վաղեմի, անուն Մարանդ·
Նու որ մարդկան երկրորդն էր Մայր՝ թաղեալ կայ Անդ [52]:

## ՄԵՂՔ

Գաղջ՝ ըստ Հոգւոյ, այլ և Մեղչ
Մարմնով, ըզմարդ առնեն Մեղք [53]:

## ՄԾԲԻՆ

Սանատրուկ, մերն՝ սանեն՝ արքայ
Մինչ նոր կերտէր ըզՄըծբին,
Ըսպառեցան ոսկիք նորա·
Յոգունց գանձուց Մըծոյ Մին [54]:

## ՄՈՒՇ

Մըշեցին զիւր զօրէ ըզՄուշ,
Իբրու զի անդ տեղայ Մըշուշ [55]:

## ՑԱՐԱԼԻԶ կամ ԱՐԱԼԵԶ

Ի՛ կենդանի ըստ առասպելաց՝ Ցարալէզ,
Որ ըզդիանն առնու գ. քաղցից Ցոր ’ի Լէզ:
Եւ հաւանին ասել՝ թէ սա խնկապէս
ԶԱրայն մեր ըզԳեղեցիկ վէրան Լէզ [56]:

## ՆՊԱՏ

Ի՛ լեառն ’ի Հայս՝ որում անուն սամք Նըպատ,
Քա՜ջ ըստ Հընդց բան ըստուգեալ՝ Նոյպատ [57]:

## ՇԱՐԱԿԱՆ

Ըստուածօրհնութեանց որ առ մեզ մատեան՝
Յառաջնոց ’ի Հարց կոչի Շարական·
Բայց արմատ բառին՝ Շար է, և կամ Շէր,
Ըստ Գաբրիէլի: Զայս դու մի մերժեր [58]:

## ՈՍԿԵՐԻՉ

Որ արուեստաբար Ոսկւոյ է քերիչ,
Ըզնա լեզուն հայ կոչէ Ոսկերիչ [59]:

ՈՐԴԻ

Կա՛ Որ Հեզին զստոխնս բըմօր խր Դէլէ,
Զօր արդարև տապինայ Որդի է [60]:

ՊԱՐԹԵՒ

Մ՚երն առէ վ՛արդան, թէ ազգըն Պարթեւ
Յազգաց 'ի վերայ Պօռ գիրն անէ Թեւ [61]:

ՍԱՊԱՏՈՂՆ

Օձայր մի տեսի ես Յապատողն.
Ոչ Սապատէ պէս ցից էր Ողն [62]:

ՍԵՊՈՒՀ

Է՛ Սեպ յերկրէ այրըն Մանեայ 'ի վեր Ոսղ.
Ում և անուն Սեպհաշխանեալ է Սեպուհ [63]:

ՍՂՈՑ

Սրզոց անուն՝ տռ. փանթարակս է գործի,
Որով երկայն գերան կըտրեալ Սող գործի:

---

Փանթարակաց պիտի Սրզոց, զի ձողէ
Երկայն բառ չափ՝ նոյնու կըտրի և Սըղէ.
Եւ սա յընթացս չառնէ բառ մեղ քայլափոխ,
Եւ պէս Սողնոց երթայ ու գայ Սող 'ի Սող [64]:

ՍՊԱՆԱԽ

Թէ հիւանդի կամիցիս տալ Ըսպանախ,
Ըսպանանել դու ըզբանջարդ փութա նախ [65]:

ՍՐԻԿԱՑ

Օձայր յելուզակ, յայր յաղթ 'ի կողըն Սուր էայ,
Զայկեանս 'ի դէպ կոչէ լեզու Սըրիկայ [66]:

ՎԱՅՐԱԳ, ՎԻՐԱԳ

Որ 'ի Վայրէ ցանդ Աճանէ
Տուն չունելով 'ի բընակ,
Ի մարդկանէ նա իբր օտար,
Վայրագ կոչի կամ՝ Վիրագ [67]:

## ՎԱՏԱՄ

Մ՝եծարու զօրայն „Վէհս, աւէր, ձեղ Տամ
Պատուէր հրամանի՛՛ մերն հզօր վ՚ատամ 68:

## ՓԱՅՏ

Գտանեմք՝ զի փայտ, կամ որ և է կազմած փայտի,
Ժամանակին 'ի հնութենէ հնանայ փտէ 69:

## ՔԱՀԱՆԱՅ

Ե՛րթ, մեղաւոր, առ իմաստուն ոք քահանայ·
Զոր ինչ մեղար՝ լեր խոստովան, զի քաւէ նա 70

## ՔԱՆԱՔԵՌ

Երեւանայն գեօղ է հանդէպ Քանաքեռ,
Ուր նախ կայան գոլ Քանանու աւի Քեռ 71:

## ՔԻՄԻԱՅ

Բնալուծից արուեստն, ասեն, Քիմիայ
Կոչեցաւ, զի ըսկիզբն էառ 'ի Քամայ 72:

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՔ

## ՆԱԽԱԿԱՐԳԵԼՈՑՆ ՄՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԵԱՆՑ

# ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՔ

## ՆԱԽԱԿԱՐԳԵԼՈՑՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԵԱՆՑ

I

Արագ Այր՝ վերադիր անուն էր երջանիկ թագաւորին մերոյ, տուեալ նմա՝ ոչ միայն վասն հաստակազեղ տիրոջն վայելչութեան, այլ և վասն հեզահամբոյրն բարուց՝ և նազելի իմաստութեամբն լինելոյ[1]. զոր ոչ բաւելով Ասորւոց և Յունաց ըստ մերում լեզուի ուղղախօսել, ոմանք Արագայր կոչէին կամ Արէգայր, այլք՝ Արգայր կամ Արէգայր, և կէսք ևս Ալիշարէս կամ Ալաշարոս[2]: Ըստ նոցանէ ապա և Արաբացիք յիւրեանցն բարբառոյ պատշաճեցին զնմանաձայն անունս Արգալ (ըստ բուն հնչման՝ Էրգէլ), որ թարգմանի Արագ, Մեծ[3], կամ Զօր, Կորով[4]: Ի ծերածուռ բառից ատափ ծագեցաւ՝ և ապա սովորական առ մեզ

---

[1] Խորեն. ի պատմ. գիրք Բ. գլ. իդ: Յովհ. կաթող. յէջ 21:

[2] Ի Վարս Սրբոց. հատ. Ժ. յէջ 146:

[3] Չամչ. ի պատմ. Հայ. հատ. Ա. յէջ 277:

[4] Ի պատմ. Հռովմ. հատ. Ե. յէջ 487. ի ծանօթ.

և առ այլս եղև՝ Աբգարոս անուն, կամ Աբգարէս, կամ Աբգարէոս [1]:

Իսկ բուն կամ յատուկ անուն արքային՝ կարծի լինել Աղաբ կամ Իղաբ [2], և այն՝ ոչ փոքու համանականութեան արժանեօք, եթէ չծանրանայցեմք ընդունել, թէ քրիստոնէականն յօտարազգի պատմաբանից՝ որդի Մանովազայ [3], նա ինքն Աբգար իցէ արքայ Հայոց· քանզի և հայր նորա Արշամ՝ Մանովազայ կամ Մանովազաղ (գուցէ՝ Մանաւազ) ևս կոչէր յԱսորւոց՝ կրկին ունելով անուանս, ըստ Խորենացւոյն գրելոյ [4]:

2

Խաչ Նղայ, այսինքն է՝ Խաչօղ եղէ: Ի՛ ըստ բանից Լամբրոնացւոյն· որ լուեալ ՚ի Յովհաննէ աբեղայէ, թէ վարեղութեան ընկալեալ է զձև՝ յետ զքահանայականն ընդունելոյ զկարգ և զօծումն, զայս տայ պատասխանի· „Այդ յայտ է ՚ի բարբառոյ բերանոյ քո (ո՛ աբեղայ)՝ թէ խաչ եղար, և ո՛չ կրօնաւոր, միայն մօրթով ոչխարաց զմարդիկ պատրել, որպէս Տէրն ասաց [5]": Թէպէտ և այդ

---

[1] Խորեն. ՚ի Պատմ. գիրք Բ. գլ. ծ. իդ. իզ. իէ. իթ. և այլն: Շնորհ. ՚ի Վիպաս. յէջ 507 — 509:

[2] Չամչ. ՚ի Պատմ. Հայ. հատ. Ա. յէջ 591:

[3] Ցախեկ. ՚ի գիրս Դատհն. ի. և ՚ի գիրս պատերազմ. դ:

[4] ՚ի Պատմ. գիրք Բ. գլ. իդ:

[5] Ի Մեկն. Պատարագի, յէջ 48:

եղանակ խօսից՝ առաւել Հեգնական համարի Զն, քան թէ ճիշդ Աստուածաբանութիւն, բայց և յայդմ՝ սքանչելի է հեղինակին ճարտարութիւն, զի մեղմով իմն՝ զիւրոյ ժամանակի որերոյն զողի-տական կարծիսն ստգտանել գիտէ։ Յայսմանէ թուի սովորութի լեալ առ մեզ՝ զԱբեղայ որ անպիտանն իցէ, կամ անարժան և եպերելի ըստ վարուցն, իբր անարգական կոչմամբ՝ Խաբեղայ անուանել [1]։

—Աղ Եղայ, իմա՝ ՚ի բաց կացի, մեկնեցայ, հրաժարեցայ ուխտիւք կրօնաւորութեան՝ յաշխարհէս կամ ՚ի կենցաղոյս հեշտալեաց։ Այսպէս ըստուգաբանէ հեղինակն հին տպագիր Բառարանին Հասարակ անուանց։

—Աբ Եղայ։ Աբ՝ է կրճատեալն բառիս Աբբայ, որ ասորերէն՝ Աղղօ տաի, քաղդէարէն՝ Աղ, աբաբերէն՝ Իղ կամ Իղղա, և առ մեզ թարգմանի Հայր [2]։ Սոյն այս բառ է՝ որ անդրադարձութեամբ տառից՝ Պապա լսի առ Տաճիկս։ Ըստի ծագէ և Պապդ անուն առ մեզ, և Բաբբօ՝ առ Յոյնս. Իսկ Եղայ՝ է եղական առաջին դէմն Եղանիլ բայի Մնացեալ Կատարեալն, ըստ հասարակացն սովոր բարբառոյ, ՚ի գործ ածեալ դուն ուրեք և ՚ի գիրս Նախնեաց։ Ըստ այսմ ստուգաբանեալ Աբեղայդ

[1] ՚Ի Ցայսմ ՚ի Փետր. 12, ՚ի Հոկտ. 28։

[2] Մարկ. ժդ. 36։

անուն՝ նշանակէ զՄիանձն՝ Հայր եղեալ կրօնաւորութեամբ: Սակայն զնոյն իսկ նշանակութիւն ունի և Արաբական ձայնս Աբբէ, որ առանց 'ի ըստուգաբանութիւն ձգելոյ՝ ըստ տառադարձութն կանոնի փոխի 'ի Հայումն՝ յԱբբեղայ, որպէս և Աբբէն կամ Իբբէլն և կամ Աբբէլն* փոխեալ գտանի յԱբբեղայ[1]:

3

Աբ Աբրամոյ: Աբ՝ ըստ վերագոյնդ ճառելոյ՝ նշանակէ Հայր, և Աբրամ կամ Ռամ՝ առեալ 'ի Պարսկականէս Ռէմ կամ Ռէմէ, ցուցանէ զբազմութիւն մարդկան կամ այլոց կենդանեաց 'ի մի վայր գումարելոց: Իսկ զի Աբրամ հանդերձեալ էր Հայր լինել բազմաթիւ ժողովրդոց՝ որ ապա Իսրայէլացիք անուանեցան, պատշաճապէս առեալ նմա անունս այս, որ ծագեալ 'ի բարդութենէ նախայիշատակելոցդ բառից[2] (որք սեպհական են և Եբրայական լեզուին), նշանակէ Հայր ազգաց, ըստ սացելումն 'ի Տեառնէ „Եղիցի անուն քո Աբրահամ, զի Հայր ազգաց բազմաց եդի զքեզ[3]“:

Միտ դնել պիտի և այսմ, զի սովորական և յա-

* Այս անուն է միոյ 'ի քաղաքաց Ասորւոց աշխարհին:

1 'Ի Բառար. Յատուկ անուանց: Զամչ. 'ի Պատմ. Հայ. հատ. Ա. յէջ 73:

2 'Ի Վարս Սրբոց. հատ. Գ. յէջ 2, 7:

3 Ծննդ. ԺԷ. 5:

ձախնալ գրչութիւն այսր անուան 'ի Հայումն` է Աբրահամ. ուր բաղաձայն տառդ Հ յաւելեալ է լոկ առ փոքր մի թանձրացուցանելոյ զյարակից ձայնաւորն: Զայս յաւելուած ախորժէ ունել Հայ լեզուն ոչ միայն ընդ մէջ երկուց ձայնաւորաց, այլ և 'ի սկզբան բառից, մանաւանդ յատուկ անուանց յօտար լեզուաց առելոց, որպիսի են` Բահաղ, Բեդհեզդա, Բեթղեհէմ, Կահաթ, Փենեհէս, Հաբէլ, Հագար, Հեբրայեցի, Հեղիաս, Հերովդէս, Հռովմ, Հռաքէլ, Հռութ, և այլն:

4

Այգ — Աղաղակ: Յայգուն աղաղակելոյ թուի առեալ զանուն Խօսնակն հաւ` զոր Աքաղաղ կոչեմք, ըստ ստուգաբանութեան Հօրն Ինճիճեան[1]: Եւ չէ ինչ փոյթ, թէ նաև Լատին լեզուն` նմանաձայն անուամբ` Կալլոս կոչեցէ: Մեք զմերն ստուգաբանեմք` զայլոցն այլոց թողեալ:

5

Արկ Ուռ: Ուռ` աստ չէ պարտ իմանալ ըզտունկն Ուռենի, Այլ` զՈւռ, այս է` զԲարունակ որթոյ. զի 'ի նոյն միտս Հայր Մագիստրոսին բան` ըստ աւանդութեան. «Զորթ տնկեալ տանն (Նոյի) յԱկոռի, և ստուգաբանեն` Արկ Ուռ[2]»: Իսկ

[1] 'Ի Հնախօս. Հատ. Գ. յէջ 21:

[2] 'Ի Թղթին առ Հնձայսին Գրիգոր:

յաղագս որթ կամ այգի անկելոյ ՙՆոյի յետ ելիցն ի տապանէ 'ի մերում աշխարհի՝ վկայէ և Ս. Գ.իրն յասելն „Սկսաւ ՙՆոյ, այր հողագործ, գերկիր գործել, և անկեաց այգի [1]“:

6

Նշէ — Ողէն, իբր Նշէ—ան Ողէն կամ 'ի վերայ Ողէն. զի „Յանկողնի լինի, ասէ Խնձիճեան, անկանել և պարզել ողին ընդ երկայն 'ի գետին առ 'ի հանգչել [2]“:

Զ Ա յարգանայն բան զայսմանէ՝ ունիս տեսանել սորին 'ի թիւ 48:

7

Նոյշ — Անուշ: Մեծ դոյզն ինչ տեսանեմք մեք ճահճարութիւն 'ի ստուգաբանութեանդ: Զի որ զչքնաղ քաջամասնութիւնսն ունէր՝ Սօսն անուանեալ Նուշաւան, ամենահարուստն մօք, շատահանճարն յիր և 'ի բան [3], յայտ է՝ եթէ հաճելի՝ սիրելի և ցանկալի ամենեցուն էր՝ համբոյր բարուքն և ընդելական քաղցր կենցաղովն, զոր և Սագխարոսին ցուցանէ բանս. „Ո՞ր Նուշաւան՝ անոյշ—խոյսն կաղմիչ և բարութեան յարդարիչ [4]“:

---

[1] Ծննդ. Թ. 20:

[2] Լեզուական Բիւզանդ. 1819 ամ. յէջ 148:

[3] Ըստ Խոր. 'ի Պատմ. գիրք Ա. գլ. Ի:

[4] 'Ի Թղթին առ Սարգիս վարդապետ: Գտա 'ի ճառագայթ. հատ. Բ. յէջ 11:

Նման այսմ է և Քառանուն անուանն ստուգաբանութիւն, զոր եդեալ եմք յԸնդարձակն գործոյս:

8

Արդ Աշխարէլ: Այսպէս ստուգաբանեալ է բգբառդ՝ Մախիաննոս վ. Արգոնց. զի Արպաշխարեն, որպէս գրէ նա, ցուցանէ զԱշխար (այն է՝ զուգ, զոյգ, զյաւ սրտի, զախտսանս կամ զստրջանս) որ լինի զկնի մեղաց կամ զկնի այլ ինչ ձախող պատահարաց [1]: Նաև թերևս յայս միտ իմանալի է Փաւստոսին բան. „Արդ աշխարէր (Արշակ արքայ) զասացեալն, խոնարհէր բուռն հարկանէր զոտից նորա (Շապհոյ), մեծապէս աղաչխարէր զգջմամբ զասացեալ բանին [2]":

Ըստ այսմ և զբառդ Արդաշաւէլ՝ որ զնոյն ունի նշանակութիւն, գտանեմք ուրեք ստուգաբանեալ Արդ Յաւէլ [3]:

9

Առնու Քէ-ձէ, այսինքն՝ յափշտակէ, զիշատէ, ծախէ: Քայի 'ի բանն Վարդանայ. „Ոչ անդէպս ինչ կոչէր (Ադամ անուանս կենդանեաց), այլ զյարմարն և զնմանն, որպէս Առիւծ՝ յառնելոյն [4]": Յայտնանէ և Խոճիճեանն՝ Առօղ և

[1] 'ի Հարտ. յէջ 96:

[2] 'ի Պատմ. գպ. Դ. գլ. ծդ. յէջ 167:

[3] 'ի Պատմ. Եմերիկոյ տպ. 'ի Թիֆլիս. յէջ 654:

[4] 'ի Մեկն. Ծննդ. ի. 19:

Ուսօղ աստուածաբանէ [1], որ զնոյն տայ միտս: Բայց կայ աստանօր՝ ըստ նորին քաջամիտ Հօրն ամե-լոյ՝ և այլ ինչ նկատելի, այն է՝ զի զգլուխ երկուց սեռից կենդանեաց՝ չորքոտանեաց և թռչնոց՝ նոյ-նատառ անուամբ զանեմք կոչեցեալ՝ սուղ ինչ տարբերութեամբ, որ է՝ Արւէծ, Արծէւ կամ Ար-ծուէ [2]: Այլ այն մանաւանդ արժանի հետաքննու-թեան երևի մեզ՝ զի և 'ի փիւնիկեցւոց բարբառ գրեն թէ նոյն և մի անուն է թագաւորին զազա-նաց, Արւէս, որ է Արւէծ [3]:

Յաւելուլ և զայս կարևոր դատիմք յորոճանս մտաց սիրաբանին, զի 'ի կազմածի անուանդ նըշ-մարին գէթ ընդ աղօտ բառքս Արէ և Ոյժ, իբրև յայտարարք յատկութեանց նովիմբ նշանակելոյն:

10

յԱմասիայ: Ամասիայ՝ որդի էր Արմայիսայ, թոռն Արմենակայ՝ որդւոյ Հայկայ: 'Ի սմանէ և յանուն սորա կոչիլ առաջնոյն յաշխարհիս մա-սանց՝ Ինճիճեան Հօրն է կարծիք [4]· ըստ որոյ և մերս այս յարմարեցաւ ստուգաբանութիւն, ոչ 'ի հաստատել զկարծիսն, այլ՝ առ յուշ միայն ա-ծելոյ: Իսկ զկարծողին բանս տողեսցուք ամբողջա-

---

[1] 'Ի Հնախօս. Հատ. Գ. յէջ 20:

[2] Ազդանակ Բիւզ. 1816 ամի, յէջ 275:

[3] Ազգիակ. Համբ. Հատ. Ա. յէջ 624. 'Ի ծանօթ:

[4] Աշխարհագր. Ասիոյ, Հատ. Ա. յէջ 5:

պէս 'ի բացատրութեան անուանս ՄՈՍԷՍ (Տես 'ի թիւն 51)։

— Օս․ Անուն է միոյ 'ի Կաւկասայնոցն ազգաց, յորմէ Ասեթայք անուն կարծի ծագեալ՝ ըստ ոմանց, որպէս Ալիշանեանն ազգ առնէ՝ նորն մեր Աշխարհագիր[1]։

— Աս․ Է՛ ձայն Արեացն (Զանդիկ) բարբառոյ[2], զոր և ունին լեզուք հիւսիսային ազանց Եւրոպայ[3], և (որպէս կանխագոյն ես ծանուցեալ եմք[4]) նշանակէ Աստուած, կամ է անուն Աստուծոյ՝ բնակելոյ 'ի բարձունս։ Ի բառէ աստի (որպէս հաւանեալս եմք), այլ ոչ յԱՍՏՈՒԱԾՆ անուանէ (որպէս ումեմն 'ի մերոցս թուեցաւ) ածանց համարին Մխիթար Այրիվանեցի և մեծն Վարդան զանունն Ասիա[5]։ Յայս և եթ ունի ակնարկութիւն և մերս ստուգաբանութիւն։ Բայց ցաւ այն է՝ զի չմարթեմք ուրեք ինչ խօսել զայսմանէ, ըստ որում և բազմահմուտ պատմիչքն զթարգմանութիւնն և եթ գնեն զստուգաբանեալ անուանն՝ լռելով 'ի

---

1 'Ի Քաղաք․ Աշխարհագր․ յէջ 53։

2 'Ի Բուս․ Համեմատ․ Բառարանի տպ․ 'ի Փեթերպուրկ յամին 1787։

3 'Ի Ծանօթ․ Պատմ․ Վարդ․ տպ․ 'ի Վենետիկ, յէջ 10։

4 'Ի Ճառագայթ, հատ․ Գ․ յէջ 10։

5 Առաջինն 'ի սոցանէ գրէ «Իսկ Նոյ Սեմայ զաշխարհն Ասիա, որ ասի Աստուածային» ('ի Պատմ․ յէջ 27)․ և երկրորդն՝ «Ասիա Աստուածային ասի» ('ի Պատմ․ յէջ 16․ տպ․ Վենետ․)։

ապա գլխաճառէն՝ որոյ վասն ընկալեալ է զայն անուն՝ երկիրն:

'Ի վերագրելոցդ զննութեանց համանախնագոյն մեզ թուի երկրորդն, զի համարիմք՝ թէ նախ առաջին առանձինն ինչ սահման՝ ուր Օսքէյն ազգ բնակէր, անուանեալ իցէ Օսքէա (այն է՝ Երկիր Օսքէյ), և ապա նոյն կոչումն՝ միոյ տառի փոփոխութեամբ (Ասքէա)՝ այլոց ևս տուեալ պարագայ սահմանաց: Այլ զայսմանէ դարձեալ խօսել պիտի յԸնդարձակն գործոյս, 'ի մէջ բերելով և զկարծիս այնոցիկ՝ որք զծագումն բառիս զննեն կամ յանուանէ որդւոյն Թորգոմայ՝ որ Ասքանազն կոչէր[1] (որպէս և զունդն կամ սերունդն նորա՝ Ասքանազեան[2]), կամ յանուանէ Ասքէանն կոչեցեալ հնոյ ժողովրդեան՝ բնակելոյ 'ի հիւսիսայնում մասին Եւրոպիոյ, կամ յանուանէ Ասքէոյ Լիւդացւոցն արքայի, և կամ յԱսորական ձայնէս Ասք, որ նշանակէ՝ ամէն՝ Արեկք. և այլն:

11

Ոսքող: Իմն՝ Որ սամու, Ոստոստող. զի Աստեղք՝ բեկբեկ նշուլեցն արձակմամբ՝ թուին իմն առ 'ի մեր տեսութիւն՝ Ոսքոսքել:

Ստուգաբանի ես՝ Ասքեղ, այս է՝ Ասքենող,

---

[1] Ծննդ. Ժ. 3: Ա. Մնաց. Ա. 6:

[2] Երեմ. ԾԱ. 27:

Սոփէալ, Ճառագայն, Ճառագէալ (զորոց տես 'ի յաջորդ բացատր.)։ Զկրկին իմաստ միանգամայն գտանեմք 'ի բանն Վարդանայ. «Սանեղք կոչին, զի ոփոփոփէլոց գնան, և Սոփէլք (Սոփէալք, Ճառագէալք) են յայսմ աշխարհի պէտս. զի անդ (իմա՝ 'ի հանդերձեալն) թօթափին իբրու տերևք յորթոյ[1]»։

Ե՛ն ևս՝ որք Սգլոփ ստուգաբանեն՝ վասն ազդեցութեանն յնեթադրուանեայս[2]։

12

ՅՍոփ ՍԹ։ Ձէ պարտ զՍոփն (որպէս ոմանց կամք եղեն) իբր Տեղական մակբայ առնուլ, և զՍոփն ՍԹ՝ մեկնել «Յայս վայր՝ Յայս տեղի էած». այլ իմանալ ըստ իբր նախատիպ և արմատ գոյական անուանս Սոփէ, յորմէ ելանէ ածականս Սոփեալ, և Ներգործական բայս Սոփէմ։ Եւ զի Սոփէ (որոյ յոգնականն լինի Սոփէք)՝ նշանակէ Ճշմարտութիւն, Պնդութիւն, Զօրութիւն, որպէս և Սոփէմն՝ Ճշտեմ, Ճշմարտեմ, և Սոփէնն՝ և Սոփեալն՝ Ճշմարտուն[3], ոչինչ թուի անտեղի՝ և զսակն Սոփ ՍԹ՝ բայական նշանակութեամբ իմանալ յՍոփ կամ յՍոփէ։

---

[1] 'Ի Մեկն. Ծննդ. Ճռ. 19։

[2] 'Ի Հին առ. Բառար։

[3] Տես 'ի Նոր Հայկազ. Բառարանի

(այսինքն՝ յՐ̣աստուածն կամ 'ի Ճ̲աստուածն) Ր̣ծ, Ր̣ոտեալ, Ճ̲ատեալ, Ճ̲ատատեալ (Ստեղծ, Գոյացոյց, Արար)․ կամ ըստ բարդութեանն՝ իւր անուն ձեւելով՝ յՐ̣ոտէս ('ի Ճ̲աստուածն, յՐ̣ու-թիւն, 'ի Գոյութիւն, 'ի Լինելութիւն) Ր̣ծող, Ճ̲ատող զոչէան, այն է՝ Ստեղծիչ, Արարիչ *.

---

* Զայս վերջին եղանակ ստուգաբանութեան՝ զոր և այլուր ('ի Ճառք. Հատ. Գ. յէջ 8) նախաձեռար քան զայլսն ցուցեալ է մեր՝ Հնոց մատենագրայն ձայնակցութեամբ, ծանրանան ընդունել ոմանք 'ի Նորոց՝ անձանձ ըստ խմաստից գնոյն փարկանելով, և միանգամայն իսկ արտաքոյ պայմանայն՝ զորս պահանջեն Հարկաւ յատկութիւնք լեզուիս ըստ քերական արուեստին։ Իբրև զի „Ածն, ամեն, ածանցակերտ գոլով մասնիկ, Հանգոյն իմն և Համազօր ռուսական յանգիս нie, չկարէ երբէք ունել զնշանակութիւն ներկայ ընդունելութեան՝ որպէս Ածող, приводящій“։

Այսպէս Հաճոյ եղև որում եղեն՝ դիմախօսել։ Իսկ մեք այլում թողեալ Հմտասիրի խնամով իմն 'ի քննութիւն բանից գեզերել, չտա Համարիմք առ տեղեաւս զայս և եթ յաւելուլ ի Հաւաստիս մերոյին կարծեաց, եթէ 'ի կազմածի ստուգաբանեալց անուան՝ մասնիկ չէ՛ ածն (որպէս է ճշգիւ ռուսական յանգս нie), այլ՝ արմատ է Ներգործական բայիս Ածել, առեալ և ըստ Նշանական․ որ և ըստ բարդութեանն օրինի՝ 'ի կապին ընդ գոյական անուան՝ զող յանգի զգեստ գործութիւն․ որով և վարի ազատօրէն ըստ մասց բայածականիս (ընդունելութեանս) Ածող։ Օրինակ առ զին այսմ՝ բառս Ուռնած, Աղօրմած, Գթած, որք նշանակեն՝ Ածող զուռնն 'ի վերայ (Ուռամբ Հարկանող), Աղօրմ ածող 'ի վերայ տառապելոց, Գութ ածող 'ի վերայ այլոց։ Թող զբարդեալսն Հանդերձ ածանցական մասնկամբս ու, որպիսի են՝ խնամածու (խնամ ածող), Գօտիածու (Գօտի ածող), Փեսայածու (Ածող զփեսայն առ

քանզի և յԱստէս Ածել՝ նշանակէ Ստեղծանել *: Յայտնի հայեցեալ և քաջամիտ ստուգաբանն Ինճիճեան, "'Ի Հաստելոյ, ասէ, մարթ է ստուգաբանել զԱստուած, եթէ նոյն ինքն Հաստիչ. և զի նա է՝ որ արար զամենայն հաստուածս կամ հաստեղեալս, այսինքն՝ հաստատուն եղեալս և 'ի գոյ եղեալս [1]:

Այսպէս իմացան՝ մեկնեցին և գրեցին զիմաստ կամ զնշանակութիւն բառիս Աստուած՝ և նախնի վարդապետք և մատենագիրք մեր առհասարակ, զորոց ոմանց զբանս յիշատակեալ եմք այլուր, և աստանօր ևս յառաջ բերցուք առ ասացելոցս հաստատութիւն, զի մի 'ի քմաց ինչ վարդապետել թուեցիմք յորոց թուեցիմքն **:

---

հարսն), Ակնածու (Ակն ածող), Ամօթածու (Ամօթ ածող), Աւելածու (Աւել ածող, Աւելող), Կարկատածու (Կարկատ ածող, Կարկատարեր), և այլն:

* Սոյին մտօք գտանեմք վարեալ զբառս և 'ի Հայ թարգմանութեան „Առ որս" գրոց Գրիգորի Աստուածաբանի. զի 'ի ճառն Լ, ուր բնագիրն 'ի մէջ բերէ զստուգաբանութիւն յունական Թէօս բառին 'ի բառիցս Թէէին, Էյթէին, Թէասթէին (այն է՝ ընթանալ, Այրել, Տեսանել), քաջ թարգմանիչն ճարտարութեամբ իմն շրջէ զստուգաբանութիւնն 'ի վերայ հայկական բառիս Աստուած՝ բառ այսմ „Աստուած՝ եթէ յԱստէս ածելոյ ստուգաբանեսցի . . . և կամ 'ի Հաստելոյ" և այլն:

[1] Եղանակ Բիւզ 1820 ամ., յէջ 211:

** Ոչ առանց ախորժ պատճառի ասեմք զայս. քանզի ոչ շատ ինչ աւուրք են՝ զի ընթերցաք 'ի Կռունկ ամսագրի զանպատկանագիր գրչի ուրումն զխամութեան բանս ընդդէմ

Ա. Սուրբ Հայրն մեր Գրիգոր Լուսաւորիչ ասէ. „Ածեալ Աստուծոյ զամենայն արարածս արարչութեան իւրոյ առ Ադամ, տեսանել զինչ կոչեսցէ անուն նոցա. որով յայտ է՝ թէ զԱրարիչն անուն յառաջ քան զայս ծանուցեալ Ադամայ, զի նախ այն էր կարեւորագոյն, (քանզի և միածին Որդին Աստուծոյ զայս ասէր առ Հայր՝ թէ „Այս են կեանք յմ՝ զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած)... 'ի հարկէ իսկ նախ զԱրարիչն անուանէր Ադամ[1]: Յայս ակնարկէ և բան մեծին Վարդանայ. „Նախ թէ յայնմ աւուր (Ադամ) զԱստուած՝ Արարիչ կոչեաց[2]“, այսինքն է՝ այնպիսի անուամբ կոչեաց, որ ըստ ստուգաբանութեանն՝ նշանակէ Արարիչ, որպիսի է անունս Աստուած. քանզի „Արարչական զօրութեանն անուն է Աստուած“ ըստ Փիլոնի[3], և ըստ մերոցն ևս վարդապետաց[4]:

Բ. Խոսրով եպիսկոպոս Անձևացեաց. „Աստուած անունն՝ արարչական է... և առ մեզ ստուգաբանի, թէ Աստ Եած զմեզ[5]“:

---

մեր և ընդդէմ այլոց մատենագրաց, զորս և ընդ հուպ 'ի մէջ բերցուք որ ուրեք պատշաճութիւն բանին պահանջեսցէ:

[1] յԱղօթ. տպ Վենետ. յէջ 205:

[2] 'Ի Մեկն. Ծննդ. Բ. 20:

[3] 'Ի Գիրս Լինել գ. 39:

[4] Բարսեղ Ճոն, 'ի Մեկն. Մարկ. ճառ. իա. Ն. Շնորհ. 'ի Թղթ. առ քահանայս Յամնայք նահանգի:

[5] 'Ի Մեկն. Ժամակարգ. յէջ 99:

Գ. Ներսէս Լամբրոնացի. „Յարգեանց երացն կոչեցաք զարարիչն՝ Աստուած, այսինքն՝ Աստ Ածող զոչէսն յէութիւն և 'ի գոյութիւն, զերկնաւորսն և զերկրաւորս [1]“:

Գ. Մեծն Վարդան վարդապետ. „Էլին համակացեալ հաւատոց (Մովսէս), եթէ Աստուած է նա, որով է է, զի Աստ ածող է [2]“:

Ե. Յովհաննէս Վանական վարդապետ. „Այն զօրութեանն՝ որ արար զամենայն ինչ, Աստուած է անունն, որ թարգմանի՝ զմեզ յԱստիէ Ածող [3]“:

Վերջինս այս վկայութիւն, յանկագոյն քան զառաջինսն, զկարծեացն որում հաւանեալս եմք՝ ցուցանէ զստուգութիւն:

Արտաքոյ մերոյս է նպատակի, և տեղւոյս իսկ ոչ 'ի դէպ, յուզել զխնդիրն յաղագս լեզուին մերոյ առաջնութեան կամ յաղագս Նոյախօս և Ադամախօս լինելոյ բարբառ: Ոչ ևս լիցի մեզ աստանօր առ 'ի զուարճութիւն և եթ ընթերցանելեաց՝ 'ի մէջ ածել զծաղրական կարծիսն այնոցիկ, որք յօձին բերանոյ որ ընդ Եւայի խօսեցաւ՝ ծնուցանեն զԱստուածոյ անունն: Զայս գտանեմք մեք 'ի Հարց — Պատասխանիսն մանկագրեալս յանուն Յովհաննու Վանական վարդապետի. յորում առ

---

[1] 'Ի Մեկն. Պատարագի, յէջ 349:

[2] 'Ի Պատմ. յէջ 1:

[3] 'Ի Բացատր. աղօթից Ամբակ. Գիրք 'ի ձա. հատ. Ա. յէջ 227:

հարցումն՝ թէ Ո՞վ եդ զանունս Աստուծոյ, պա-տասխանի կարգէ հեղինակն օրինակ զայս. „Ասեն՝ թէ օձն ասաց Եւայի. Զի՞ է զի ասաց ձեզ որ զձեզ աստուած: Զայն, ասեն ածն * առին՝ և Աս-տուած անուանեցին: Բայց (դու) մի ընդունիր. զԱստուած անունն՝ Ադամ եդիր“ (խմա՝ եդ):

Կան և այլ պէսպէս ստուգաբանութիւնք ա-նուանս՝ 'ի նորոց ումանց ճարտարեալք՝ յաւէտ ըստ ձայնիցն մօտաւորութեան: Պօղոս Գաբրիէլ Անդրիանուպօլսեցի հայկով թերևս 'ի նշանա-կութիւն արարչային բառիս Իշան ** (յորմէ և տաճկականն Եշան), ստուգաբանէ Ազդուած, այսինքն՝ Ազդեալ, Հրատարակեալ, Ծանու-ցեալ. քանզի „Չիք ինչ, ասէ, այնքան ազդեալ և ծանուցեալ առ արարածս քան զգոյն Աստու-ծոյ, որպէս և չիք ինչ այնքան լռեալ և ծածկեալ քան զգինչութիւնն Աստուծոյ [1]“: 'Ի հայերէն Լրագրին Կովկասու, տպեալ 'ի Տփխիս յամին 1847, գտաք ստուգաբանեալ Աշտուած, իբր թէ աշտէ + (զոհիւք) պատուեալ կամ հաշտեալ [2]: Խմբագ-րիչն Աղֆաւէր անուն Օրագրին տպելոյ 'ի Կով-

* Ակնարկէ թերևս 'ի սովորութիւնն Պատուով գրելոյ այս-պէս՝ Ած:

** Խօսի զայսմանէ և Միքայէլ վ. Չամչեան 'ի Մեկն. Սաղմ. հատ. Դ. յէջ 571:

[1] 'Ի Թանգար. Խրատ. հատ. Ա. յէջ 170:

[2] 'Ի Հանճարն 15:

կաթա յամին 1845, յետ յիշատակելոյ և հաւա-նական յայտ ցուցանելոյ զնախակարգեալն 'ի մէնջ զստուգաբանութիւն նախնեաց՝ յաւելու և զիւրն․ „Մեք ևս, ասէ, համարձակեցաք ստուգաբանել զայն (զանունն Աստուած) յերկուց բառից, այսինքն՝ յԱ․․ և 'ի Տ․․–․ծ կամ Տ․․–․ղ բառից, որ է՝ Ա․․ (Խօս կամ Բան) Տ․․–․ղ[1]:

Յիշեցուք տատանօք (այլոց զքննութիւնն թողեալ) և զերկեան Բանագրին զհակառակ կարծիս, որ ըստ այսօրէն բարուցն թեթեւութեան, զմերոյ ժամանակիս ուսումնականօքն՝ իւրու զմոլորեալք ոմանք՝ ունչս ընկեցեալ, և նախնեացն ևս անհաւան լեալ ստացուածոց, 'ի Զանդիկ (Զէնդ) բարբառոյ ախորժէ զծագումն բառիս երևեցուցանել՝ զայս ինչ գրելով իմաստակարար․ „Մեր բանասիրաց ձգտումը դէպի վերլուծութիւն և բաղդատութիւն (առանց հիմնաւոր գիտութեան) շատ անգամ գլորել է նոցա այսպա-կան մոլորութեան մէջ: Մեր օրերումը ծիծաղելի է լսել այսպիսի գասմունքը, որ իմաստակերծի ծանրութեամբ կատարում են ոմանք 'ի կարծեցած գիտնականացն․ զոր օր․․․ Աստուած (աստուատ—մշտակայ, Դէնդ *) որ ստեղծ զմեզ (իբր թէ Ա-

---

[1] յէջ 180:

* Փոխանակ գրելոյ Զէնդ:

դամբ պատմում է իւր կնոջ (Նուպին) տատած *: Այնուհետև ի՛նչ զարմանալու բան է, որ մարդ ակամայ կորցնում է յարգը և հաւատը դէպի խո-րին գիտնականութիւնը և բարեխղճութիւնը մեր պատուելի ուսումնականներին [1]:

Իցեն թերևս և այլք, որք եկամուտ առ մեզ համարիցին զբառդ Աստուած՝ կամ յԱրեւոյն բարբառոյ, առ որս Իս կամ Աս՝ դից իմն կամ աստուածոյ անուն է [2], և կամ 'ի պարսկականէս Յէզդ կամ Յէզդան, որ Ստեղծիչ նշանակէ: Բայց գործ է ցուցանել՝ թէ ո՛չ նոքա 'ի մէնջ, այլ՝ մեք 'ի նոցանէ առեալ եմք զբառդ:

13

Ար Արտա, իմա՛ Արտաւէզդա, Արտաւազդ եղև, փոխեցաւ մահացու վիրօք 'ի մարտի՝ անարատն հրաշալի գեղով՝ Արայն — Արամեան: — Շնորհ

* Կամի ասել. Որովհետև զբառդ Աստուած առեալ են Հայք 'ի Զէնդ բարբառոյ (յորում Աստուատ՝ նշանակէ Մեծա-տակոյ), գործ ողջամտական է ստուգաբանել զայն 'ի Հայումս: Ապաքէն խրատելի գրեաք և մեք զդոյն աստանօր, եթէ նախ ցուցեալ էր Բանասէրն՝ ոչ իւրովն և եթ վկայելով, այլ և այլովք ևս հաւանական փաստիւք, թէ բուն Զէնդ լե-զուի բառ է Աստուած, և եթէ մեկնաբանեալ էր զայն գիտնա-կանապար ըստ կանոնաց լեզուին, որոշելով զարմատն՝ յո-րոց յօդեալն է:

[1] 'Ի Կռունկ ամսագրի 1862 ամի. թիւ Զ. յէջ 411. Ի ծանօթ:

[2] 'Ի Բառ. Հաւլման. Բառարանի:

յոյժ կայցուք Շրօտէրայ Գերմանացւոյ, որ առաջին հանդիսացաւ 'ի հրատարակել զտուղաբանութիւնս [1], ուշ եղեալ խնամով 'ի համդամանս կազմութեան բառին, և զհետ երթեալ յաւէտ զազգին մերոյ հարազատ պատմութեան (որ զգաշան Արայի՝ գնէ յայտնապէս յանուն նորա Արարատ յորջորջեալ, որպէս ունիմք ցուցանել 'ի ներքոյ) քան զՈսկանայն զայլանդակ կարծեաց, յորոյ և ոսկերք անգամ քամեին 'ի լոյս: Քանզի երբայեցի համարելով սորա (Ոսկանայ) զանունդ Արարատ կամ Արարատ, թարգմանեալ էր Անէծք դողման [2]: Այսու՝ խամութիւն նորա ցուցանի և անհմտութիւնն նախնական աւանդից, կամ լաւ ևս ասել՝ անփութութիւնն 'ի խորհել և 'ի քննել: Բայց մեծ ևս ցաւ այն է՝ զի և այլք առնուլ սխալ 'ի նմանէ անկասկածաբար զանհարազատ թարգմանութիւնդ իբրև զհարազատ: Մի 'ի նոցանէ երևի լինել և Գրիչն Բառարանի Յատուկ անուանց: Բայց սա, յետ միանգամ 'ի մէջ բերելոյ զնոյն թարգմանութիւն 'ի բացատրութեան անուանս Արարատ, 'ի կարգի Յատուկ անուանց Աստուածաշունչ Գրոց [3], ո՛չ զանց առնէ դէթ

1 'Ի գիրս „Գանձարան Արամեան լեզուի" տպեալ յԱմըստերդամ՝ յամին 1711. գլ. Դ. համար 3:

2 'Ի վերջկոյս Աստուածաշնչին տպելոյ յԱմստերդամ, յամին 1666 — 1668:

3 յԷջ 33.

լռելեայն և կանհարմարութեն նորին ցուցանել 'ի կարգի Յատուկ անուանց՝ արտաքոյ Աստուածաշունչ Գրոց եղելոց [1], խոստովանելով նմէ յանուն Գեղեցիկն Արայի՝ Արալեզ անուանակոչեալ է մին 'ի հնգետասանից աշխարհաց Մեծին Հայոց:

Գիտել արժան է և զայս, զի զոր Շիրակայ ստուգաբանեալ էր „Արալէզ Արալեզ“, մեք քերթողօրէն ըստ մերում պատշաճեցաք բանի „Ար Ալեզ“: Այլ զարդարն կամելով խօսել, քան զմերն և քան զնորայն՝ յանկարծն և հաւանելի զատիմք գրեալն 'ի բազմահմուտ Հօրէն Ինճիճեան „Արալէզ Արա [2]“, այսինքն է՝ Երկիր կամ Գաւառն Արայի. քանզի և Խորենացին (զորոյ զբանսն ունիմք առորև 'ի մէջ բերել) զնոյն իսկ զտեղին՝ ուր ողջախոհ նահապետին եղև անկանել, Դաշտ Արալէ անուանէ [3]: Իսկ Դաշտ և Արա՝ ոչ բազմօք զանազանին յիրերաց, նշանակելով զատափարակ արձակավայր 'ի բացի: Այն զի գեղեցիկս այս ստուգաբանութիւն 'ի դէպ ես զայս ասացածի միւսոյ պատմաբանին մերոյ՝ Յովհաննու Կաթողիկոսի, որ զանուանս Արալեզ կամ Այլալեզ՝ չհամարի յետ սպանման Արայի եղեալ, այլ՝ վաղագոյն ևս յառաջ քան զայն՝ 'ի նմին իսկ յԱրայէ. զի ասէ

---

[1] յէջ 246:

[2] 'Ի Հնախօս. հատ. Գ. յէջ 3:

[3] 'Ի Պատմ. գիրք Ա. գլ. ժե:

„Արայի զշինութիւն աշխարհին տնօրինեալ՝ յիւր անուն զբնակութեան իւրոյ վայրս կոչէր Այրարատ [1]": Իսկ Գերմանացի մատենագրին ստուգաբանութիւն՝ նմին հակառակ՝ ցուցանէ զանունդ յետ մահուն Արայի՝ առ յիշատակի նորա յայլոց յարմարեալ. որում կարէ ոչ՝ և նա ինքն պատմահայրն Խորենեան ձեռնտու լինել, անորոշ զբանն թողլով յերկուս տեղիս՝ օրինակ զայս. „Գայ հասանէ (Շամիրամ) տագնապաւ 'ի Դաշտն Արայի, որ և յանուն նորա անուանեալ Այրարատ": — „Դադարեալ Շամիրամայ աւուրս ինչ 'ի Դաշտին, որ անուանեալ կոչի յանուն Արայի Այրարատ [2]":

Կան և այլ գիտելիք զանուանէս, զորս գտցեն վերծանողք յԸնդարձակն գործոյս:

14

Շայլյարբուճ. այս է՝ զեղխ, շուայտ կամ անչափ 'ի գինըմպութիւն: Այսպէս մեկնէ զանունդ Աբեղա՝ Հ. Ինճիճեան [3]: Այլ ճշգագոյն ևս կազմի ստուգաբանութիւնդ՝ եթէ ձայնդ չէ— (ըստ նշանակելոյ Հայկազեան Բառարանին) առցի իբր արմատ բառս Շայլ:

---

1 'Ի Պատմ. յէջ 13:

2 'Ի Պատմ. գիրք Ա. գլ. ժե. ժզ:

3 յԵղանակ Բիւզ. 1820 ամի, յէջ 211:

## 15

Արէաէար-Ջէն Ջէն։ Նուէն՝ արմատ է բառս Նուաէնք, որ նշանակէ Պատառուածք. ուստի Նուէն Ջէն առնել՝ է ծուել, ծուատել, գիշատել, գէշ գէշ պատառել։ Յայս գործ բնաւորեալ են գիշախանձ թռչունք, մանաւանդ գլխաւորագոյնն 'ի նոսա՝ Արծիւ կամ Արծուի. որ և անունն իսկ (ստուգաբանօրէն նկատեալ) յայտ առնէ, եթէ արէ և արագ է նա 'ի Ջէն Ջէնն առնել զորսն՝ յորոյ վերայ հասանիցէ։ Տես զայսմանէ և 'ի բացատրութեան անուանս Արէն ('ի թիւ 9)։

## 16

Այր Ջուայնայ, կամ մօտաւորագոյն ևս հնչմամբ՝ Այր Ջէնայ, իբր մի միայն 'ի մէջ արանց, անզուգական, աննման, երևելի յոյժ, փառաւորագոյն արութեամբք քաջութեամբք, կամ որովք և իցէ գերապանծ ձիրիւք։ Զայս և Խնծինեանն ազդ առնէ յաւելն „Արմէնակ, որդի Հայկայ, որոյ անուն՝ թուի ելանել 'ի բառէս Այր [1]"։

## 17

Արգաւքէն Մուջ։ Այսպէս ստուգաբանեալ գտանեմք զբառդ Արգաւաւքէ՝ 'ի Սահմանեանէ վարդապետէ Ագնից [2]. որում 'ի դէպ գայ և ստա-

---

1 'Ի Հնախօս. Հատ. Գ., յէջ 2։

2 'Ի Ճարտար. յէջ 96։

ցեալն 'ի Մարգարէ Շնորհալւոյ. «Ի սաստիկ տառապանացն և 'ի արտասուաբերութենէն՝ առուք երականց որ զարտուղն յաչսն 'ի վեր տայցեն. և այն կաթիլք՝ արտասուք անուանին[1]»:

Ըստ այսմ մերթ է և զհամանշանակ բառն Արտօսր՝ ստուգաբանել Արտասոր, այն է՝ արտաքս սորեալ՝ ծորեալ՝ թորեալ. քանզի «գինջութիւնն (խոնաւութիւն, աղի ջուրն) յաչսն արտաքս մղեալ յարձակի (սորի) 'ի ձեռն կաթլոց. և կաթիլն՝ արտօսր ասի» ըստ Գրիգորի Նիւսացւոյ[2]:

Զհրկին բառից ստուգաբանութիւն գտանեմք և առ Գրիգորի Տաթևացւոյ՝ փոքու ինչ տարբեր յեղելոց: Քանզի նա զԱրտօսրն համարի ծագեալ 'ի բառէս Աչօք, և զԱրտասուքն՝ յարմարեալ 'ի բառից Արտաքս, Արտեւանունք, Հոսել. և է ստուգաբանն նորա այս. «(Արտասուք, Արտօսր) ստուգաբանի, նախ՝ Աչօք է քան զայլ հոսելու. երկրորդ՝ Արտաքս հոսէ. երրորդ՝ յԱրտեւանանցն հոսէ[3]»:

18

Արտոյտ: Առ մեզ՝ Արտուտ կամ Արտոյտն կոչեցեալ թռչունն՝ 'ի գործոյն թուի առեալ զանուն, որպէս և առ Տաճիկս Տարլա-քուշու ասի, որ թարգմանի Թռչուն դաշտավայրոյ: Իւ այն՝

1 'Ի Մեկն. Թղթ. Յակ. ճառ Թ:
2 'Ի Գիրսն Յաղագս Կազմ. մարդոյ:
3 'Ի Քարոզ. Մեկն. Սաղմ. ՃԹ:

զի ցուցան ուտէ՝ յԱրջոյ զողմնալով, յայտ եւս է յԱրշաւպայն առակէ՝ որ յԱրտաւան և 'ի Քաւոլս[1]: Ինճիճեանն՝ 'ի բնակութենէն առեալ համարի, զի «չորբորայ», ասէ, բնակի[2]»

19

Գառնած Էշն, որոյ բարդեալն՝ լինի Գառնէշ։ Ասի՝ թէ 'ի պաղկոյ կամ 'ի սառչկոյ իշոյ 'ի ձմերայնի՝ ընկալեալ իցէ զանունն՝ քաղաքն Եռաշէշ՝ փոփոխմամբ Գ տառի 'ի Ե[3]: Եթէ հաւանական թուիցի բանդ, և ոչ ռամկական և եթ զրոյց, պարտ է զեշոյն պաղումն՝ ոչ յետոյ դնել քան զննորոդ դար. իբրու զի նովին անուամբ յիշէ զայդ քաղաք և Թովմա Արծրունի, պատմագիր 'ի նմին՝ կամ 'ի յաջորդ՝ դարու[4]:

20

Գողան։ Արմատ բառիս՝ է Գեղ, յորմէ եղանէ բայս Գեղել, որ նշանակէ Պատառել. ուստի և Գողան՝ իմանի Գողօղ, Պատառող. քանզի ան՝ 'ի վերջ բառից՝ ունի զզօրութիւն ող կամ էղ մասնկանց, որպէս տեսանի 'ի բառսդ՝ Իշխան (իշխող), Ջնջան (ջնջէղ), ևս և՝ Խթան, Տափան, Տո-

---

[1] Տես յԱռակն ազ. 'ի Վենետիկ, յէջ 464։
[2] 'Ի Հնախօս. հատ. Գ. յէջ 21։
[3] յԱշխարհագր. Ասիոյ, հատ. Ա. յէջ 171։
[4] 'Ի Պատմ. յէջ 122։

փան *, որք նշանակեն՝ Խնող, Տոէն, Տոէն, կամ՝ Գոյծէ Խնելոյ, Տոէլոյ, Տոէլոյ: Այսպէս ստուգաբանեալ գտանեմք զանունս Գռաղան՝ 'ի մեծէն Վարդանայ. „Գռաղան+ անուանեցան, ասէ նա, զի պատառողք են. գէղն՝ պատառումն է [1]“: Նա դարձեալ „Գռաղան՝ վասն պատառողութեանն կոչեն [2]“: Նմին համաձայն՝ և Տաթևացին ասէ. „Գռաղան կոչին, զի գէղոյղ են և պատառող [3]“:

## 21

Գեէղ Իէ, այսինքն՝ Իէ որ ոչ է բարի. քանզի Գեէղ՝ երբ ածական վարեալ (որպէս սովորական է յաշխարհիկ լեզուի)՝ նշանակէ յոռի, վատթար: Այսպէս ստուգաբանէ զանունս Գեէղէէ՝ հին Բնառարանն՝ առեալ 'ի Յայսմաւուրաց [4]. վասն զի պակասի, ասէ, 'ի նմա լոյսն տուընջեան, որ է բարի“:

Արժէ է ես ստուգաբանել՝ Գեէղ կամ Գռեղ (անախորժ, խորշելի) Նէէ, և կամ՝ Գող Նէէ, այսինքն՝ Թուխ օդ կամ մութն, զի Գող ասի որ գոյն Թուխ ունի. և Նէէ՝ երբեմն զԹանձր խաւարն

* Զայլոց ես սոյին նմանեաց լիագոյն գտցես տեղեկութիւնս ընդարձակին գործոյս, 'ի ստուգաբանութեան բառիս Բեբան:

1 'Ի Մեկն. Ծննդ. ա. 25:

2 'Ի Մեկն. Սաղմ. ճխը:

3 'Ի Հատորն Ձմեռ. ճէջ Ն:

4 'Ի Մարտի 17:

նշանակէ *, յորում թէ շրջեցի ալ, թուի ինձ այնպէս՝ իթէ զօգ շօշափելով և ոչ կարելով ունել՝ ջէբէբէ կայցէ. որպէս տեսանի առ Յ. Վանական վարդապետի, որ զբանն Յովբայ „Ներ ծածկեալ գնտաս“ մեկնէ „՚ի մաշուն ծածկեալ գնտաս խաւար, զոր շօշափեսցեն փոխանակ լուսոյ[1]“: Թուի թէ՝ յայտնի ունի աննկարկութիւն և աւելն աշակերտի նորա՝ մեծին Վարդանայ „Տեւումն լուսոյն ՚ի վերին կնտաղունդն՝ Տին է **, և մեկնիչն՝ յորժամ զոյն գէշ և Նէօ խ զգենուն օդ և երկիր, Գոչէր կոչի[2]:

Գտաք և այլ ինձ ստուգաբանութիւն՝ յանծանօթէ ումեքէ արարեալ՝ փանաքի մտածութեամբ՝ ըստ այսմ. „Գոչէր. գէշ և աղածրի: Կամ գիր զխծորդան՝ Բրշէր: Արևելից բառ է. որպէս թէ ՚ի մտանել արեգականն՝ Բէշ արկեալ ժողովին մարդ և անասունք և թռչունք, և զազանք յորջեցն Բշէալ՝ եղանեն յորս[3]“:

Նոր Բառարանն յաւ ես համարի ստուգաբանել՝ Աչօէր, իբր կէսն աւուր: Յընթերցողին կամ

---

* Այդ բառ (Ներ) ունի և այլ նշանակութիւն, զորմէ խօսել կայ մեզ ՚ի թիւն 29:

[1] ՚Ի Մեկն. Յովբ. ա. 26:

** Նշմարի աստանօր և ստուգաբանութիւն բառիս Տէ. զորմէ յԸնդարձակին գործոյս:

[2] ՚Ի Մեկն. Ծննդ. ա. 4:

[3] ՚Ի գրչագիր Քաղուածի Մեկն. Արարած:

*թղթանի ընտրել զմի յասացելոցդ ստուգաբանու-
թեանց:*

22

Քեր, Քերել: *'Ի սոցունց թուին ծագեալ բառքս՝* Գիր, Գրել, *հանգոյն իմն հելլէն ձայնին* Գրա՛փօ, *և լատինոյն* Սքրիպօ, *որք նշանակեն և* Քերել *և* Գրել: Նա *այսմ այն իսկ է պատճառ՝ զի առաջինքն երկաթի գրչաւ՝ 'ի վերայ կեղեւոց ծառոց, կամ 'ի վերայ քարանց և փայտից,* Քերելով *և քանդակելով գրէին. և ապա սկսան մրով կամ դեղով գրել 'ի վերայ մագաղաթեայ թղթոց:* Գիր *ասի, ասէ* Երզնկացին, *վասն զի իբր* քերելով *իմն գաղափարի:* Գրեալն՝ քերեալ *ասի, այսինքն որ ծայրիւ գրչին* քերէ *զգրեալն, և ապա նկարեալ յօրինէ զինչ որ կամի:* Քանզի *գրելդ՝* քերել *ասիւր առ նախնեօքն, որպէս և 'ի* Հոմերոսին[1]: Զայս *ծանուցանէ և* Յ. Վանական *վարդապետ յասելն „*Զի՞նչ է Գիր: — Առաջինքն Քերել *ասէին, որպէս* Հոմերոս[2]: Պարտ *է ուրեմն ասել՝ թէ այս բառք փոխան միմեանց վարէին առ հինսն:* Նա *զայս յայտնի տեսանեմք 'ի բառսդ* Գրիչ *և* Քերիչ. *որոց առաջինն՝ իբրև գոյական անուն առեալ (յ*Ուղղական *հոլով)՝ նշանակէ զերկաթի գործին հիւսանց կամ քանդակագործաց 'ի քերել կամ 'ի*

---

[1] 'Ի Մեկն. Քերակ:

[2] 'Ի Հարց — Պատասխ:

փոքր, որ այլով անուամբ Գուզ կոչի, (տաճկե-րէն՝ Քէսքի, ռուսերէն՝ рѣзецъ)․ և երկրորդն նշանակէ գրուած քերթողական, կամ քերակա-նեալ (քերթողական արուեստիւ յօրինեալ) բան, այն է՝ քերթուած: 'Ի հաստատութիւն վերջ-նոյս առցուք զբան Շնորհալւոյն, որ զովեն մօք 'ի կէր արկանէ զբառդ՝ յասելն

„Նորոգ բանիս այսմիկ հանդէս
Գումարելոց սոտ տիրապէս…
Բամեալ 'ի Քէզըր տարրապէս
Զանազանեալ տառիւ յանդէս [1]“:

Յարմատոյ սորին (այսինքն՝ 'ի Քէզ բառէ) ե-լանեն և բառքս՝ Քէզաչան, Քէզլօղ, Քէզլօ-օճ կամ Քէզլօճ, Քէզլօ-լիք, և այլն․ զորոց բա-զում ինչ ունիմք խօսել յԸնդարձակն գործոյս:

Արժանի մտադրութեան են և զորս Մեսրոպ Թա-ղիադեանց յիւրում „Ազգասէր“ Օրագրի 1847 ամի, հրատարակեալ է յաղագս ծագման բառիցս Գէզ, Քօզ կամ Քօզէզ, և այլն [2]: Զնորա բանն ես 'ի մէջ բերցուք յԸնդարձակն գործոյս:

23

Գէ Գօզլէ: Բարդութիւն Գէֆօղլինի կամ Գէֆօ-ղօղ, իբր Գօզօղ կամ Թագուցող յինքեան զէ․

---

[1] 'Ի Յիշատակարանի Խրատական բանիցն 'ի դիմաց Այբու-բենից․

[2] Յէջ 414:

զի այնպիսի ինչ կազմած է Գաղաղն, յորում սքօղեալ պատեալ ծածկեալ դնի զխաղն մեռելոյ։

— Գնճատող, իբր Բռողող (ժողովող) ջնջանող։ Այս զի Գաղաղաւ 'ի միջոյ կենդանեաց քաղէն (հաւաքեն) և տարեալ լինին 'ի գերեզմանս մեռելոցն մարմինք, այն յայտ իսկ է։

Երկակի այս ստուգաբանութիւնք թէպէտ և յաւէտ ըստ ձայնիցն նմանութեան են յարմարեալք, բայց ոչ 'ի սպառ մերժելի թուին, զի ունին ինչ և ըստ իմաստիցն պատշաճութիւն, որպէս յայտ է որոց քննողական միտք են։

24

Գորան Ալէ։ Գորանաղէ՝ զաւառ է 'ի Բարձր Հայս. և այսմ անուանակոչութեան հանդիպեալ է 'ի պատճառս Գորանս (հանքս կամ մետաղս) Ալէ յինքեան ունելոյ։ Զայս ցուցանել կամի և Երզնկացին՝ 'ի դէմս զաւառին խօսելով այսպէս. „Ի ծործորս լերանց և 'ի ներքոյ երկրի աղբիւրս ալէ գորանացեալ (ամփոփեալ) ունիս. որով և Գորանաղէ կոչիս[1]"։

25

Տորանէթ, իբր հեռի կամ զերծ յախտից, կամ անախտ։ Բանզի Տոր՝ յորժամ կից ընդ այլոց բառից վարի, տայ զնշանակութիւն բառիցս՝ հե-

[1] 'Ի ճառն Գովեստ. Լուսաւորչի։

–դէ, օտար, ատանց· կամ ընու զանդի բացասական մասնկանցս՝ ան, ապ, դ· օրինակ իմն, դուրաձիգ (հեռաձիգ), դուրաբերուն (օտար 'ի բնութենէ), դուրադէպ (անդէպ), դուրաժամ (ապաժամ), դուրաձև (աձև), դուրապայման (անպայման, առանց պայմանի կամ չափու):

Յայս միտ և Ղուկաս Ինճիճեան „Արժէ, ասէ, ստուգաբանել դուրս յախտից, յարմար ամենևին Դրախտին Ադամայ, ուր ոչ գտանէին ոչ ախտք հոգւոյ, և ոչ ախտք մարմնոյ՝ որք են ցաւք, հիւանդութիւնք· յարմար նաև զուարճալի պարտիզաց, որք նոյնպէս կոչին դրախտք[1]· զի յայնպիսի տեղիս 'ի դուրս ելանեն՝ չքանան ախտք մարմնաւորք, փարատին ամենայն հիւանդութիւնք[2]": Յաւելու ասել դարձեալ նա ինքն· „Երևի 'ի ժամանակաց անտի սկզբնաւորութեանն 'ի նոյն իսկ յԱդամայ այս անուն (Դրախտ) եղեալ, մանաւանդ յետ անկմանն, յորժամ փորձիւ ծանեաւ նա յանձն իւր զհոգևոր և զմարմնաւոր ախտ՝ յորոց զերծ էր ամենևին 'ի Դրախտին[3]":

Անձն Վարդան, մեկնիչ Ս. Գրոց, զայս ևս ստուգաբանութիւնս ցուցանէ, որք են՝ դուր խիտ ծառոց, կամ դրախտն Ադամ անդ ախտացաւ: Եւ

[1] Տես Յովել. բ. 5: Եզեկ. ի. 13:

[2] յԵղանակ Բիւզ. 1820 ամի, յէջ 240:

[3] 'Ի Հնախօս. Հատ. Գ. յէջ 17:

զի զանուանի ուրեք՝ Դրախտ (յորմէ Դրախտաստան) փոխանակ Դրախտին եդեմայ *, զայն եւս ստուգաբանէ դէր տար մարդոյն, յայս բան բովանդակելով զասացելոցս ամենայնի զիմաստն. „Ոչ ինչ է Դրախտն. — Թաւ վայր, լի ամենապատիկ ծառովք **, անթարշամ ծաղկովք, անծորելի աղբերովք, անթափելի տերեւովք... Դրախտ, որ է դէր տար մարդոյն, կամ դէր խէթ ծառոց՝ լի եւ անթերի եւ կամ զի դրեալ (եդեալն) Ադամ՝ անդ աշխատայ զառաջինն [1]“ :

Երկրորդն ՚ի Վարդանեան ստուգաբանութիւնս (որ առաւել կիրթ չթուի քննողական մտաց) տարօրինակ գոլով ըստ կազմութեանն, տարաձայնի ՚ի ստուգաբանութենէ Քօրն Խնծիծեան՝ այնու, զի սա յանախտական կենացն Ադամայ որ ՚ի Դրախտին՝ առնու ստուգաբանել զանունս Դրախտ, իսկ նա՝ յախտանալոյն ՚ի նմա Ադամայ: Սակայն, եթէ մանր միտ դնիցեմք, եւ երկոցունցն բանք ՚ի մի ինչ հային, եւ զմի ինչ ճշմարտեն, այն է թէ Դրախտ անուն ծագէ ՚ի բառէս ախտ, զիարդ եւ կամիցի ոք մեկնել. եւ թէ՝ զանուանակոչութիւնդ զայդ ընկալեալ է վայրն փափկութեան՝ յետ ելիցն

---

* Որպէս յայս բան Փիլոնի. „Տեղի բուն եւ ընտանի Դրախտին՝ Եդեմ“ (՚ի գիրսն Այլաբ.):

** Զայս ՚ի Փիլոնէ առնու, որոյ այս է բան. „Դրախտն թաւայր է ամենապատիկ ծառովք լի“ (՚ի Լինել. Ա. 6):

[1] ՚Ի Մեկն. Ծննդ. Բ. 8:

անտի առաջնոյ մարդոյն. քանզի յայտ իսկ է, թէ ոչ յառաջ քան զմեղանչելն, այլ՝ յետ այնորիկ ծանեաւ նա զանձն տակաւին կենացն զբարերարութիւն, զոր ունէրն անմեղութբ 'ի Դրախտի անդ:

Յուշ առնել և զայն կարևոր դատիմք աստանօր, զի ոմանք յարդի լեզուագիտաց՝ նկրտին (չգիտեմ էր աղագաւ) կապտել 'ի մէնջ զբառդ և տալ ժառանգել այնոցիկ՝ որք բացական յոյժ գտանին բնակութեամբ 'ի սահմանաց անտի Աստուածատունկն Դրախտի: Եւ զայս առնեն նոքա՝ կոչոմելով իմն ըստ իւրեանցն կարծեաց, թէ ոչ Հայեցի իցէ բառդ, այլ՝ կամ Պարսիկ, կամ Սանսկրիտ: Բայց թէ զինչ և որպիսի ինչ ապացոյցքն իցեն նոցա, Հարկ է տեսանել:

ԴԻՐԷԽԹ *, ասեն, 'ի Պարսիկ լեզուի ԾԱՌ նշանակէ, որպէս և ԴԻՐԷԽԹԱՆ՝ ծառաստունկ կամ ծառաստան. և ԾԱՌՈՑ անուն առ Սանսկրիտս՝ ԹՌԱՌՈՒ[1] լի: Ապա կամ յառաջնոյն և կամ յերկրորդէն ունիմք մեք, ասեն, զանունդ ԴՐԱԽՏ: Ո՛ջ է բանդ՝ քաջախօս լեզուի անկաւոր, այլ չէ բաւական 'ի ցուցանել թէ այն ամենայն բառք՝ որք նմանաձայն Պարսկայնոյն կամ այլոցն լեզուաց՝ առ մեզ գտանին, եկամուտք ինչ իցեն, և

* Ըստ բարբառոյ Պուխարացւոց՝ Դէրախթ կամ Դարախթ:

[1] Տես 'ի Ռուս. Համեմատ. Բառարանի տպ. 'ի Փեթերպուրկ յամին 1787, յէջ 403:

ոչ 'ի բնմէ Հայկականք: Այն զի, զայլովքն այն-պիսեաց իրաւացի ևս է մեզ ասել՝ թէ Հայկականս լեզուի հարազատ ծնունդք են՝ կերպարանեալք միայն յաւելուածով կամ զեղչմամբ տառից ինչ կամ վանկից, և հետ զհետէ ըստ հընչմանցն ևս աղաւաղեալք 'ի ծեքածուռ շրթանց: Քանզի, որպէս հնագոյնք յազգաց կամ 'ի ժողովրդոց, նոյնպէս և հնագոյնք 'ի բառից մարդկեղէնս բարբառոյ, 'ի Հայաստանէ անցին փոխեցան յայլ և այլ սահմանս եթէ 'ի հեռաւորս և եթէ 'ի մերձակայս: Իսկ լեզու՝ զոր Հայաստանեայք վարէին, Նոյականն էր, կամ որ նոյն է՝ Ադամեանն Աստուածախօս, ազատ 'ի Բաբելականն մնացեալ խառնակութենէ, և ապա Հայկական՝ յանուն Հայկայ անուանեալ. որպէս կանխագոյն ևս ցուցեալ են բազմախոյզ քննութեամբք երկոքին մատենագիրքն Մ. Չամչեան [1] և Գ. Ինճիճեան [2]:

Կարծեալ, քան զայլոց ազգաց լեզուս հին է, ասեն, Սանսկրիտացն լեզու, ապա և քան զՀայոցն: Ահա՛բան՝ որով հաստատի և ոչինչ: Խօսել խօսին զոքա զայդպիսիս, նա՛ և զբեն իսկ, ակն ունելով թերևս մեծ ինչ առնուլ մրցանակ: Այլ որ 'ի զոգաւն բանիցն է հնաւութիւն, եթէ անաչառապէս 'ի քննին ածցի, ծաղր է արժանի: Կի-

[1] Տես 'ի Պատմ. հատ. Ա. յէջ 153 — 164:

[2] Տես 'ի Հնախօս. հատ. Գ. յէջ 2 — 25:

ցոյք՝ թէ քան. զբազումս 'ի լեզուաց՝ հին իցէ Սանսկրիտն. այլ այդքաննաւ հնութիւն չունի իրաւունս՝ և կարէ իսկ ոչ՝ անդր ևս քան զայն ժամանակին անցանել, յորս բաժանումն մարդկան եղև, և սփռել նոցա ըստ տոհմից տոհմից յերեսս երկրի, նախ առաջին յԱրևելից (այն է՝ յԱրարատեան լերանց) խաղալով յերկիրն 'ի Սենաար՝ ըստ վկայելոյ սրբազանն Մ խաղագրի[1]: Ըստ որում և Հայոյն առաջնութիւն լեզուին՝ կայ և կացցէ դարձեալ անկորուստ և անկողոպտելի՝ սկիզբն 'ի ժամանակաց անտի ունելով 'Նոյի արդարոյ՝ բնակելոյ և փախճանելոյ 'ի Հայաստան 'ի նախաբնակն օթևանի մարդկութեանս: Զայսմանէ աւելի ինչ խօսել աստեղեաւս՝ ոչ է հարկ: Իսկ եթէ և զԱստուածագիծ մատենին զվկայութիւն յանհաւատութեան կարծիս ձգել ժպրհիցին՝ մերումս բանի հակառակորդք, այնպիսեացն ընդդէմ ինչ ոչ բերցուք աստ, չնա համարեալ զոր ինչ միանգամ առաջինքն 'ի համճարակորով մատենագրաց և յերանաշնորհ վարդապետաց եկեղեցւոյ՝ խօսեցեալ են բազմօրինակարար, հզօրագոյն փաստիւք զճշմարտութիւնն ցուցանելով: Բայց այսչափ ինչ հարկ 'ի վերայ կայ ասել, զի որ վերագոյնդ յառաջ բերաւ ձայնդ Թռաաա—, իբրու Սանսկրիտաց բառ, այն իսկ ևս՝ ըստ մերումս դատման՝ բնիկ Հայեցի է, ծագեալ

---

[1] Ծննդ. ժա. 2:

յանուանէս Անտառ *, որ նշանակէ զբազմութիւն ծառոց խիտ առ խիտ անկելոց, կամ զծառաստանս: Այսմ՝ յայտ է թէ՝ չունի բնաւ հաւանել որ Սանսկրիտական լեզուին է Ջատադով· սակայն մեք առ ոչինչ գնոցայն գրեալ չհաւանութիւն, յաւելումք ես սակ, եթէ և միւս իսկ անունն՝ Դրախտին համաձայնեալ՝ զոր Եբրայեցին Փարդէս ** ասէ, Պարսիկն՝ Ֆէրտէվս, Յոյն՝ Փարատէյսօս, Լատինն՝ Բարատիզուս, Գաղղիացին՝ Բարատի, բուն Հայկական է՝ նորաձեւեալ 'ի բառէս Պարտէզ՝ օս կամ ուս մասնկանն յաւելմամբ, կամ սակից ինչ փոփոխութեամբ, որպէս անկեալն՝ որոց այս ունին՝ տեսանի: Այլ թէպէտ ոմանք յօտարազգի մատենագրաց (որպէս Ինճիճեանն ծանուցանէ [1]) զբառս զայս՝ Քաղդէական կամ Եբրայական համարեցան [2], և ոմն ես Սարաց ընծայեաց [3], սակայն հմուտն մերոյ բարբառոյ՝ Շրօտէր Գերմանացի՝ ասէ լինել բուն Հայկական [4]:

---

* Գուցէ յայսմ իսկ բառէ փոխառեալ իցէ և Մատէրայն՝ անուն կղզւոյ, որ 'ի Լուսիտանացւոց բարբառ նշանակէ Ծառ: (Տես 'ի Ճամբ. Հատ. Ա. էջ 426:

** Համանման այսմ է և Անգղիականն Փարատայզ, որ նշանակէ Անտառ:

1 'ի Հնախօս. Հատ. Գ. էջ 6:

2 Պէսսիէ, 'ի Բառարանի իւրում, 'ի բառն Բարատիզուս:

3 Յոյն ոմն առ Սարգաւանին Բեջանեայ:

4 'ի Գանձարանի Արամեան լեզուի:

## 26

Դնէր 'ի Գուշլ, Տուր 'ի Գուշլ։ Գուշլն ըստ երկրորդական նշանակութեան՝ է երկաթի կամ փայտեայ սանձն բերանոյ մարդոյ (տաճկ. Պէլէմէ), զոր 'ի հին ժամանակս 'ի վեր արկանէին առ 'ի չտալ թոյլ այլ ևս փակել կամ բանալ զբերան [1]. և աստանօր իմանալի է ըստ նմանութեան՝ բերանն բացեալ իբրու Գուշլ- (Սանձիւ)։

'Ի կրկին ստուգաբանութեանցս՝ 'ի դէպ գայ առաջինն „Դնէր 'ի Գուշլ“, եթէ ստուգաբանեալ անուանդ՝ գրեսցի Դնէգուշ 'ի դէպ գայ և երկրորդն „Տուր 'ի Գուշլ“, եթէ գրեսցի Տուրգուշ։ Հին Բառարանն այլազգ ևս ստուգաբանէ զբառդ՝ յասելն „Նոմա (Դրզալով) Փնէձէ զկերակուրն 'ի բերան մեր, որ իբրև դզուշլ (գազանն)՝ կլանէ միշտ զկերակուր“։ Է՛ և այլ ստուգաբանութիւն յայլոց „Դնէր կամ Տուր 'ի Կոււլ“, բայց բռնազբօսած է։

## 27

Յէրէւան ել։ Ըստ աւանդութեան Հայաստանեայց՝ նախ առաջին լերինք Արարատայ Երևեցան եղելոցն 'ի Նոյեան տապանի՝ 'ի նուազել ջուրցն յետ ջրհեղեղին դադարման. զի „յամսեան տասաներորդի՝ որ օր առաջին էր ամսոյն՝ Երևեցան,

---

[1] Տես Սաղմ. ԼԱ. 4. 9։ Յակոբ. յէջ 57։

ասէ Ս. Գիրն, գլուխք լերանց [1]": Եւ մի՛ այնորիկ կոչեցաւ տեղին կամ կողմն այն 'ի նոցունց՝ Երեւան:

Մխիթար Թաղիադեան, տայ զհետագայ տեղեկութիւնդ· "Գրի 'ի Սուրբ Գիրս, թէ յամսեան մետասաներորդի երեւեցան գլուխք լերանց: Եւ ահա Երեւան՝ որ անկանի 'ի Կոտայս գաւառ Արարատայ, նովին անուամբ և յայտնագոյն եւս աւանդութիւն կայ և մնայ մինչև ցայսօր՝ արձան յիշատակի անցից ջրհեղեղին: Քանզի ասի, թէ իբրև բացաձեղուն կամ լուսամուտ տապանին, նա որ զառաջինն ետես զկատարս լերանցն Գառնոյ և Գեղամայ միանգամայն, առ խնդին աղաղակեաց "Երեւա՛ն, երեւա՛ն [2]" Զայս աւանդութիւն համառօտիւ 'ի մէջ բերեալ և Ինճիճեանն՝ զԵրեւանդ անուն համարի նոյնպէս 'ի "Նոյէ եղեալ[3], կամ 'ի Նոյեանց [4]:

— Երուանդաշատ, այսինքն՝ տեղին, ուր Երկրորդն Երուանդ արքայ շինեցաւ յԱրտաշիսէ Երկրորդէ [5]: Եդաւ այս՝ 'ի յիշեցուցանել միայն՝ այլ ոչ 'ի հաստատել՝ զկարծիսն, զոր յիշէ պատմագիրն մեր Չամչեան [6]:

---

1 Ծնն. Ը. 5:

2 'Ի Ճանապարհորդ. 'ի Հայս. տպ. 'ի Կալկաթա յամի 1847, յէջ 172:

3 'Ի Աշխարհագր. Հին Հայաստ. յէջ 455:

4 'Ի Հնախօս. Հատ. Գ., յէջ 15. և Հատ. Ա. յէջ 274:

5 Չամչ. 'ի Պատմ. Հատ. Ա. յէջ 338:

6 'Ի Պատմ. Հատ. Գ. 'ի ցանկն, 'ի բառն Երուանդաշատ:

Յովհաննէս վարդապետ Շահխաթունեան, յետ 'ի մէջ բերելոյ զնախայիշատակեալ աւանդութիւն Հայաստանեայց և զվերջինս զայս կարծիս ոմանց, զերկուսին ես յանստուգից սակս եդեալ՝ ասէ. «Բայց այսոցիկ անուանադրութե քաղաքիս (Երևանայ) տակաւին մնայ անծանօթ՝ թէ երբ կամ յումմէ՞[1]»։

Տարապայման իմն թուի մեզ այդչափ խղճմտութիւն հեղինակին. քանզի թէպէտև զանյայտից իբս իբրու զյայտնեայ ընդունել՝ զդիւրահաւատութեան կամ թեթևամտութեան համարի գործ, սակայն և ժխտել 'ի սպառ զշատ կամ զնուազ հաւանականութիւնն որ 'ի նոսին՝ ոչ է արժան։ Եւ չէք իսկ պատճառ մերժելոյ զառաջնոցն աւանդս՝ ըստ որում դէպք իրացն, հնութիւն քաղաքին, և հիմնադրի կամ կառուցողի նորին անծանօթն մնալ ցայժմ, ըստ բաւականին՝ զասացելոցն հաւաստութեան ընձեռեն ցոյցս։

28

Երէց պատասանց ծառք։ Երիցս տասն՝ երեսուն է. այլ այսու՝ չէ՛ պարտ զերեսուն ամն իմանալ զմարդոյն կենաց 'ի ծննդենէ, կամ զերեսնամեայ հասակն, և կամ զերեսներորդն և եթ ամ հասակին, այլ զայն հասակ՝ որ առնէ ամս երեսուն, և կամ զայն

---

[1] 'Ի Ստորագր. գաւառացն Արարատայ, հատ. Բ. յէջ 136.

չափ ժամանակի կենացն՝ որ կայ ընդ մէջ պատանութեան և ծերութեան, իմա՝ զսկսեալն 'ի քառաներորդ ամէ ծննդեան, և զաւարտեալն 'ի յիսներորդ: Թուի մեզ՝ թէ զայս իսկ ցուցանել կամին և վարդապետքն մեր, Սարգիս Շնորհալի և Ներսէս Լամբրոնացի, հետագայ բանիւքդ. „[illegible] զմիջին հասակն անուանէ, որ ոչ կարի ծեր իցէ, և ոչ կարի համբակ մանուկ, այլ առողջացեալ հասակաւ և զօրութեամբ և իմաստութեամբ [1]": — „Մինչև յերեսուն թիւն, որով երիտասարդական ամքն չափի..: 'Ի դալ երրորդ եօթանն, որ է ըստ թուոյ ժամանակին քսան և մի ամ, սկիզբն լինի մուրուացն, և անուանին [illegible] [2]":

Ստուգաբանութեանս այսմիկ՝ զոր ունի և Հին Բառարանն, հաւան գտանի և Ինճիճեանն [3]:

29

[illegible] [illegible]: Յերկուց բառից կազմի բարդութբ անունս [illegible], որ նշանակէ [illegible] (փառութիւն, ապականութիւն) [illegible], որպէս դնէ և Ստեփաննոս վ. Ագոնց [4]: Ըստ այսմ նշանակութեան՝ ոչ անձահ ինչ գտանեմք զստուգաբանութիւնդ. զի „Ան-

---

1 'Ի Մեկն. Ա. Յովհ. բ. 13:

2 'Ի Մեկն. Յայտ.:

3 Ազգասէր Բիւզ. 1816 ամի. յէջ 274. և ս'ի Հնախօս. Հատ. Գ. յէջ 24:

4 'Ի Ճարտասու. յէջ 96:

ցաւոր՝ [illegible] և [illegible] բնութիւնք են, ասէ Վարդան, որ [illegible] ասա են[1]“. և [illegible] զերկիրս զայս անուանէ Լամբրոնացին[2]: Իսկ զի արդարև զփոփոխութիւն կամ զապականութիւն (այն է՝ զլուծումն գոյացութեանց յոչ գոլ) նշանակէ բառս [illegible], ցուցանեն որ զկնիդ բանք. „Զմահ կոչեցի ինձ հայր, մայր և քոյր ինձ՝ [illegible]“: — Ո՞ հասարակ ննջեցեն (ամպարիշտք) յերկրի. [illegible] ծածկեաց զնոսա“: — „Մարդ՝ [illegible], և որդի մարդոյ՝ որդն[3]“:

— [illegible] [illegible], կամ բարդութեամբ՝ [illegible], այս է՝ ծով և ցամաք, կամ հող և ջուր: Իսկ արդարև երկուց իրացս կրօղ է բովանդակ երկրագունդս: Իսկ յայս միտ՝ ոչ անպատշաճապէս ստուգաբանի նաև [illegible][4]“:

Կան և այլ ստուգաբանութիւնք այսր անուան ՚ի Վարդանայ: Իսկ թէպէտ (որպէս ակներև տեսանի) բանագրօսեալք իմն են այնոքիկ, բայց տեղեկութիւնն զայնցանէ՝ չատյ ինչ զեան ընտրող հանճարոյ: Ստուգաբանէ նա՝ և [illegible] [illegible], և [illegible] կամ [illegible] կայ. և [illegible] (բայ Հրամայական): Զայսոցիկ ամենայնի (որպէս և զնա-

---

1 ՚Ի Մեկն. Ծննդ. ա. 13:

2 ՚Ի Մեկն. Առակ:

3 Յոբ. ժէ. 14: իա. 26: իե. 6:

4 Տես ՚ի ձարտաս. Սամ. Ագոնց, յէջ 96:

խակարգելոցն սուտագրանութեանց) զիմաստն՝ ըստ իմիք իմիք պատշածութեց առաջի՛ դնէ հնախօս մատենագիրն մեր՝ այսպէս գրելով. „Կամ Եղէո— է (էր)՝ ունելով զջուր առ ընթեր, կամ Ծղէէց— Եղէո— է՝ երկու ծայր ունելով յերկայն՝ զՄրեխս և զՄրեմուստ, և երկու 'ի լայն՝ զՀեսիսի և զՀարա։ Այլև Կղոտեան էր՝ զջուրն կրելով յինքեան զհամատարած. Կղէ և արդ եղերօք 'ի տեղիս տեղիս, քանզի 'ի վերայ հողոյ կայ ջուր..։ Դարձեալ՝ զի յԾղէէղ— և 'ի տատանման կան երկրայինքս 'ի մէջ փորձանաց։ Հրամայէ՝ որքան ատ նմք՝ երկնչել. Ծղէէղ, ասէ, և կաց 'ի կասկածի։ Ըստ առաքելոյ՝ Ոչ կարծիցէ հաստատուն կալ, Ծղէէղէ, զգուշացէ անկանիցի [1]։

Հայկական բառս համանշանակք են, և հրէշմակք եւ մօտաւորք՝ գոնէ ըստ իմիք, նաև բառքս Գէ կամ Կէ՝ յունարէն, Թէէրը՝ լատիներէն, Եղէ՝ եբրայեցերէն և արաբերէն, Եէը և Գաըը՝ սանսկերէն։ Վերջինս՝ Գաըը, բաց յայլոց նշանակութեանց, ունի և զայն նշանակութիւն՝ զոր մեք բացատրեմք բառիւքս Ցամա+ Եղէէը, կամ լոկ բառիւս Ցամա+ *, առեալ զայն իբրև զոյական անուն։ Եւ այսօրէկ ամենայն „վերածին, ասէ Նոր Բառա-

---

[1] 'Ի Մեկն. Ծննդ. ա. 13։

* Ջատագովութիւն բառիս Ցամա+՝ տես յԸնդարձակն գործոյս։

բանն, առ Հայկական բառս ԼՈՅՍ, որպէս և կամիցի ոք ստուգաբանել“ ։

## 30

Լոյս ածէ։ Թէպէտև ստոյգ ամենևին իցէ առնուլ լուսնի զլոյս յարեգականէ, սակայն և յարմարեալ ստուգաբանութիւն՝ ոչ է խոտելի, հիմն ունելով զկարծիս այնոցիկ՝ որք առ անհմտութեն Նախեդարաշխականին՝ եդին, թէ յիւրմէ ունի լուսին զլոյս իւր։ Ուրեմն ոչինչ հարկ համարեալ և մեր 'ի քննին մտանել անհմտիցն կարծեաց, զառ 'ի նոցունց գրեալսն և եթ յառաջ բերցուք, որք են՝

Ա. „Զոր օրինակ անուն լուսնոյն այլ իմն է, նոյնպէս և լոյս նորա այլ իմն [1]“։

Բ. „Լուսինն անօթ է, որպէս անունն յայս առնէ՝ թէ լոյս ածէ [2]“։

Գ. „Լուսին կոչի, իբր թէ լոյս ածէ փարատիչ մթութեան գիշերոյ [3]“։

Դ. „Պատշաճաւոր է ասել՝ թէ որպէս այլ է անուն արեգական և այլ լուսնի, նոյնպէս և լոյս նոցա․․։ Լուսածէն, որպէս ասել՝ լոյս ածէ [4]“։

Ե. „Լուսածէն կոչի, զի լոյս ածէ [5]“։

---

[1] Բարսեղ, 'ի գիրս Վեցօր. ճառ Զ։

[2] Յ. Վանական, 'ի ճառն Տարեմտի։

[3] Վարդան, 'ի Մեկն. Սաղմ. ճժր։

[4] Նոյն, 'ի Մեկն. Ծննդ. ա. 16։

[5] Տաթև. 'ի Քաղ. Մեկն. Սաղմ. ճժր։

—Ի լուսոյ այն: Ըստ առանձին ինչ տեսութեան՝ դիւրոգագոյն մեզ թուեցաւ այսպէս ստուգաբանել. վասն զի Փոքրդ այդ Լուսաւոր՝ մերթ ('ի լրմանն) մի լուսով երեւի, և մերթ ('ի քառորդին)՝ այն, մնացեալ ՚ի լուսոյ: Լ՛ ուրեմն Լի ու Այն յայլ և այլ ժամանակս:

Վարդան, յետ յիշատակելոյ զառ Քինոն պատմեալ զրոյցն՝ յաղագս Արեգականն արու լինելոյ, և Լուսնոյ՝ էգ, կամեցեալ և զպատճառն ցուցանել՝ ասէ „Զի զոր Արեգակն ՚ի տուընջեան մնայ, Լուսին ՚ի գիշերի քրքրէ, և Աստուածք զալականացու մարմնոց զորպիսութի[1]": Այս բանք Քրնախօսին՝ թուի թէ զայլ ինն ստուգաբանութիւն ակնարկիցեն, իբրու կամելով ասել, թէ Լուսին լոյս՝ Աստուծոյ է բուսոց, տնկոց, կենդանեաց, են, որպէս յաջորդաւն յայտ առնի բանիւ. „Ի լնուլն (Լուսնի)՝ լնուն ծովք, և կենդանիք՝ ուղղովք, և ծառք՝ կեղեւով, և ի թերանալն՝ թերանան[2]":

Զայս ամենայն ընկալցի սիրաբանն որպէս և ախորժիցէ՝ առանց տագնա մերոյս լինելոյ աշխատութեան:

31

Լուսնթագ, Տէր: Ըստ Ինճիճեան Հօրն բացատրելոյ, բառս Լուսնթագ՝ կազմեալ է յերկոցունց անուանցս՝

---

[1] ՚Ի Մեկն. Ծննդ. ա. 16:

[2] Անդ:

**Լօռէ, Տէօ**։ Եւ այս, որպէս գրէ նա, „կամ 'ի Հռոմայական եղանակէ բայց՝ **Լօռէ, Տէօ**, և կամ յանուանց. եթէ զի Լրատեսն է ծանուցանող և պատմող զԼուրս և զՏեսակս իւր [1]"։

### 32

**Խօզէ**։ Խուզել զաղբիւս, աղբապտիւ լինել 'ի գլուխ կերոյ, յառաջ է խողքի. ուստի և անուանն 'ի գործոյն է եղեալ, որպէս Վարդան փարկանի, զորոյ զբանն 'ի մէջ բերցուք 'ի սորին 'ի թիւն 36։

### 33

**Ծիր ածեալ**։ Որպէս ստուգաբանեալ է 'ի հմտագունից արանց [2] **Ծիածանդ** անուն, և կարծի պատշաճագէս. զի զայդ անուն կրէ միայն աղեղնաձևն այն **Ծիր**, կամարն գեղեցիկ բազմագունի երևութացեալ յօդս, զոր այլով անուամբ **Աղեղն Աստուծոյ** կամ **Աղեղն Երկնից** կոչեն Ս. Գիրք [3], և որում անմիտք **Աստուածածնական** ասացին **Գօտի** [4], և տարրապաշտիցն ոմանք (որպէս Արծրունեացն գրէ Պատմիչ)՝ **Արամազդայ Գօտի** [5]։

Յօտաւորագոյն ևս ըստ ձայնին մարթ է յար-

---

[1] Եղանակ Բիւզ. 1819 ամի. յէջ 147։
[2] Տես 'ի Հայկազեան Նոր Բառարանի։
[3] Ծննդ. թ. 13։ Եզեկ. ա. 28։
[4] 'ի Տաճկր։
[5] 'ի Պատմ. յէջ 17։

մարել զստուգաբանութիւնս զայս, փոխանակ ածեալ դիրբայի՝ դնելով ածան (իբր ածող), ըստ օրինակի անուանցն ան մանկամբ ածանցելոց. զորոց տես 'ի թիւն 20:

34

Կանթեղ: Ստուգաբանօրէն քննելով, զկարծութիւն բառիդ համարիմք լեալ յանուանէս Կանթ, և 'ի ձայնէս Եղ: Կանթ՝ է անուանեալն ըստ ձևոյն նմանութեան՝ և այլով բառիւ Ունկն (կժոյ, կամ այլոց անօթոց), որ և առ Ռուսս իսկ նոյնանիշ ձայնիւ՝ УШКО ասի (տաճկերէն՝ Գուլփ): Իսկ Եղ՝ յոմանց ածանցական մասնիկ կարծի, և յոմանց՝ բառ նշանական՝ իբրու արմատ բայիս Եղանել: Բայց եթէ այսպէս և եթէ այն, նոյն և մի զօրութիւն է ձայնիդ թէ յածանցմանն և թէ 'ի բարդութեան. զի 'ի յարիլն յանուն իրիք՝ տայ նշանակել զունող նորին առաւելութեամբ ինչ կամ մեծագոյն քանակաւ, որպէս է տեսանել 'ի բառսդ՝ Ընչեղ, ժանեղ, համակեղ, հիւթեղ, ճաճանչեղ, մարմնեղ, մօրուեղ, յօնեղ, պոզեղ, և այլն: Բաց 'ի դէպ է ուրեմն՝ ըստ Հին Քերականին՝ և զԿանթեղդ անուն գոյական՝ ածականաբար առնուլ՝ իբրու Կանթ-եղ, Կանթաւոր, ունակ Կանթից (տաճկ. Գուլփլու). քանզի և այնպիսի ինչ է իրն՝ զոր նովին անուամբ իմանամք: Այսմ ստուգաբանութեան հաւան է և Գաբրիէլ վարդապետ Աւետի-

քեան [1]: Իսկ այն՝ զի և 'ի Լատին բարբառ նոյն անուն լսի (Գոնդէլա), որպէս և 'ի տաճկականն (Գոնդոլ), չէ ինչ փոյթ: Եւս զայսմանէ 'ի Հետակայումն ('ի թիւն 36):

— Այս անդ էր: Նախօրէն ես ստուգաբանել կամք եղեն ոմանց, որպէս ազգ առնէ և նախայիշատակեալ մատենագիրդ [2]: Զստուգաբանութիւնս զայս 'ի մէջ բերեալ է մեր և այլուր՝ ոչ 'ի մերմէ ինչ հաւանութենէ միայն (որպէս կարծել ախորժէ չկարծեցեալ գիտնականն [3]), այլ՝ միայն առ յուշ առնելոյ սիրաբանից, թէ լի՛ է և այլ ոք այլապէս ստուգաբանօղ բառից. քանզի և մեք իսկ ոչ անգիտանամք՝ թէ ձայնից և եթ նմանութիւն թեթև ինչ է և անզօր. և թէ՝ որ ըստ իմաստից է յարմարութիւն յստուգաբանութեանս յայսմիկ՝ չարժէ և զանց մի, ըստ որում՝ որպէս յայտն է՝ յամենայն իսկ ժամու և ժամանակի նոյն անուն է ճրագարանիդ յիշատակելոյ, թէ կայցէ 'ի նմա իւղ, և թէ ոչ:

Տեսաք և զերրորդն ստուգաբանութիւն բառից յիշատակեալ 'ի Հին Քերականէ՝ Սա անդ էր. բայց և այն զլուրն ունի անտեղութիւն. զորմէ խօսեցուք յԸնդարձակն գործոյս:

---

[1] 'Ի Քերակ. յէջ 313:

[2] Անդ:

[3] 'Ի Կռունկ Ամսագրի 1862 ամի. թիւ Զ. յէջ 411. 'ի ծանօթ:

35

**Վայ, Աղաղակ**։ Ի բառից այսի բաղկացեալ համարիմք զանունս **Վաղաղակ**, որով իմանամք զթռչունն **Անձեղ**, **Սագուղակ** ասացեալ 'ի Տաճկաց։ Այժմ կիրթ չթուիցի ստուգաբանութիւնդ, գոնէ և ոչ յոյժ խոտելի է, որպէս կարծեմք. զի և ոչ անխորհուրդ յարմարեցաւ այն, այլ՝ յառակն հայելով Գոշին Մխիթարայ. և առակն այսպիսի ինչ է. „Սովորաբար Անձեղ յանտառս միշտ աղաղակէ, մանաւանդ 'ի տեսանելն զոք 'ի կենդանեաց. և 'ի հարցանել ձայնին՝ ասէ. Ով իմ թշնամիք միշտ արթուն զիս տեսցեն, և մի յորս ինչ մտաբերիցեն[1]“

36

**Վայրու**։ **Վայր**՝ է արմատ բային **Վայրեմ**։ Այս զի 'ի բնմէ յառաջ է **Վառուի** կայրել, այն է՝ ստատել (ցարկհատել) ինդիր, կամ խայտանօք խաղալ ստէպ, հաւանելի է մեզ դէթ ըստ մերում տեսութեան (թէև անհաճոյ և անպատկան իսկ բանքս թուիցին Վոնկախոս Բաննչին) կարծել՝ թէ զանունն 'ի գործոյն առեալ կենդանւոյդ (որպէս առաջնոց հմտագունից է կարծիք[2]), կոչեցեալ ի-

---

[1] Առակ. ծը։

[2] „Կոչեաց նա (Ադամ) անուանս կենդանեաց. և ոչ եթէ վայրապար ինչ կամ դուզնաքար, այլ ըստ բնութեան և ըստ

ցէ զառաջինն Կայէնու *, այն է՝ Կայէնուտ (որ նշանակէ Կայէնող), և ապա տառի միոյ զեղչմամբ, և այլ միոյ փոփոխմամբ, Կայտու։ Իսկ թէ ու՝ և զող մասնկան ունի զօրութիւն, այն յայտ իսկ է և 'ի բառիցս՝ Խաբու, Լու, Բու, Ծառու, Անարգու, Երկրպագու, Գինըմպու, Արիւնարբու, Խաչահանու, Կաշառառու, և այլն։

— Կայ 'ի տեղն, իմա՝ կայ 'ի տեղն, զի 'ի պատճառս յանգին է խոտորումն 'ի սովորական կանոնէ լեզուիս։ Յարմարեալ է այս ըստ Վարդանայն բանի, քանզի ասէ նա «Կատուն 'ի տանն կացոյ (առ զանուն), խոզն՝ 'ի խուզողութենէ¹», ևն։

Թուի մեզ՝ թէ 'ի կրկին ստուգաբանութիւնս, մանաւանդ յառաջնումն, եթէ ոչ շատ, գէթ և ոչ յոյժ սակաւ տեսանին պատշաճութիւնք եթէ ըստ իմաստից և եթէ ըստ ձայնից։ Այլ աղագաւ և անհրաւութիւն (կամ ըստ Բանադատին լեզուի՝ [illegible]) չհամարիմք 'ի մերս կուսէ՝ 'ի

---

հաղորդութեանն և ըստ պիտոյից գործոյ նոցա» (Եզնկ. 'ի Մեկն. Արարած. գլ. Ա)։

— «Կոչեաց Ադամ՝ անուանս (կենդանեաց)՝ յիւրէն, 'ի գործոյն, 'ի ձայնէն» (Վարդ. 'ի Մեկն. Ծննդ. բ. 20)։

* Գիտնական Բանադատն մեր ('ի Կանիկան) չիմանալով՝ թէ ածանցական անուն է բառդ, կամ թերեւս բայ համարելով զայն՝ եդեալ է Կայէնոս. սակայն և Կայէնոսամ բայ՝ չիք 'ի լեզուիս, և չմարթի լինել, բառ որում Կայէ է արմատն, և ոչ թէ Կայէն։

¹ 'Ի Մեկն. Ծննդ. բ. 19։

շարս քա՛ն հայ ձայնից ունել զատուցարանեալ ա-նուանդ։ Թո՛ղ բողոքէ զարձեալ անաչառ Բանա-գատն՝՝ի մէջ բերելով զայլալեզուաց զնոյնանշան—նմանաձայն բառս, զԼատինոյն՝ Գատտուս (կամ ըստ նորս գրելոյն՝ Կատտուս), և զՊարսկին՝ Քէ-թէ: Թո՛ղ բողոքէ, սանձք, ուշափ և կամի, և մեզ չէ ինչ փոյթ. վասն զի այգոքիկ բառք, և այլք ևս զոյնպիսիք, զորս նա չէ յիշատակեալ (այն է՝ Գաղմատականն՝ Քօթ, Արաբականն՝ Գըթթ, Տաճկականն՝ Քէտի, Յունականն՝ Կաթա, Իտա-լականն՝ Կաթթօ, Գաղղիականն՝ Շաթ, Անգլիա-կանն՝ Գաթ, Գերմանականն՝ Քաթցէ, Սլաւացն՝ Կոտ, Ռուսացն՝ КОТЪ), չասն՝ և չկարեն տալ խրատունս մտօք 'ի լեզուացդ յիշատակելոց՝ սեպ-հականելոյ իւրեանն զբառդ, կամ պնդելոյ՝ թէ չէ Հայեցի, ցորչափ ոչ իցէ այն՝ ստուգարանեալ յանձնիւրան՝ զէթ այնքանաւ ճշգութեամբ և ձայնիցն և իմաստից զիպողութեամբ, որքանաւ ստուգաբանեալ է 'ի Հայումս։

37

Կատու Հայ։ Այգպէս ստուգարանիլ 'ի ճա՛հ զատեցայ. քանզի Կատէլ միշտ սովոր է թաչունդ՝ կասուաէր զոլով ընութեամբ. որպէս դտաք 'ի Հարցմունս Մանականին, ուր ասի „Իտլք է Կաքուոյ՝ 'ի լուսանալ աւուրն կատ-էլ յառաջ,

և ապա կուտ քաղել, և դայլոց ձուս գողանալ՝ և ձագ հանել“:

Նման իմն անուն է հաւուս և ՚ի Պարսիկ լեզուի, Չեկեաւ: Այլ զի ՚ի Հայումս արմատ է այլոց ևս բառից, զի ասի՝ Կաքաւանք, Կաքաւոծ, Կաքաւարան, Կաքաւել, Կաքաւելագանել, ևն, յօժարիմք յաւէտ Հայացի՝ քան թէ եկամուտ զբառդ համարել:

38

Կերասեայ: Կերասոս՝ քաղաք պարսպաւէտ էր ՚ի Կապադովկիա. և ՚ի նորին անուն կոչեցեալ է պտուղն՝ որ առ մեզ Կեռաս ասի, և առ Տաճիկս Քիրազ կամ Քիրաս: Այսմ և Ռոլէն վկայէ Պատմիչն Գաղղիացի՝ յասելն „Նախ առաջին Լուկուլլոս ած զպտուղս զայս (զբալն անոյշ) ՚ի Հռոմ, որ ցայն վայր անծանօթ էր Իտալիոյ, որ և ՚ի Կերասոս քաղաքէ Կապադովկացւոց՝ ուստի ածաւն՝ Կերաս անուանեցաւ[1]“: Յայս ակնարկեն և տուլքդ ՚ի մէնջ չափաբերեալք:

39

Կռա կռայ յունկն: Ո՛չ վարկպարազի և ոչ ՚ի մերոց քմաց առաջեալ եմք զբանդ, այլ՝ ՚ի կարծիսն հայելով Յովհաննու Երզնկացւոյ, որ զկռչաձայն (կռկռացող) թռչունդ զայդ (որպէս և զԱգռաւն

[1] ՚ի Հնախօս. հատ. Ե. յէջ 169:

և զՕրծառն)՝ի ձայնէն համարի անուանակոչեալ ըստ առաջնոցն քերթողաց[1], որպէս ագգ ռաւնէ և Խնծիծեանն[2]։ Այն զի և յայլ լեզուս ևս (որպէս Նստաւրանք ցուցանեն) այնպիսակ հնչիւնեալ է անուանց՝ թռչունդ, յորս հնչի մի 'ի ձայնիցս՝ Կռու, Գէռ կամ Գէռու, Գռու-ը, Թռռռ, Ժռռռ. Քանզի լատիններէն ասի Կռուս, յունարէն՝ Գէ-րանոս կամ Գէռանոս, արաբերէն՝ Գուրքի, տաճկերէն՝ Թուռնա, պարսկերէն՝ Ժուռնաւ, յորմէ և ռուսերէն՝ журавль։ Արաբացի լեզուն ունի և զբառս Գըռղըռ, Գոռըռող, որոց առա-ջինն նշանակէ Կայրէ հոռ, և երկրորդն՝ Աֆոռռ։ Իսկ մերն Գր. Մագիստրոս՝ Գռէ կամ Գռոէ ա-նուամբ յիշէ զԿռունկն՝ յասելն „Գխտարաս (որ-սորդ) Գռէէց[3]"։

Զայսօրիկ գրել յաւելցաք առ 'ի զբօսանս և եթ զբօսասէր վերծանողի։

40

Կերունկ։ Իմանալի է՝ Կերող, Լափող, Ծախող (այսինքն՝ վատնող, սպառող)։ Յայս միտ՝ „Կե-րունկն՝ կերունկ է ըստ գործոյն, ասէ Գր. Մագիստրոս, փոխելով զեթն՝ ի չի[4]"։ Զսոյն և Երզնկացին

---

[1] 'Ի Մեկն. Քերակ։

[2] 'Ի Հնախօս. Հատ. Գ. յէջ 22. 'ի ծանօթ։

[3] 'Ի Թղթոցն ԺԵ։ գտեա 'ի Բառարանի։

[4] 'Ի Քերակ։

կրկնէ «Աստացաք յաղագս Կըբրաչէ, թէ չէրան է [1]»: Մարթ է ևս (որպէս Նատարանն դնէ) ստուգաբանել Քրաչ, համարելով իբր փաղաքշական կամ նուազական ածանց 'ի բառէս Քոոր: Կ՝ռացին՝ Կէրաչէ ասելով՝ Կրաչարան իմանալ:

## 41

Քամաքէ-ը: Լամբրոնացւոյն է ստուգաբանութիւնդ՝ հոգևոր խորհրդածութեամբ: «Քազորդին, ասէ նա, Քրիստոսի (ժողովեալքն յեկեղեցւոջ) և միմեանց Քամքո-ըէ-ն. քանզի և նոյն ինքն ստուգաբանութիւն անուանս՝ զաարացոյց խորհրդոյս մեզ յայտնէ: Քամքէ-ը. հաճո՝ մի սուրբ. այսինքն թէ՝ բազումքն այսպէս հաղորդեալ իրերաց՝ միանան [2]»: Իսկ Գաբրիէլ վ. Աւետիքեան հարազատագոյն ևս համարի ստուգաբանել Քամ-քոյը, իբր ունել զմի քո-րո-մն կամ զշունչ, ըստ որում՝ սիրոյ և բարեկամութեան նշան է համբոյրն [3]: Յայսմանէ և զՔամքո-ըէն՝ Քամքո-ըէլ ստուգաբանեցին այլք:

## 42

Քան Գրո-ան: յԻնձիճեան վարդապետէն առաք զբանդ. և նա ոչ առանց պատճառի 'ի դէպ դա-

1 'ի Մեկն. քերակ:
2 'ի Մեկն. Պատարագի, յէջ 498:
3 'ի Քերակ. յէջ 313:

տեսալ է այդպէս ստուգաբանել, այլ՝ հայելով յառա-կայէս 'ի գեղջկէից արարս 'ի վաճառելն զցորեան. զոր և ինքն յայս առնէ՝ գրելով այսպէս. „Յայս անուն (Խանգրուան) կոչի այնպիսի բնակութիւն գիւղականաց աշխատաւորաց, յորում զամբարեն և կայանք անասնոց, և անզէք կահուց և սայլից նո-ցա, և ուր մթերեալ պահի և վաճառի ցորեան նո-ցա: Նոյն զի Գրուանն է չափ ցորենոյ՝ որով հա-նեալ վաճառի ցորեանն, վասն որոյ այս անուն ա-ծանցեալ թուի 'ի բառից՝ Խան, Գրուան. իբր համեալ Գրուանաւ զցորեանն 'ի ժամանակս վաճառ-ման. զի ասացի հանեն զցորեանն 'ի վաճառել[1]":

Իսկ զԳրուանէն ստուգաբանութիւն ցուցէ Ընդարձակն գործոյս:

43

Խող արբանա: Եթէ առաջինն 'ի բառիցդ՝ կը-ցեալ ընդ արմատոյ երկրորդին՝ որ է արբ, կազմի ածական անունս Խղարբ. որով իմանամք զայն ոք 'ի մարդկանէ, որ մեծամտութեամբն փքացեալ, ջան գործէ քան ընդլայնորն արբանայ (այն է՝ քան զմերձակայն կամ զընկերն՝ զեր 'ի վերոյ կամ զե-րազանց) երևել:

Զայս ստուգաբանութի համեմատով իմն առնէ համեմատաշատն Գաբրիէլ վ. քանզի յեւ առեալ

[1] Ազդարար Բիւզ. 1820 ամի, յէջ 211.

բառ Ոսկեբերանին՝ թէ „Ամբարտաւանն ունայն խորհրդովք և ախտիւք այտուցեալ բարձրանայ քան զընկերն", յաւելու և ստուգաբանօրէն զասացեալն բացատրել: „Ոչ սոյն միտ ընծայեցուցանէ, ասէ, և ստուգաբանութիւն բային Ὑπερηφανεῖν, կազմեալ ՚ի բառիցն Ὑπὲρ, Ἄνω, այսինքն՝ քան զհասարակն արտաքոյ կալ և բարձրանալ ուռուցմամբ խորհրդոց [1]":

Բայց զի ասէր առաքեալն Անկնիչ՝ զի և յունական ձայնք Ἀλαζόνες կամ Ὑπερήφανοι (որ նշանակէ՝ Ամբարտաւանս, Վերամբարձս) լծորդ է հայկականիս, բայց չասնէ ինչ փոյթ այնմ, շատ համարելով զհայ բառին ստուգաբանութիւն՝ հայոց առնել սակս պատշաճութեանն:

44

Ὑπάταιος: Իմա՝ Ὑπατεύς, Մեծահասակ: Բաջաղէպ ամենայնիւ թուի ստուգաբանութիւ- ն արդարև այն որ է և ասի Ὕψος կամ Ἄψος, որ Ὑπατεῖον է (այսինքն՝ յաղթ երկայն՝ մեծ՝ բարձր՝ վիթխարի հասակաւ), որպիսի էին՝ բաց յայլոց բազմաց՝ և յիշատակեալքն ՚ի Ս. Գիրս, Նեբրովթ [2], Գողիաթ [3], Գէնմի [4], Սեփաոն, Մագ-

[1] ՚Ի Մեկն. թղթ. Պօղ. հատ. Ա. յէջ 659:
[2] Ծննդ. ժ. 8. 9:
[3] Ա. Թագ. ժէ. 4:
[4] Ա. Մնաց. ի. 5:

տիոն [1], Սէսի, Աքիման, Թողմի [2], եւս և Ենակիմքն անուանեալք և Ռափայիմք [3], և այլք: Այսմ՝ և առաջինքն 'ի մերոց մատենագրաց վկայեն. Եզնիկ ասէ. „Զմարդ յաղթանդամ Հսկայ անուանեն (գիրք) [4]“: Գրէ և Վարդան. „Հսկայք՝ ոչ, որպէս ասեն, թէ երկայնաձիգք էին մինչև յամպս, այլ զի քան զայլ փառաւորս Մեծահասակք էին... Հսկայս անուանէ (Գիրն) զնոսա [5]“: Աւելի ինչ թէ կամիցի ոք զայսմանէ գիտել, ընթերցցի զստուգաբանութիւնն Ա[illegible] բառի յԸնդարձակն գործոյս:

45

Ճէն Ճէղ յՍ–ձկն: Անուանց թռչնոց ձայն է Ճէն Ճէղ, որ յՍ–ձկն զայ մարդոյ, և ըստ Գրոց՝ Ճծաւել, Ճնծաւել կամ Ճաաաղել ասի: Եւ յայդմանէ յարմարեալ թուի Ճնծղաւկդ * անուն՝ ըստ Եզնկացւոյ [6] և այլոց: Այլ մեք զՎարդանացւոյն

[1] Բ. Թագ. իա. 18: իբ. 20:
[2] Դատ. ա. 10: իա. 33:
[3] Բ. Օրին. բ. 10. 11:
[4] Եզնկ. աղանդ. գիրք Ա. յէջ 103:
[5] 'Ի Մեկն. Ծննդ. զ. 4:
* Ըստ այսմ՝ 'ի ձայնէ յարմարեալք են և բառքս Ծէ[illegible] Ջէ[illegible] կամ Ցէ[illegible], որովք նոյնպէս զմանրիկ թռչունս խմանաք. եւս և բառքդ Ջէղջ, Ծէծառն, և այլք, զորոց յԸնդարձակն գործոյս: Զկ–ձկ–ձէ տես 'ի վերդ 'ի թիւ 39:
[6] 'Ի Մեկն. քերակ:

և եթ բերցուք զբանս․ «Ո՛ՍԿԵՂԷՆ, ասէ նա, միշտ 'ի ԾԱՌԱՂԷՆ կայ, յորմէ և զանունն առացաւ[1]»: Եւ դարձեալ՝ «Ո՛ՍԿԵՂԷՆ ստուգաբանի 'ի ձայնէն[2]»:

## 46

ՃՈՐ ՃՈԽ: «Օձեան կոչեցեալ 'ի Ս. Գիրս ՓԷՍՈՆ՝ Նախնիք մեր կոչեն ՃՈՐՈԽ[3], կամ Ո՛ՐՈԽ[4]. իսկ օտարազգի մատենագիրք ՓԱՍԻՍ[5], առեալ թերևս 'ի միոյ յանուանցս՝ ԲԱՍԷՆ, ԳԱՍՏԷ-ՍԷՍ[6]: Եւ 'ի Ո՛ՐՈԽՆ անուանէ՝ Ո՛ՐԱՅՐՈՒԽ ասեն Տաճիկք[7]: Նշխարք մեր ՃՈՐ-ՈՒԽ՝ է ըստ ստուգաբանութեանն արարելոյ Ինճիճեան Հնախօսէն. զի նա զՃՈՐՈԽՆ ստուգաբանէ ՃՈՐ ՈՒՂԻ, կամ ՋՈՒՐ ՈՒՂԻ, ըստ որում այդ անուն՝ յայտ առնէ զուղղօրէն ծորիլ գետոյն՝ սաստկութեամբ, և զյաճախն աճիլ և զեղանիլ նորին[8]:

Արժէ է ստուգաբանել և ՁՈՐ ՈՒԽ, հայելով յասածն Ստրաբոնի. «Սաստիկ և սրընթաց հօսի Փասիս (իմա՝ Ճորոխ) 'ի Կողքիս, հեղեղօք անձ-

---

[1] 'Ի Մեկն. Սաղմ. ձգ. Կ:
[2] 'Ի Մեկն. Ըռակ. իդ. 2:
[3] Լաստիվերտ. 'ի Պատմ. գլ. ժգ:
[4] Ցուհ. Մամիկ. 'ի Պատմ:
[5] Ստրաբոն 'ի ժա. 498:
[6] Ինճիճ. 'ի Հնախօս. Հատ. Գ. յէջ 147, 148:
[7] 'Ի Նոր Հայաստ. յէջ 29:
[8] Ինճիճ. 'ի Հնախօս. Հատ. Ը. յէջ 142. 256:

ըեաց ՚ի բազում ծործորս պատառեալ գանգեան, և ՚ի ձորաձայրս դարձուցեալ [1]“։

Իսկ Գրիչն Աղթամարեցի օրագրի 1847 ամի՝ ասե-լոյ ՚ի Կալկաթա, անհաւան այսոցիկ լեալ՝ „Փի-սոն, ասէ, եթէ իցէ ըստ Եբրայեցւոց՝ բազմութի և յորդութիւն, սակայն ոչ յարմարի ընդ Զօր-ոսկ կամ Ոսկ-ոսկ Քննողին մերոյ. զի երկո-քին ևս զմեղմութիւն նշանակեն. այլ յաւէտ առ-նուլ պարտ է զբուն անուն նորա ՚ի Քայն՝ որ է Ճօրոսկ, այսինքն՝ Քաջ ոսկ. զի բնակիչք եղերաց նորա հնչեն զտառն Օ՝ որպէս Ճ. և փոխանակ ասելոյ՝ Օզօրով արարի, ասեն՝ Ճօրով արարի։ Եւ ըստ այսմ՝ թողեալ զՓիսոն, որ և ըստ հընչ-մանն հայանայ, սակայն Ճօր ոսկ կամ Օզօր ոսկ՝ յայտ առնէ զխոկութիւն նորա [2]“։

Քաւանելի չթուի մեզ վերջինդ ստուգաբանու-թիւն. մի՝ զի կէս հայ և կէս տաճիկ ձայնիւ է. և միւս՝ զի Ճօրոշն ասել՝ փոխանակ Օզօրոշն ասե-լոյ, զանհեթ լեզուին է սովորութիւն, և թերևս ՚ի կարի յետին ժամանակաց սկսեալ, որպէս կարծի։

47

Մշակ։ Այդ անուն էր առն՝ որ ՚ի մերոյն Ա-րամայ Կողմնակալ կարգեցաւ ՚ի Կապադովկիա։

---

[1] ՚Ի ժա. 500։

[2] յէջ 15։

Քաղաքն շինեալ 'ի նմանէ՝ 'ի նորին անուն Մա-ժաք կամ Մաժաք կոչէր զառաջինն, բայց ապա յետ ժամանակաց 'ի փոքրն Միհրդատայ՝ 'ի քեռորդւոյն Տիգրանայ Մեծին՝ նորոգեալ, յանուն Յուլեայ Կեսարու՝ Կեսարիա անուանեցաւ [1]: Այս ամենայն մանր և ճշգրիտ պատմին և'ի Խորենացւոյ [2]:

## 48

'Ի Մահ Էջ: Յայս միտ և Վարդան 'ի մեկնութեան այսր տան Սաղմոսի. „Տէր օգնական է նմա 'ի մահիճս ցաւոց իւրոց. զամենայն անկողինս նորա դարձուցանէ 'ի հիւանդութենէ նորա", ասէ. „Անկողին՝ ըստ մտաց, ըստ հոգւոյ, և ըստ մարմնոյ. թէ մեղանչեմք՝ 'ի Մահ Իջումն է. զի անձն որ մեղիցէ՝ նոյն և մեռցի. Մահճք՝ վասն այնր ասի: Եւ այս են ամենայն անկողինք, որ յողն և յորսայս անկանին [3]":

— Մահու (քայլ) Սէնջ: Սէնջ (որ և Սիրհ, Բուն)՝ յոմանց Բոյչ, և յայլոց Երզբոյր ասացաւ Մահու, 'ի լեզու Բանաստեղծականն. և երկոքին (Բունն և Մահն) Երկնաքարեակք կոչեցան 'ի Հոմերէ [4], ըստ որում առաջինն զերկրորդն բերէ

---

[1] Ստեփ. Ասող. 'ի Պատմ. գլ. Ե. յէջ 44:

[2] 'Ի Պատմ. գիրք Ա. գլ. ժդ: Գիրք Բ. գլ. ժը:

[3] 'Ի Մեկն. Սաղմ. խ. 4:

[4] Իլիակ. Հայերէն. ժգ, յէջ 211. և 'ի ձեռաց. Հայ թարգմանչին, յէջ 615:

գնմանութիւն *։ Յայսմիկ հայր յիմաստս և առցեալք 'ի մէնջ բան։ Եղա ուրեմն, եթէ 'ի նինջելոյ մարդոյն առցի երկրորդ մասն բառիս Մոհէծ, ստուգաբանելի է Մոհ-Նէֆշ, որպէս ստուգաբանեալ է Ինճիճեանն՝ գրելով այսպէս. „Ստուգաբանի Մահիծն՝ Մոհ, Նէֆշ, որովհետև նինջ մարդոյ՝ նմանի մահու՝ իբրով անզգայութեամբ. և յայնմանէ Նինջարանն կամ տեղին ննջման՝ որ է Մոհէծն, լինի իբր տեղի մահու [1]"։

Թէպէտ և գոյզն ինչ է յարմարութիւնն յայսմիկ ստուգաբանութիւնս, բայց և զաւելին պահանջել ոչ է օրէն։

49

Մուգատտէսէ։ Է՛ բառ արաբական, որոյ արմատ է Գուտտս, որ նշանակէ Սրբութիւն։ Յարմատոյ աստի ելեալ են բառքդ՝ Մագտէս, Մուգատտէս, Մագտէսէ, Մուգատտէսէ։

Առաջինն 'ի դոցունց նշանակէ՝ Տէղի գուտս, կամ Տէղի Նուգէտէալ Առաթ-Ծոյ։ Եւ զայս անուն Տաճիկք տան յատկապէս Երուսաղէմի, որ յորջորջի Քաղաք գուտս կոչի յԱստուածաշունչ Գիրս [2]։ Երկրորդն նշանակէ՝ Ինչն Նուէլէալ Ա-

---

* Մահահանգոյն գնիրհումն կարդայ և մերն Հոգերդող Նարեկացի (յԱգօթան, ժբ)։

[1] յԱղանեակ Բիւզ. 1819 ամի, յէջ 148։

[2] Ա. Մակաբ. գ. 51։ Բ. Մակաբ. ա. 12. գ. 1։ Մատթ. դ. 5։ իէ. 53։ Յայտ. ժա. 2։

պոռճոյ, և ասի զԱրօնաւորաց։ Երրորդն և չորրորդն նշանակեն՝ Այր 'ի Սուրբ Քաղաքէ, կամ Երուսաղէմայէ, և ասին հասարակօրէն զարանց՝ որոց տեսեալ իցէ զԵրուսաղէմ։

Այս երկոքին վերջին բառք են (Մագդէսի, Մէ-գդասսէսի), որք և առ մեզ աղճատմամբ՝ Մահտէսի կամ Մղտըսի հնչին 'ի ռամկախօսից բերանոյ. և բառս անախորժելի իմն զոգցես բաղդի՝ Ձայնցի համարեալ բառ յուշմնէ 'ի Մինաս-եան Ոսկանդրէ, սորագրանութեան է հանդիսեալ 'ի Կոռոնին Ամսագրի 1862 ամի[1]. ուր ասի „Երուսաղէմ ուխտագնացութիւն անողին՝ հասարակօրէն Մահտէսի են կոչում է ժողովուրդը, որի աղճատուածը մի քանի գաւառներում Մըղդըսի լսում է։ Մահտեսի խօսքի վերլուծութիւն այսպէս է անում. Մահ տեսի (այսինքն՝ ես իմ մահս տեսայ)։ Ոմանք կարծում են՝ այս մահը (վտանգի իմաստով առած) առաջացած պիտի լինի անհաւատների երկիւղից, հարստահարութենից և հարկապահանջութեան սարսափներից. իսկ ոմք կարծում են (և այդ մանաւանդ նոքա, որոնք մնում են Պաղեստին նաւով) ծովու սոսկալի ալեկոծութիւնից, որն անփորձ ճանապարհին ամէն փոքրիկ վտանգի մէջ է գլորում։ Դարձեալ կրկնում եմ, ասում են, իբր թէ երբ վերադառնալով

[1] Թիւ Զ. յէջ 410. 'Ի ծանօթ.

խուրեանց տեղը, հարցնում էին ուխտագնացէն թէ ինչ տեսար, պատասխան էին բռնում „մահու տեսի“: Այս իմաստանիշ պատասխանը մնաց դէպ Երուսաղէմ ուխտագնացի վերայ, իբր յայտարար անուն: Սխալ չափ միայն հաւատալով այս որոշմանը, մենք 'ի դէպ ենք համարում այս տեղ յիշատակելու, որ մեր բանասիրաց ձգտումը դէպի վերլուծութիւն“ և այլն *:

Ընդհ ունիմք Գրիգորի բանից, զի ոչ բոլորովին, այլ կիսով չափ միայն, հաւատացեալ է նմանապէս աստուածաբանութեանն՝ յերկնէ հրապարակելոյ. սակայն և այս իղձ է մեր՝ զի երիր կամ չորիր մասամբ ես հաւատ ընծայեցի նմա՝ և բացատրու{ին}՝ զոր մեզ արարաք. և եթէ ոչ այնմ, զոնէ կանխագոյն ևս գրեցելումն 'ի Հօրէն Խնձիձեան, որոյ այս են բանք. „Այս անուն (Մահգէղէ կամ Մըղդէսէ) անցանէ 'ի Մաքդէս անուանէս Հրէից, և 'ի գործածութենէ նոցա, որ առ նոսա նշանակէ Տուն Աստուծոյ: Եւ զի ուխտաւորք՝ որք գնան Երուսաղէմ, գնան յուխտ տանն Աստուծոյ, որ է տաճար Սողոմոնի, յայնմանէ այն ուխտաւորք նոցա կոչին Մաքդէսի, իբր վերաբերեալք առ տունն Աստուծոյ: Յայնմանէ մեծաւորութիւն և առ այլ արևելեան ազգս, զուխ-

---

* Զայսմանէ տեսցես գիր 'ի թիւն 12:

տաւրոս որք գնան յԵրուսաղէմ, կոչել՝ այլայլեալ Մահաքէջ, որոյ աղճատեալ անուն է Մղաքէջ“:

„Զրեայք որք այժմ գնան յուխտ տաճարին Սողոմոնի, քանզի ոչ կարեն մտանել 'ի ներքս, գոլով մզկիթ անուանի առ Տաճիկս, կոչեցեալ 'ի նոցունց Սախրէթ-Ալլահ, որ է Տուն Աստուծոյ, 'ի վարձու ունին զշրջակայ տունս Տաճկաց ծանրագնի: Եւ ընդ պատուհանս նոյն տանց հայելով 'ի վերայ տաճարին Սողոմոնի, այնպէս աղօթելով կատարել համարին զուխտ իւրեանց տաճարին, որոյ այժմ տեղին և նեթ է մնացեալ. զի այժմեան շինուած Սախրէթ-Ալլահին՝ է շինուած Սուլթանի ուրուք Եգիպտոսի [1]“:

50

Մանանայ, Ըղ: Յայտնի է պատճառ ստուգաբանութեանս. զի Մանանաղէ՝ որ մի է 'ի գաւառաց Բարձր Հայոց՝ այժմ Թէքման անուանեալ 'ի Տաճկաց, ունէր 'ի հնումն, որպէս և արդ իսկ ունի, աղահանս բազումս, յորոց ելանէ աղ ընտիր և պատուական, նման մանանայի: Այսպէս գրէ և Ինճիճեանն [2]“:

51

Իչ Ըւան: Է՛ րանդ 'ի դիմաց նախահայրեանն մերոյ Ըմաւրայ՝ քերթողօրէն յարմարեալ, առ 'ի յայս

---

[1] Եղանակ Բիւզ. 1818 ամի, յէջ 126, 127:

[2] 'Ի Աշխարհագր. Հին Հայաստ. յէջ 22. և 'ի Նոր Հայաստ. յէջ 83:

առնելոյ՝ եթէ 'ի նմանէ և յանուն նորա կոչեցեալ է լեառնն՝ Մասիս, որպէս Խորենացին և այլք պատմեն [1], և որպէս Ինճիճեանն ստուգաբանօրէն քննելով՝ ընդունի և հաստատէ: Այլ զի սա 'ի խօսելն զանուանէ լերին՝ յաւելու յիւրմէ և զայլ իմն կարծիս 'ի վերայ ծագման Ակոռի անուան, ոչ ինչ անտեղի զատիմք 'ի մէջ բերել 'ի գիտութիւն ընթերցողաց՝ զբան նորա, որ է այս. „Ամասիա նահապետ ետ զանուն իւր մեծի լերին, որ փոքր ինչ այլայլութեամբ կոչեցաւ Մասիս: Այս լեառն գոլով անուանի մանաւանդ առ նախահարս, չէ ինչ ընդդէմ թէ յանուն լերին կոչեցին ապա և զշրջակայ սահմանս, որպէս և իրօք գաւառ ինչ մինչև 'ի յետագայ ժամանակս կոչեցաւ յանուն լերին՝ Մասեաց-ոտն. և այս մասին անուն ձգեցաւ ապա և յայլ սահմանս, սուղ ինչ այլայլութեամբ՝ Ակոռի * կոչելով. որով և բնիկ անունն Ամասիա՝ փոխեցաւ 'ի Ակոռի [2]":

Պիտի և զայս գիտել, զի ոմանք յօտարազգի մատենագրաց՝ անհմուտ գոլով ազգայնում պատմութեան, զծագումն Մասիս անուան՝ եդին յանուանէս Մոսոք, կամ (ըստ գրելոյ նոցա) Մէսէք,

---

[1] Խորեն. 'ի Պատմ. գիրք Ա. գլ. ժբ: Չամչ. Կաթող. 'ի Պատմ. յէջ 12:

* 'Ի վերայ անուանս Ակոռւոյ՝ կան և այլ կարծիք՝ առաւել կամ նուազ հաւանականք. զորոց տես 'ի Թիւն 10:

[2] յԱշխարհագր. Ասիոյ. հատ. Ա. յէջ 5:

որ էր անուն որդւոյն Արամայ՝ որդւոյ Սեմայ [1]։ Արդ զկարծեացն նոցա զանտեղութիւն՝ փաստիւք հաւանականօք ցուցեալ է նախայիշատակեալ Հր-նախօսն մեր [2]։

## 52

ՄԱՅՐ ԱՆԴ։ Այդպէս 'ի յոլովից ստուգաբանեալ է ճշգրտիւ՝ ՄԱՐԱՆԴ (օտար հնչմամբ՝ ՄԷ-ՐԷՆԴ) անուն հնոյ քաղաքի և գաւառի 'ի Հայս, և յոյժ 'ի դէպ· քանզի (որպէս Վարդանն գրէ Աշխարհագիր) անդ առի թաղեալ Նոյեմզարա՝ կին Նոյի [3]։ Նա է ասացեալս՝ աւանդ ազգային, ոչ յիրիկէ և յեռանդէ, այլ 'ի վաղնջուց անտի ժամանակաց· զոր՝ բաց 'ի մերոցն՝ և օտարազգի ճանապարհորդք յիշատակեն, Շարտէն, և Տա-վէրնիէ [4]։ Իսկ տապան շիրմի նախայիշատակելոյ երկրորդի Մօրն աշխարհիս՝ գտանի արդ 'ի մզկիթի ուրեմն [5]։

## 53

ՄԵՂԿ։ Այդպէս ստուգաբանի ՄԵՂՐԻՆ· զի մեղ-կէ և թուլացուցանէ զմարդոյն զհոգեկան զօրու-

---

[1] Ծննդ. Ժ. 22, 23։

[2] 'Ի Հնախօս. հատ. Ա. յէջ 54 — 56։

[3] 'Ի Աշխարհագր. Հին Հայաստ. յէջ 23. 'ի Հնախօս. հատ. Գ. յէջ 16։

[4] Գիրք Ա. գլ. Է։

[5] 'Ի Տեղագր. Հայոց մեծաց, յէջ 57։

թիւնսն։ Զստուգաբանութիւնս զայս Լամբրո-նացին արար. „Մեղտն, ասէ նա, ստուգաբանի Մեղկո–ըն–ն[1]“։ Նմին զուգաձայն՝ և Տաթևացին. „Մեղտն՝ յարմարի մարմնոյն, որ մեղկանայ և թու-լանայ[2]“։

## 54

Մնոյ Մն։ Մծբին՝ թագաւորեալ քաղաք էր Հայոց 'ի Միջագետս, յաւուրցն Վաղարշակայ Պարթևի մինչև ցԱբգար, որ փոխադրեաց անտի զարքունիսն յԵդեսիա, յամի Տեառն 14։ Արդ նորոգեալ զայն Սանատրկոյ յամի Տեառն 55, եւ կանգնեալ 'ի նմա զարձան իւր՝ զկամ 'ի ձեռին՝ առ 'ի նշանակ ստանալոյ ամենայն զանձուցն 'ի շի-նուած քաղաքին, և միոյն և եթ մնալոյ[3]։ Յայս-մանէ կամք եղեն ոմանց զՄծբինդ անուն ստուգա-բանել Մնոյ Մն[4]. զոր և մեք եդաք առ յիշեցու-ցանելոյ և եթ զայն։ Բայց սակայն յանստուգից ամի գնելի է կարծիքս այս. վասն զի Խորենացին, 'ի Մար Աբաս Կատինեայ առեալ, պատմէ, թէ Վաղարշակ արքայ (որ գրեթէ երկերիւր ամօք յառաջ էր քան զՍանատրուկ) զաթոռ իւր եդ 'ի Մծբին[5]. յորմէ և երևի՝ թէ այն քաղաք յառա-

---

1 'Ի ճառն 'ի վերայ Անառակ որդւոյն։
2 'Ի Քաղ. Մեկն. Սաղմ. ձէ։
3 Խորեն. 'ի Պատմ. գիրք Բ. գլ. իէ. լզ։
4 'Ի Բառար. յատուկ անուանց, 'ի բառն Մծբին։
5 Խորեն. 'ի Պատմ. գիրք Ա. գլ. ը։

Ջագոյն քան զվերանորդումն 'ի Սանասարկոյ՝ զնոյն կրէր զանուն[1]:

55

Մուշ: Մշեցւոյ է բառդ, որ առ նոսա նշանակէ Բաշ, Մէգ, Մառախուղ: Եւ մեր յարմարեալ է զտողդ՝ առ յուշ առնելոյ զբանն, որ յաճախ 'ի նոցանէն ասի

„Մըշու դաշտըն Մուշ է.
Իւր հողն ու ջուրն անուշ է"[2]:

Եւ ոչ անդէպ համարիմք՝ դէթ ըստ իմիք 'ի ստուգաբանութիւն Մուշ անուան հայեցուցանել զաստացուածդ. զի և 'ի Զենոբայ գիրսն նոյնպիսի ինչ գտանի ասացեալ 'ի գովութիւն օդոյ՝ դրից և բերոց երկրին. „Բարի է, ասէ, երկիրս և վայրքս, և անուշ օդս, բազմաջուր, դաշտաձև . . . երկիրս խոտաբեր (է) և մեղրաբուղխ[3]" և այլն:

Է՛ և այն մտադրութեան արժանի՝ զի գտանին 'ի Չորրորդ Հայս՝ և յիշին 'ի մերոց մատենագրաց՝ Բաղահովիտ գաւառ, Բալու քաղաք, Բալուայ լեառն, Մանաշեղ գետ[4]: Նմին զուգանէ խօսել՝ չներէ տեղիս:

[1] Չամչ. 'ի Պատմ. Հատ. Ա. յէջ 591:
[2] 'Ի Նոր Հայաստ. յէջ 180:
[3] 'Ի Պատմ. Տարօնոյ:
[4] 'Ի Աշխարհագր. Հին Հայաստ. յէջ 46, 47. 'ի Հնախօս. Հատ. Ա. յէջ 156:

Հաճոյ թուեցաւ ոմանց գծագրումն բառիս Մուշ՝ գրել կամ յանուանէս Մուշեղ, և կամ ՚ի տաճկական ձայնէս Մէշէ կամ Մէշէ, որ նշանակէ Կաղնի։ Վասն յարմարութեան տառաջնոյն՝ ՚ի կարծիս բերեն, իբրու թէ քաղաքն Մուշ շինեալ իցէ ՚ի Մուշեղայ՝ յորդւոյ քաջին Վասակայ Մամիկոնեան, յաւուրս մեծին Թէոդոսի. և վասն երկրորդին յարմարութեան՝ ասեն, թէ գուցէ ՚ի պատճառս բազմութեան Կաղնի ծառոցն՝ ընկալեալ իցէ երկիրն՝ յետոյ ապա և քաղաքն՝ զայն անուն։ Սակայն ըստ հմուտ քննողաց՝ երկոքեին կարծիքդ են անհիմն թուին. քանզի յիշատակութիւն անուանդ գտանի և առ Զենոբայ և առ Յովհաննու Մամիկոնեայ, որք բազմօք ամօք յառաջ էին քան զմեծն Թէոդոս. գտանի նոյնպէս և առ Թովմայի Արծրունւոյ և առ Ասողկայ, որք յառաջ էին քան զտիրապետութիւն Օսմանեանց՝ յորոց տաճկականքն ՚ի մեզ սպրդեցան անուանք *։

56

Յար ՚ի Լեռն զԾիրայէ (մէրան) Լեռն Սիոյ և եթ բառի կրկին եղան սուտագարանութիւնք՝ ըստ կրկին տեսութեանց. Եւ այս՝ յայն սակս յաւէտ, զի և նոյն ինքն սուտագարանելոյ բառն՝ ոչ միօրինակ, այլ

* Զայսմ ամենայնէ տես ՚ի Աշխարհագր. Հին Հայաստանի յէջ 103։

երկակի և երրակի տեսանի գրչութեամբ առ մատենագիրս մեր. քանզի գրի Յարալէզ[1], Արալէզ[2], Առալէզ[3]:

Ամենք յառաջինն և եթ ակնարկեալ, և զերկրորդն ևս (որպէս թուի) առաջնոյն մօտ առեալ*, ստուգաբանեն՝ Յար (այն է՝ Միշտ, Անընդհատաբար) Լիզող[4]: Նա սովին ձայնիւ (ոչ և այլովքն) իմանան զանգղ ինչ կենդանի իբրու զԱյծեղջերուաքաղն[5],

---

[1] Տես ՚ի վայր, ծանօթ. 5. և յէջ գրոյս 196, ծանօթ. 2:

[2] Տես ՚ի վայր, ծանօթ. 5. և յէջ գրոյս 195, ծանօթ. 2. և յէջ 197, ծանօթ. 1:

[3] „Հանեին եդին (զմարմին Մուշեղի) ՚ի տանիսն աշտարակի միոյ. առէին՝ թէ վասն զի այր քաջ էր, Առալէզք իջանեն և յարուցանեն զդա" (Փաւստոս Բուզ. Դպր. Ե. գլ. ԼԶ. յէջ 238): Տես և յէջ գրոյս 195, ծանօթ. 1:

* Բայց այդ՝ շփոթումն առթէ՝ բառնալով զնմանութիւն տարբերութիւնս, և արտաքոյ թուի զգուշաւոր քննութեան. քանզի յառաջադիր վանկքն երկուց վերջնոց՝ Ար և Առ, չմարթեն զՅար մակբային ունել նշանակութիւն. և Արն՝ եթէ ոչ առցի իբրև յատուկ անուն՝ միայն զկնովին աննշան: Իսկ զԱռն՝ եթէ չկամիցիմք առնուլ իբր բաղադրիչ յօդ կամ մասնիկ, որ և յայլ բառս ևս տեսանի (որգոն, Առբերել, Առդընել, Առձայնել, Առլնուլ, Առլի, Առկայծեալ և այլն), լաւ ևս է համարել որպէս տառափոխեալ մասն անուանս Արայ:

[4] ՚Ի Նոր Հայկազ. Բառարանի, ՚ի բառն Յարալէզ: Տես և յէջ գրոյս 196, ծանօթ. 2:

[5] Յիշատակութեանց ամենք անգոյք են, որպէս Այծեղջերուաքաղն և Յարալէզն, և որչափ ինչ մերս վերաստեղծէ մտածութիւն:— Ամենք անուանեալք, և ոչ ներթակացեալք, որպէս Արալէզն և Այծեղջերուաքաղն" (Դ. Անյաղթ, ՚ի գիրս Սահմ. գլ. ա. ե):

ծնեալ՝ ըստ մերոյն Եզնկայ 'ի Հանէ[1]*, կամ զազգ ինչ մտացածին չանձնաւոր հրէշից, որոց՝ ըստ առասպելին՝ բնաւորութիւն էր՝ զքաջացն անկելոց 'ի մարտի Արտաշ անդադար զվէրս, և լիզելովն ողջացուցանել զնոսա և յարուցանել[2]: Իսկ այլք յերկրորդն և եթ հայեցեալ, (թերևս և յերրորդն իբր 'ի կրճատ նորին), և առաջնումն բնաւ ուշ չեդեալ, ախորժեն ստուգաբանել՝ Արայէ Լէզող[3]. և այսմ (Արալէզ) անուան՝ նախ զայնս 'ի գիր կամ յաստուածոց համարին հանդիպել,

---

[1] „Ընտանիք առանց անձանց են Յուշկապարկաց և Խըշացլուց· և Գիրք (սուրք) ըստ սովորութեան մարդկան կարծեաց եկեալ, նոյնպէս անուանեցին՝ առ 'ի զաւերն Բարեկանի նշանակելոյ· իբրև զԾովացուլն՝ զոր 'ի Կովէ ելեալ ասեն, և զՊայն իմն 'ի Մարդկանէ, և զԱռալէզն 'ի Շանէ" (Եզնիկ, Յեղծ աղանդ. գիրք Ա. յէջ 98):

* Պատճառ զայն համարիմք (եթէ չախալեմք) դնելոյ Եզնկայ զԱրալեզացն զանգոյ գոյութիւն՝ 'ի Շանէ, զի լէզել (որպէս և լափել և լափլիզել) յաճախակի և յատկապէս կենդանեաց այսորիկ ընծայի բնաւորութեան, որպէս է տեսանել և 'ի բանս ինչ գրոց, փորձք առ այժմուս զանց առնեմք:

[2] „Միթէ և զԱրալէզն եւս ոք կարիցէ առել՝ թէ և զայն որուք տեսեալ իցէ· և թէ յառաջին ժամանակն Արալէզք լիզէին զվիրաւորս և ողջացուցանէին, արդ ընդէր ոչ լիզեն և ողջացուցանիցեն· ո՞չ նոյն պատերազմունք են, և նոյնպէս վիրաւորք անկանին" (Եզնիկ, 'ի նոյն գիրս, յէջ 100): Տես և յէջ դրոյս 194, ծանօթ. 3:

[3] Տես 'ի Նոր Հայկազ. Բառար. 'ի բառն Յարալէզ:

որք՝ ըստ պատիր համբաւուն ելեալ յՄասեաց
Տիկնոջէն՝ զմերոյն Աշոյէ զմերուն ըղձեալ, զօրեցին
զնա ՚ի մեռելութենէ ՚ի կեանս դարձուցանել [1]:

՚Ի սօսագրաւանութեանց սօսի՝ զնշոյլ և է ընտա-
րելի զսաւսկս զառաջինն, ձայնակից մեզ ունելով՝
բաց ՚ի Նորոցն Քննողաց՝ և զմի ումն յառաջնոց [2].
բայց չմերժեմք և զերկրորդն, քանզի և այն խիկ
յանկարծ է եթէ ըստ ձայնին և եթէ ըստ խմա-
ստիցն, և ոչ նուազ համանմանութեան ունի
ցոյց, մանաւանդ յերկուց գլխոց: Նախ՝ զի ցայն-
ժամ (ցաւուրս Արայի), նա և այսր եւս ցաւուրս
Թոռին նորա Անուշաւանայ, չէ եւս մուտ գտեալ
էր զեցապաշտ կրօնից և սովորութեանց ՚ի մերում
աշխարհի [3]. ապա ուրեմն և ընաւ խիկ անլուր էր
առ Հայս անուն զեցն կամ Ծիւապացն և կամ ա-
ներևոյթ ոգւոցն՝ լեզուաց զմերս ասպնեաց: Եւ
երկրորդ՝ զի Տոհմայինն մեր Պատմութիւն, մանա-

[1] Խորեն. ՚ի Պատմ. գիրք Ա. գլ. ժե:

[2] Ընծայեալ է մեզ Հեղինակս այս և անուամբ և ժամանա-
կաւ. բայց գրուած նորա (որ բովանդակէ յինքեան զքաղուած
ինչ մեկնութեան գրոցն Լինելութեան՝ Հարցմամբ և Պա-
տասխանեաւ) գտանի առ մեզ: Եւ այսպիսի ինչ է բան նորա.
«Զերգչերասպաղն՝ ՚ի քաղէ առեն զոյ և յերգչերաւէ, որ ոչ
գոյ. նոյնպէս ՚ի Յեղ և յՄեղյ՝ զՅաւշիապարիկս և զՀամբա-
րուս: Եւ է, ասեն, կենդանի մի, որ յոր ըէղս զմեռեալսն, և
կենդանանան (մեռեալքն), և կոչի (նա) Յարալէզ. բայց
սուտ ձայնք են որպէս անդայք»:

[3] Ինճիճ. ՚ի Հնախօս. Հատ. Գ. յէջ 149. 150:

ւանդ առ 'ի Մերէսոսէ աւանդելոյն[1], ինքնին զլսովին զԱրալեզացն համբաւ ցուցանէ զիւս լինել հնարիմաց հանճարոյն Շամիրամայ. յորմէ և մարթ է՝ առանց իրիք երկմտութեան մակարերել, թէ յետ Արայի անցիցն և մահուան և ոչ կանխագոյն քան զայն (որպէս կարծիք է ոմանց) յօրեցին հնչեցին հայախօս շրթունք զԱրալէզք անուն, և նոյն աստուածոցն օտարաց՝ զորս մեծապէս զոհիւք պա-

[1] Օրինակ զայս պատմէ Մերէսոս զանցանս և զմահն Արայի, և զԱրալեզացն իրս. „Շամիրամ կինն Ասորւոց արքային Նինոսի, քանզի լուաւ վասն գեղեցկութեան նորա (Արայի), և կամեցաւ առնել ընդ նմա բարեկամութիւն, որպէս զի կատարեսցէ զկամս նորա պոռնկութեամբ, քանզի բաւ լեալ համբաւոյ յոյժ տարածեալ էր 'ի վերայ անձին և գեղոյ նորա գեղեցկութեանն. զի ոչ գտանէր յայնմ ժամանակի նման նորա այր ըստ ամենեքին՝ այր պատկերաձև. յղէ առ նա հրեշտակս պատարագաւք և կոչէ զնա առ ինքն 'ի Նինուէ։ Իսկ Արայն ոչ զպատարագն նորա ընկալաւ, և ոչ յանձն առնու երթալ 'ի Նինուէ առ Շամիրամ։ Ապա առնու զզաւրսն իւր Շամիրամ և գնայ 'ի վերայ նորա 'ի Հայս. Գայ հասանէ 'ի դաշտն Արայի, և տայ պատերազմ ընդ Արայի. հարկանէ զզաւրսն, և սպանանէ զԱրայ 'ի պատերազմին։ Եւ հրամայէ Շամիրամ առնել զդի նորա 'ի վերնատունն Ապարանից իւրոց, և ասէ. Ես ասացից աստուածոց լիզուլ զվէրս նորա, և կենդանասցի։ Իսկ իբրև նեխեցաւ դի նորա 'ի վերնատանն, հրամայեաց զաղտնի ընկենուլ 'ի վիհ և ծածկել։ Եւ զարդարէ զմի զոմն 'ի հոմանեաց իւրոց այր պատշաճող, և համբաւ հանէ զԱրայէ (գուցէ՝ զԱրայէ, կամ՝՝ զԱրայի վէրան) լիզուլ աստուածոցն և յարուցանել։ Ունի 'ի ծածուկ, և ոչ ումեք 'ի ծանօթից նորա ցուցանէ զնա. և այնպէս հանէ համբաւ Արալեզաց տիկինն Շամիրամ“ ('ի Պատմ. յէջ 8)։

տուեալ էր Դշխոյն՝ նոր իմն պատկեր յանուն նոցա կանգնելով [1]: Այլ թէ արդարև անծանօթք մերոցն էին ամենայնիւ այն աստուածք, և Խորրորիտոնին միայնոյ ծանօթք, յայտ անտի է՝ զի այն ինչ հարկ 'ի վերայ կայր հնարել հանդարտել զեւանդն ցասման Հայ զօրականին, որ անդէն պարձեալ 'ի խազմ խլրտէր՝ քինախնդիր լինել մահուն Արայի, զայս նա մեծարանելով ասաց. „Հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվէրս նորա, և կենդանացի [2]“: Չասաց „աստուածոց ձերոց“ (քանզի և գոյին իսկ ոչ՝ նոցա՝ աստուածք), այլ՝ „աստուածոցն իմոց“, կամեցեալ թերևս և զայն յայտ առնել այսու՝ թէ կան իւր այնպիսի աստուածք զօրաւորք, անծանօթք 'ի նոցանէ և յայլոց, որք կարեն զմեռեալս (ուրեմն և զԱրայն) յարուցանել. և առ հաւատարիմ զբանն առնելոյ կամ թուեցուցանելոյ՝ յաւել ապա այսպէս հանել համբաւ. „Լեզեալ աստուածոցն զԱրայ և կենդանացուցեալ, լցին զփափագ մեր և զհեշտութիւն [3]“: Յառաւելագոյն հաստատութիւն ասացելոցս՝ նպաստէ և այն, զի չգոյ ինչ յիշատակ 'ի Պատմութեան, թէ 'ի Հայ որերոյն ոք ցանկացեալ իցէ կամ մտաբերեալ երբէք՝ զոհել կամ նուիրա-

[1] Խորեն. 'ի Պատմ. գիրք Ա. գլ. ժե:

[2] Անդ:

[3] Անդ:

մատոյց լինել կարծեցելոցն աստուածոց հզօրաց, զորս ա՛յնպէս և ա՛յնչափ պատուէր՝ և պատուել հրամայէր՝ շամբուշն այն և փարար Աշխարհակալուհի. „Աւուել յայսմ հետէ պաշտելիք են, ասէ, 'ի մէնջ (աստուածքն իմ) և փառաւորեալք, իբրև հեշտացուցիչք և կամակատարք [1]“:

57

Նոյապատ: Իմանալ պիտի Նոյաշէն, Շինեալ 'ի Նոյէ. քանզի Ապատ՝ 'ի մերում լեզուի (որպէս և յԱրեաց) Շէն նշանակէ. ուստի և Անապատ ասի վայրն՝ ուր չկայցէ ինչ շինութիւն, կամ բնակութիւն մարդկան: Զայս ամենայն՝ օրինակօք ցուցանեն Բառարանք մեր: Իսկ թէ էր աղագաւ 'ի ձահ զատ այսպէս ստուգաբանել զՆպատն անուն լերին, զայդ՝ Մեսրովբ Թաղիադեանց ցուցանէ՝ յասելն „Նպատ, Նոյապատ, լեառն հուպ առ Մասիս և կից ընդ Ծաղկուան, ուստի բղխեն ակունք եդեմաբուխ գետոյ աշխարհիս, առաջին ամարանոց համարիմ Նահապետին մերոյ սրբոյ: Քանզի այր հինգհարիւրամեան նախ քան զհեղեղն եղեալ Նոյն՝ լսէր արդեօք կամ ընթեռնոյր զանեղոյ դրախտին Ադամայ, և հուպ յայն տեղի փափագէր բնակել գէթ զամիս ինչ աուրայն: Արդի սովորութիւն բնակչաց խելամուտ առնէ ինձ զայս

[1] Անդ:

բան. ոյք 'ի տօթոյն Արարատայ խոյս տուեալք՝ անդր հարկանեն զվրան իւրեանց, և յարօտս խաշանց հրաշանան և հարստանան [1]:

58

Շար, Շէր: Առաջինն 'ի բառից՝ որ նշանակէ Կարգ կամ Տող, թուի գոլ բուն Հայեցի, թէև յայլ լեզուս ևս նմանաձայն գտանիցին բառք՝ նովին նշանակութեամբ, որպէս 'ի Տաճիկն՝ Սըրա, 'ի Յոյնն՝ Սէրա, 'ի Լատինն՝ Սէրիէս: Իսկ երկրորդն՝ որ նշանակէ Երգ [2], եկամուտ է առ մեզ յԱթէնացւոցն բարբառոյ, զի առ նոսա (որպէս և առ Արաբացիս) Շիր՝ նշանակէ նոյնպէս Երգ, Տաղ, Նուագ: Հաւանական է կարծեք, թէ նա և Շարական անուն ածանցեալ իցէ 'ի միոյ յերկուց անտի բառից՝ մանաւանդ Կան: Բայց զատն ևս՝ ոմք ըստ այլաբանական տեսութեան՝ Շար Ականց ստուգաբանեցին զայն: Զայս ամենայն մեկին բանիւ ցուցանէ և Գաբրիէլ վարդապետ, յասելն. „Անուն Շարական համարեալ էր երբեմն բարդ լինել 'ի բառիցն շար և ական, այսինքն՝ քար ազնիւ. իբրև թէ շարական նշանակիցէ՝ շար ականց պատուականաց, այլաբանելով զփայլելութիւն եր-

[1] 'Ի Ճանապարհորդ. 'ի Հայաստ. յէջ 178:

[2] „Ի հաւել գիտականցն և յօրինել չէր հանեալ (այբ գեղջն) առէին. Կերան զազանք զմարմինս գիտականցն Վարագայ և գերացան" և այլն (Յովհ. Մամ. 'ի Պատմ. Տարօնոյ, յէջ 42):

գոյն։ Սակայն թող զայն, զի անյայտ է՝ յումմէ՛ ու մեքէ զառաջինն եդաւ անունդ, նաեւ օրէնք բար-դութեանն ոչ հաւանեցուցանեն զայդ բառադրու-թիւն։ Վասն զի աջն՝ երբ նշանակիչ ազնիւ քա-րի՝ սովորաբար նախադաս փարի 'ի բարդութեան· զոր օրինակ, Աջանաւակալ, Աջանաւագործ, ե՛ն· իսկ ըստ այլ նշանակութեան յետադաս եդեալ, յու-ղականն դնի անփոփոխ· զոր օրինակ, Անծաւէն, Չարաւէն, ե՛ն։ Վասն որոյ ընտրելի է՝ համարել ածանցեալ անուն մասնկամբն Կաւն, 'ի բառէն Շաւր· որ կամ իմանի սովորական բառն Շաւրք, Կաւրք, եւ կամ յԵբրայականէն առեալ Շէր կամ Շէրան, որ առ նոսա Տէր նշանակէ[1]։

59

Ոսկեայ Դարէն։ Այսպէս ստուգաբանեալ է զՈսկեդարէնբառն՝ Սիմէոն Ջուղայեցի[2], հայելով 'ի ձայնին եւ եթ նմանութիւն։ Ոմանք՝ Ոսկեայ Ա-րէն ստուգաբանեն՝ նոյնպէս ըստ ձայնին յարմա-րելով։ Գուցէ եւ այլք եւս՝ Ոսկեայ Կռէն ստա-ցին, այսինքն է՝ Կռող (կռանաւ ծեծող) զՈսկի։ Բայց յանկարծոյն եւս թուի Ոսկերող իմանալ՝ ա-ծանցական անուն համարելով Ող մասնկամբ ձե-ւացեալ յարմատոյ Ոսկերել բայի, որ նշանակէ

[1] 'Ի Բացատր. Շարակ. 'ի Ցառաջաբ. յէջ Թ. Ժ։
[2] 'Ի Տրամաբան. յէջ 179։

Ոհ-ոհ պտտել, կամ Ոհերծ տանել, ըստ մեկ-նելոյ Ստեփաննոսի Լեհացւոյ[1]:

## 60

Ործծէ: Դիպողագոյն երևեցի ստուգաբանութիւնդ, եթէ բառն ստուգաբանեալ՝ առցի նշանակութեամբ փիացին մանկան: Ործծէ, ասէ Վարդան, որ ծծէ զստինս մօրն[2]: Նաև և այլ ոմն մատենագիր. «Ործծէ է՝ որ ծծէ 'ի ծնողէն[3]»: Եւ այս ակնարկէ և Նոր Բառարանն ասելն «Ործծէ, որպէս թէ որ ծծէ զկաթն[4]»:

## 61

Պօր (գլուրն ածէ) Թօէ—: Ստուգաբանութիւնդ այդ՝ արարեալ 'ի մերոյն Վարդանայ՝ ըստ ձայնին և եթ ունի յարմարութիւն, այլ ոչ և ըստ բառին ճիշդ նշանակութեան: Քանզի օտարազգի պատմիչք, որք անհամաձայն մերոցն՝ և ոչ միօրինակ՝ աւանդեն զպատմութիւն ծագման ազգին Պարթևաց, զանուանակոչութենէ նոցա ևս այլազգ խօսին՝ այլ ինչ 'ի մէջ բերելով պատճառ: 'Ի պատմութիւնս Եգիպտացւոց (զոր 'ի մէջ բերէ Յովհաննէս Մաղալ՝ Ընախոս եպիսկոպոս Ընախո-

---

1 'Ի Բառարանի:

2 'Ի Մեկն. Ծննդ. գ. 25:

3 Մատթէոս վ. մեկնիչ Գործ. Առաք. ճառ է:

4 'Ի բառն Ործծէ:

քայ) ուանդի, թէ Սեսոստր արքայ Եգիպտացւոց յետ նուաճելոյ զՊարս՝ եւ ժողովել յաշխարհէն Սկիւթացւոց մանկունս վայելուչս դիմօք եւ ծաղկահասակս, թուով հնգետասան բիւր, եւ բնակեցոյց զնոսա յերկրի անդ Պարսից. եւ կոչեցան նոքա Պարթեւք, որ նշանակէ, ասեն, 'ի Պարսից լեզուի եւ 'ի Սկիւթացւոցն՝ Եկք օտարք [1]: Ոչ կարի անհանգէտ սմին՝ ծանօթս տայ եւ Յոէլն Գաղղիացի. „Պարթեւք, ասէ նա, ձգեն զծագումն իւրեանց 'ի Սկիւթիոյ. ուստի արտաքսեալք՝ հարկեցան խնդրել այլուր խաղաղ ինչ կայան: Անուն իսկ նոցա ցոյց է նոցուն ծագման...: Եթէ ճշմարիտ իցէ ասացեալն Տրոգոսի Պոմպէոսի, թէ 'ի բարբառ Սկիւթացւոց նշանակէ զվտարանդիս կամ զաքսորեալս...: Երկիրն զոր նոքա կալան՝ է 'ի հարաւակողմն Վրկանայ, եւ սահմանակից Մարաց 'ի կողմանէ արեւմտից [2]“:

Իսկ առ իմանալոյ նաեւ զպատճառ ստուգաբանութեանց առաջի եդելոյ՝ հարկ է զնորին իսկ ըստուգաբանողին ընթեռնուլ զբան, որ այսպիսի ինչ է. „Վեց որդիս ստացաւ (Աբրահամ) 'ի Կետուրայ (հարճէն)...: Երեց որդին Եմրան՝ սպան զԵկսան եւ զՄադան (եղբարսն). եւ վասն այսորիկ արձակեաց զնա հայր իւր յարեւելս (զատուցեալ)

---

[1] Տես 'ի Պատմ. Հայ. հատ. Ա. յէջ 543:

[2] 'ի Պատմ. Հռով. հատ. Ե. յէջ 475, 476:

յԽոտհակայ որդւոյն իւրմէ․ յորմէ սերեցան ազգն Պարթեւաց, ուստի քաջն Արշակ, որ զհնի վաթսուն ամաց մահուանն Աղեքսանդրի, ապստամբեալ 'ի Մակեդոնացւոցն՝ թագաւորեաց յերկրին Քուշանաց, 'ի Բահլ շահաստանի . . . և եկեալ բնակեցաւ 'ի մէջ Մարաց և Պարսից, Հայոց և Քուշանաց։ Նա զև 'ի զիմաց և 'ի թիկանց, յաջմէ և 'ի ձախմէ ԹՆԷ-ԷԱԼ էին չորք ազգք, Պալհնէ-ւ կոչեցան, Պաքունակեալք 'ի չորից ազգաց [1]»։

62

ՍԱՂԱՓԷ (պէս) ՈՂՆ։ Ձունի պէտս բացատրութեան․ զի որպէս և Բառարանն դնէ, այն որ է և կոչի ՍԱՂԱՓՈՂՆ, այլ ՈՂՆ (քամակն) ուռուցեալ գոլով՝ զնմանութի բերէ ՍԱՂԱՓԷ։ Իսկ զՍԱՂԱՓԷՆ զատուցարանուի ցուցցէ Ընդաձակն գործոյս։

63

ՍԷՂ-ՈՂ։ ՍԷՂՈ-ՀՆ՝ նոյն այն լեառն է՝ որ անուանեալն ՄԱՆԷԱՅ ԱՅՐՔ, սակս անդանօր բնակելոյ երբեմն կուսին Մանեայ, որպէս մերն գրէ Պատմահայր Խորենացի [2]։ Իսկ ՍԷՂՈ-ՀՆ անուն՝ թուի 'ի յունաց տուեալ այնմ՝ յաղագս ՕԷՂԱԺՈՅՔ բարձրութեանն [3], որպէս այլուր ևս ասացեալ է մեր [4]։

---

[1] 'Ի Պատմ․ յէջ 29. ըստ Վենետ. տպ։

[2] 'Ի Պատմ․ գիրք Բ. գլ. ղ՜։

[3] 'Ի Սոփերք. Հին Հայաստ. յէջ 4. 'ի Հատորախօս. աշխարհագր. յէջ 381։

[4] 'Ի Ճռաքաղ. հատ. Ա. յէջ 199։

Չէ՞ մերժելի և գեղեցիկն այն ստուգաբանութիւն՝ զոր քերթողական ճարտարութեամբ յարմարէ Յ. Երզնկացի՝ հանելով 'ի բառէս Սեղհական՝ յասելն „Օ խորհուրդ Սեպուհոյ սեղհական փառաց Հոգ-ւոյն Սրբով մարգարէին ծանուցեալ [1]"...:

## 64

Սող գործի: Սող՝ ածական անուն է, և ար-մատ Սղէլրայի, որ նշանակէ կարճել՝ կարճ առնել: Ընդ արմատոյս կցեալ Ոց մասնիկ՝ կազմի գոյական ածանց անունս Սղոց. որով իմացեալ լինի բազմա-ժանի գործին հիւսանց (անուանեալ 'ի Տաճկաց՝ թէսթէրէ, և 'ի Ռուսաց՝ пила), որով սող գործի (ողէ, կարճանայ) փայտ կամ տախտակ կամ այլ ինչ՝ համեմատ:

—Սողնոց պէս.—Սող 'ի սող: Սողողն՝ նշանակէ Սողայող, և ասի զայնց կենդանեաց՝ որք սող 'ի սող (սողալով) գնան 'ի վերայ երկրի, որպիսի են օձք, և այլն: Եւ զի գործին Սղոց՝ ըստ սողնոցն օրի-նակի շարժելով 'ի կիր ածի 'ի ձեռս փանթուրա-կաց (հիւսանց), պատշաճագունի թուի հանդի-պեալ անուանն: „Սղոցն, ասէ հին Քերականն, բա-ռուգեալ ասի Սողոց, որ սողայ": Այնպէս և մեկ-նիչ նորին՝ Երզնկացի „Սղոցք, ասէ, յաղագս կըրակի՝ թէ կերակ է, և ըլըգալն՝ սողէ, և սը-

---

[1] 'Ի Շարականի:

ղոցն՝ ողոց“: Օ՛այս ստուգաբանութիւն յիշէ և Գաբրիէլ վ. [1]:

65

Սպա՛նախ: Ընուն բանջարիս նմանաձայն հնչի և յայլ լեզուս. զի պարսկերէն է Իսֆանախ կամ Իսֆէնախ. արաբերէն՝ Իսֆանաճ, տաճկերէն՝ Իսպանագ. անգղիարէն և իտալերէն՝ սփինաճէ, ռուսերէն՝ шпинатъ: Այլ մեք բուն Հայերէ համարիմք, ունելով զնորին ստուգաբանութիւն զէթ ըստ ձայնին յարմարութեան՝ ՚ի Մխիթարայ Գօշէ, որ ասէ „Բժիշկ ոմն բնախօսէր՝ ստուգաբանելով զանուն բանջարին կոչելոյ Սպանախ, (որպէս թէ) սպա՛ն նախ. զի սպանանել արժան է նախ, և ապա զնա տալ կերակուր (հիւանդի). զի այնքան վնասակար է [2]“:

66

Սուրբ Կոյս: Այսպէս ստուգաբանէ Նոր Բառարանն զբառն Աշէնայ, իմացեալ այնու զսուսերաւորն, զաւազակն՝ որ կայ սուրբ յազգեր: Բայց ակնարկէ և յայլ ստուգաբանութիւն, ՚ի սուրբ կոյս, այն է՝ անգործ, պատարկապորտ: Ընտրեսցէ ուրեմն Աիրաբանն զոր և կամիցի:

---

[1] ՚Ի Քերակ. յէջ 312:

[2] Յ. Բաակն Ծ:

## 67

'Ի Վայրէ Ագանի: 'Ի Վայր բառէ և յարմարայ բայիս Ագանել՝ կազմեալ են բարդութեամբ ածական անուանքդ Վայրագ, Վերագ. և երկոքին իսկ իբրև նոյնանշանք՝ առին զայնպիսեաց արանց, որք սովոր են հանապազ 'ի Վայրէ ագանել, բացօթեայ լինել յանտառս, 'ի դաշտս, 'ի ձորս, 'ի լերինս, կեանս վարելով զվայրենի գազանաց, որպիսի էին 'ի հնումն որսորդութեն պարապեալքն: Որոյ վասն ասէ զԵսաւայ Ս. Գիրն. „Էր Եսաւ՝ այր հմուտ որսոյ, Վայրագ[1]“: Եւ մերն Վարդան գրէ 'ի Մեկնութեանն. „Եղև Եսաւ այր Վերագ՝ որսորդ, գազանամիտ, անասնաբարոյ, մարդատեաց, որովայնամոլ“:

## 68

Վեհ Տոհմ: Յարմարական է ստուգաբանութիւնդ՝ առեալ 'ի Գրիգորէ Մագիստրոսէ, որ 'ի կարգի այլոցն նախահայեաց Հայկազանց՝ և բդ-Վստամն յիշատակեալ գովութեամբ, ասէ. „Ո՞ր Վահան, սա մեծարու զօրացն՝ Վեհ տան կոչեցաւ[2]“: Գեղեցիկ թուի բանդ. այլ մեք իմաստիցն չեւ եմք լեալ 'ի վերայ հասեալ:

---

[1] Ծննդ. իե. 27։

[2] 'Ի Թղթին առ Սարգիս վարդապետ: Գիտ 'ի Ձեռագր. հատ. Բ. յէջ 11։

69

Փթէ։ Որպէս ստուգաբանել գիտէ Վարդան զբառն Փթայ, յասելն «Բայց զի յարարչութեան անդ կոչեցան (ծառք) փթայ պտղաբեր, թերեւս զի անցաւոր՝ ապականացու եւ փուտ բնութիւք են[1]»։ Իսկ Փութ՝ երբեւ արմատ Փթէլ բայի՝ նշանակէ առ մեզ՝ փթելն, փտելն, փթեալ. ուստի առի եւ Փթայ փուտ[2]։ Նոյն եւ մի ձայն՝ առ Պարսիկս նշանակէ հէն (հասու), կամ փթեալ (ծառ). եւ 'ի լատին լեզուի՝ Փուտրեֆօ՝ է փտանիլն։

70

Քահէ Նա։ Քահէլ (որ եւ Քաուէլ) թէ Հայ-կական համարեսցի բառ, եւ թէ ոչ, նշանակէ առ մեզ՝ Մաքրել ('ի մեղաց), Սրբել ինչ կամ Նուէ-րել Աստուծոյ։ Եւ զի այդ գործ՝ սեպհական է Քահանայականն պաշտաման, ոչ անդէպ ինչ՝ կամ գոնէ ոչ 'ի սպառ մերժելի՝ համարին ոմանք զյառաջբերեալդ ստուգաբանութիւ. որում՝ թուի թէ՝ եւ Լամբրոնացին (թող զայլս 'ի վարդապե-տաց) հաւան գտանի, յասելն «Քահանայ՝ բառ մերում պատշաճեալ լեզուի՝ Մաքրօղ եւ Սրբէղ անուանի»։ Դարձեալ «Քահանայ է՝ որ թարգ-մանի Մաքրօղ կամ Սրբօղ, եւ Սրբէ զժողովուրդն աղօթիւք[3]»։

---

[1] 'Ի Մեկն. Ծննդ. ա. 12։
[2] Յոբ. իա. 18։
[3] 'Ի Մեկն. Պատարագի. յէջ 135։

'Ի մէջ բերելով մեր զայս ստուգաբանութիւն, ոչ եթէ Հայեցի համարել ախորժեմք զբառն ստուգաբանեալ (քանզի գիտեմք իսկ զեկամուտն լինել նորին յԵբրայականէն Քօհէն, որ նոյնպէս զպաշտօնեայն Աստուծոյ նշանակէ՝ զՔուրմն ժողովրդեան), այլ՝ գիտեմք միայն զպատշաճականութիւն ցուցանել ստուգաբանութեանն 'ի Հայուս: Բայց զայս ևս խոստովանիմք, զի ոմանք ևս 'ի մերոցն՝ 'ի ստուգաբանութեան բառիս առաւելովքն խոտորեցան 'ի պայմանաց անտի՝ որ պահանջին. քանզի կամեցան ստուգաբանել՝ Քանոն է Նա, և կամ՝ Քուրայ է Նա. իբր թէ Քահանայն՝ է կամ պարտի լինել որպէս Քանոն՝ ուղղիչ վարուց և բարուց ժողովրդեան, և որպէս Քուրայ՝ մաքրիչ և սրբիչ ժանգոյ մեղաց, որպէս գրեն[1]:

## 71

Քանանոս Քէոս: Է՛ ստուգաբանութիւն՝ ըստ ծերունեացն աւանդից, զոր յիշէ և Յովհաննէս վ. Շահխաթունեանց[2]:

Այս և այլ ստուգաբանութիւն գոյցն ինչ տարբերութբ՝ 'ի Անարօվրայ Թանգէսգեանց, յորում Քանարէոն՝ գրի և Քաճարէն, ըստ որում աւանն կամ գեօղն որ զայդ անուն կրէ՝ կարծի բնակարան

---

1 'Ի քարոզի իմիք անծանօթ հեղինակի:

2 'Ի Ստորագր. գաւառ. Արարատ. հատ. Բ. յէջ 157:

լեալ զառաջինն Քամայ՝ որդւոյ Նոյի։ Նոյն է բան տառադարձողին օրինակ զայս. «Քանաքէա կամ Քամաքէք համարիմ գիւղ կամ զառաջին բնակութիւն Քամայ, զորով Քեղեան՝ գնաց ելից զՄը-տխս մեր նահանգ, զտունն Սեւորդեաց [1]»։

## 72

՚Ի Քամայ։ Ծագմանէ բառին Քիմիայ *, որով այժմ համօրապէս իմացեալ լինի Բնալուծական գիտութիւն, և յատկապէս՝ սուտ արուեստն փոխարկելոյ զհրահալեալս յոսկի, այլ և այլ կարծիք եղեն առ հնագէտ բանասէրս ՚ի վաղնջուց անտի ժամանակաց։ Ոմանք համարեցան զայն ելեալ ՚ի յունական բառէս Քէօ, որ նշանակէ Զուլել. այլք ծնուցին ՚ի բառէս Քէմօս, որ նշանակէ Հիւթ կամ Հեղմն (ծառոց, խոտոց, եւն). և կէսք ևս առասացին յանուն Քամայ այնպէս անուանեալ, կարծելով զնա, եթէ նա ինքն Քամ՝ որդի Նոյի՝ գտիչ կամ ուսուցիչ լեալ իցէ արուեստին, կամ թէ արուեստին գիւտ եղեալ իցէ յԵգիպտոս, որ Երկիր Քամայ կոչէր ՚ի հնումն։ Իսկ Զոսիմոս անունն ոմն, ՚ի չորրորդ դարու (յետ Քրիստոսի), զչորրորդն յաւել կարծիս յիւրմէ. «Յառաջին ժա-

[1] ՚Ի Ճանապարհորդ. ՚ի Հայս, յէջ 138. ՚Ի Թոնօֆ։

* Ըստ այլոց՝ Ալքէմիա. տաճկ. Քիմիա. Ռուս. Химія. Իտալ. Քիմիքա։

մանակս, աւէր նա, կենցաղակից մարդկան լինէին Ոգիք, և զծնութեան գաղտնիս յայտնէին նոցա։ Եւ զի մատեանն՝ յորում 'ի գրի հարկանել սովոր էին մարդիկ զյայտնեալսն ինքեանց, «Թեմա» կոչէր, այնր աղագաւ և արուեստս այս՝ որ զծնութն զօրութիւնս կամ զազդեցութիւնս ցուցանէ, «զԹեմայն ընկալաւ զանունն»։ 'Ի վերջինս յայս ունի ակնարկումն վերագրեալդ աստուածաբանութիւն, զոր գրել յօժարեցաք, ոչ եթէ զկարծիսն Զօսիմոսի հաւանելի ցուցանելոյ վասն, (զի որպէս այն, նոյն և այլքն, անհիմն իսկ են և անտեղի գլխովին [1]), այլ՝ առ 'ի յայտ իմն առնելոյ, թէ յարմարութիւն ինչ ունի բառն զէթ ըստ ձայնին՝ առ այսպիսի աստուածաբանութիւն։

## ՎԵՐՋ.

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

[1] Տես 'ի Բազմավէպն Օրագրի, հատ. Ժ. յէջ 28։

| Երես | 'Ի տող | Վրիպակն | Ուղղեալն |
|---|---|---|---|
| 6. | 24. | թակղածինն | թակղադածինն |
| 23. | 'Ի ծանօթ. 3. | Վիշապ | Վիշապ |
| 24. | 9. | ընդ ես | ընդ իս |
| 26. | 17. | սասանց | տասանց |
| 41. | 4. | կող | կողմանց |
| 79. | 17. | զարգիս | զագգիս |
| 94. | 4. | ածեալ | ածիլ |
| 121. | 18. | Ամլ | Ամլք |
| 152. | 10. | թո խ | թուխ |
| 200. | 12. | կարծեք | կարծիք |
| 204. | 'Ի ծանօթ. 3. | 'ի Հաստարախօս. | 'ի Հաստարակախօս. |

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ
ԱՇԱԿԵՐՏ. ԳՐԱԴԱՐԱՆ.
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ